Universitäts- und Landesbibliothek Bonn

Patmowt'iwn hayoc' i skzbanê ašxarhi minč'ew c'am tea□n 1784

yorineal i hajr Mixajel Wardapete Č'amč'ean

1784

Kapitel 40 - 60

urn:nbn:de:hbz:5:1-9588

Visual Library

Օ սոյն պատերազմ պատմէ և խորենացին · Ը · 81 · և 82 · և անկ լեալ ի սահմանս աղուանից ի դաշտին գարդարացւոց ։ Ի թէ ոք զայսոսիկ երկուս պատմութիւնս համեմատեացէ ընդ միմեանս, այնչափ տարբերութիւն գտանէ, մինչև տարակուսիլ՝ թէ արդեօք նոյն իցեն, և թէ այլևայլ · ժամին և թագաւորքն նոյն · նոյնպէս և օրինակ սպանութեանն Խոսրովանձիցն գեղեհնդին առնելին նման · իսկ տեղին այլևայլ, սոյնպէս և այլ պարագայքն միմեանց անհամաձայն ։ Ի՞նչ թագաւոր ընդդուշութիւն քննեալ զգուշանալոյ զենոբայ, և թագադատեալ զայն ի ձեռագիրս նր և ընդ պէսպէս բանս ճառընտրայ, գտաք քեմ այլայլութիւն ի նմա · և համեմատեալ ի բանիս խորենացւոյն առաւել, զի նոյն պատերազմ ի մասին պատմի ի զենոբայ ի կողմանս տարօնոյ, և ի մասին ի խորենացւոյն ի կողմանս աղուանից · Իբր զի այն պատերազմ, որ եղև յայնժամ ի մէջ հայոց և հիւսիսականաց, թէպէտ և երկարութեամբ իցէ վէճարեալ, բայց զենոբ և խորենացին իբրև մի պատմեն · զառաջինն յարձակումն պատմէ զենոբ կառն ի երկրորդ յարձակմանն · իսկ խորենացին զառաջնով զանց արարեալ՝ զերկրորդն միայն ի մէջ բերէ ։ Օ այս այսպէս տեսեալ մեր՝ կարգեցաք զնոյն պատերազմ ըստ երկոցունց և առանձինս ։

Ի վր գնալոյ սբոյն արիստակեայ ի ժողովն Նիկիոյ ։

(1) Արիստակէս կաղղիստոս պատմիչ յունաց · գիրք · Ը · գլ · 14 · գնէ, թէ սբ գրիգոր լուսաւորիչն գնացեալ էր ինքնին ի ժողովն նիկիոյ ։ Որոյ ընդդէմ գրէ բարոնիոս կարդինալ · * յանդիմանէ ասէ նիկեփորոս ի սակս յայտնի վրիպանացն ,, յասելն՝ թէ նախընթաց արիստակէսի գրիգորիոս գտեալ ,, էր ի ժողովն նիկիոյ ։ Ուր թէպէտ սա ինքն բարոնիոս յայլ միտս գրէ զայս, կարծելով թէ յայնժամ վախճանեալ էր սբն գրիգոր, բայց այսու ամենայնիւ հաստատ՝ թէ սբն արիստակէս գնաց ի ժողով անդր ։ Որդ՝ զայս առանձինն ոչ միայն համարէն պատմագիրք ազգիս մերոյ, այլև փոտ պատրիարգ յունաց ի Թուղթն առ զաքարիա կաթողիկոս · և սիմէոն մետափրաստես առ սուրիոսն · եպպ · 30 · ոմն և զա ինքն վերոյիշեալդ բարոնիոս՝ յամ · 325 · Ոմն զայն, զի և անուն սբն արիստակեայ մինչև ցարդ իսկ կայ ի կարգս սբոց հարց ժողովոյն · այլ ըստ հնոյ սովորութեան ոչ ոք ի նոսա տառապարծութեն ասաւաղեալ · ուր գնի ևս՝ թէ իբրև եպիսկոպոսութեան ։ Յորմէ՞նակս ինչ գրէ · ակրիդէս դիոսպոնտոսեան · և յայլ օրինակ ինչ փաթեղս գրէ · արիստեկիոս դիոսպոնտեայ · ոմն ի

տե-

տեառնէն և ի նոր հաւաքմունս համօրէն ժողովոց · հապոր · Ը · էջէս · 694 · և 699 · յորում առ ուղղութի վերնագրութե այսր անուան՝ գնի ի լուսանցս մատենին, արիստարկէս · փինկ գնելոյ՝ արիստակէս ։ զայսմանէ խօսի և միքայել լեքէն · հապոր · ՌՃ · էջէս · 1373 ։ Այլ յայտնի վրիպակ է այն՝ որ ասի, արիստակէս դիոսպոնատաի · և է շփոթումն առնուանց ի պատկառութէ ձեռագրաց · ըստ որում յայտնի ս եառանի ի հայերէն օրինակս կարգի անուանց ժողովոյն նիկիոյ · ուր որոշ գնի · * արիստակէս Հայոց մեծաց ‖ · և որոշ գնի · * ատրիկէս ,, դիոսպոնատաի, կամ պէկենպողեայ ‖ ։ ըստ որոյ և ի շ · հապորն ժողովոյ · էջէս · 1136 · ուր յիշին կարգք անուանց Հարցն նիկիոյ , գնի * արիստարկէս և ակրիդէս Հայք ‖ ։

Ա՛տանաւր ի վէր գնալոյ և գառնալոյ տքին արիստակեայ պէտ պէս քանք առանց ինչ յայլևայլ գիրս մեր · յայսմա · Մարտի · 2 · և դեկ · 1 · և ի գիրս պօղոսի տարոնացւոյ , ևն · զորս չէ տեղւոյս քննել ։

Ի վէր կանոնաց՝ որ ասին սբոյն գրիգորի և սահակայ ։

Ի (2)

Որպէս աւանդեն պատմիչք Հայոց , ազաթանգեղոս · էջէս · 393 · խորենացին · Ը · 87 · և յովհաննէս կաթողիկոս , և այլք , ըստ որում եղաք և մեք ի պատմութէ , ի բերել տքին արիստակեայ գբսան կանոնս ժողովոյն նիկիոյ ի Հայս , յաւել ի նոսին Հայրն մեր տք գրիգոր լուսաւորիչ առաջ քանս առաւել զգաջութի իւրոյ վիճակին ։ Ա՛յլ թէ զինչ այնք իցեն , որոշակի ոչ աւանդեն , կանոնք իցեն արդեօք՝ թէ բանք ինչ վիպականք կամ խրատականք ։

Ա՛տանեմք ի կանոնագիրս · ՝ի գլ · ը · երեսուն կանոնս · յորոց վերայ եդեալ է այսպէս · * կանոնք տքին գրիգորի առաքելոյ ,, Հայոց ‖ · կամ ըստ այլ նոր օրինակաց · * կանոնք տքին գրիգորի ,, դորին լուսաւորչին ‖ ։ Ա՛տայց ոչ վտահիմք ասել , թէ այս կանոնք իցեն այն քանք , զորոց ասի թէ յաւել տքն ի կանոնս նիկիոյ · մանաւանդ զի աղաւաղեալ են յոյժ և խանգարեալ ի դրագրաց · և ոչ Հայկին այնչափ ի վիճակ ժամանակի տքին գրիգորի ։ Ա՛յլ թէ որպիսի ինչ իցեն այս կանոնք՝ եթէ ըստ գրելոյ ի կանոնագիրսն յառաջ բերցուք , դժուարալուծ լինի ընթերցողաց · այլ եթէ կամիցիմք զտել , համառօտիւ քննին այսպէս ։

ա · Ա՛յհանայ՝ որ բնիմ ժմկաւ ի յայտնի մեղս կացեալ իցէ ,
բ · ամ ապաշխարեսցէ ։ գ · Ա՛յհանայ՝ եթէ ամուսնացեալ ,
դ · ամ ապաշխարեսցէ ։ ե · Ա՛շխատու քահանայն մերժեսցի յեկեղեցւոյ ։ զ · Որ երէց՝ ի տուն հեթանոսաց , և ուր

տէ՛ր ըլ նա զզոհեալ , ճ · ամ ապաշխարեսցէ ։ Ը · Եթէ այրն ըլ կուսի ամուսնասցի , երկու ամ ապաշխարեսցէ ։ Չ · Որ թողցէ զկին իւր , և առնուցու այլ , (չետ արձակելոյն զնա՛) է · ամ ապաշխարեսցէ ։ Ը · Որ ուտէ ինչ չօտար տեղւոյ , այնչափ ինչ տացէ աղքատաց ։ Թ · Որ գաղտ պսակ դնիցէ , պսակադիրն լուծցի ։ Ժ · Եթէ ոք առևանգ արասցէ (յոր առնուցու կին իբր ամուսին առանց օրինաց) , պսակին անվաւեր համարեսցի ։ Ժա · Նաանապետք երեք ամ ապաշխարեսցեն ։ Ժբ · Եպացեալք երեք ամ ապաշխարեսցեն ։ Ժգ · Խոովիչք հինգ ամ ապաշխարեսցեն ։ Ժդ · Կոյս նոմիրեալ եթէ ապականեսցէ զկուսուն իւր , է · ամ ապաշխարեսցէ ։ Ժե · Եթէ մեռցի մանուկ առանց մկրտուէ , է · ամ ապաշխարեսցէ՝ որ ոք անհոգացաւ , եթէ ծնօղք իցեն նը , և եթէ քՀնյ՝ և եթէ հոգաբարձու ։ Ժէ · Որ բանայ զգերեզմանն առ անձուկ , ճ · ամ ապաշխարեսցէ ։ Ժը · Որ կոծի՝ ի վէր մեռելոյ՝ զԵրան խզելով կամ զձակատ հարկանելով՝ ըստ օրինի հեթանոսաց , նզովեալ լիցի ։ Ի · Որ հայի՝ ի խառնակուն այլոյ , նզովեալ լիցի ։ Իա · Որ լուծանէ զկտակ մեռելոյ , նզովեալ լիցի ։ Ի · Պատարագք՝ ի՝ ոք տեղիս մատուցին , կամ ուր իցեն նշխարք մարտիրոսաց ։ Իգ · Նապատականք մի կատարեսցեն զխորհուրդ մկրտուէ , դրոշմի , և պսակի ։ Իդ · Պահանայն եթէ յայտնեսցէ զմեղս խոստովանութեան , լուծցի՝ ի կարգէ՝ և որոշեսցի՝ ի դասէ պաշտօնէից . և մեղք խոստովանողին նման համարեսցին ։ Իե · Որ արձակեսցէ զկին իւր վ՚ը բանի պոռնկութեան , մի առ կալցի ապաշխարանս ։ Իզ · Որ թողու զկին իւր առանց նը՝ հաւանուէ , նզովեալ լիցի ։ Իէ · Նկեղեցականք չարքեղծուէ գտեալք՝ նախ ապաշխարեսցեն , և ապա պաշտեսցեն զխորհուրդն ։ Իը · Կաշառառուք անիծեալ լիցին ։ Իթ · Զեռնածուք (յոր ձեռօք կախարդուիս առնեն) , առ մի ապաշխարեսցեն ։ Լ · Կիւրակէ առուրբք պատուհեսցին ըստ քրիստոնէական օրինաց , և մի՝ ըստ հրեից ։ Լա · Պահանայ՝ որ վայրապար նզովէ , նզովեալ եղիցի ։ Լբ · Նոմիրեալն ոչ եթէ առևանգի , մեկնեսցի՝ ի հաղորդութէ եկեղեցւոյ . մինչև եպիսկոպոսն քննեսցէ և դարման տարցի ։

Այս կանոնք են , որ ընծային ՚ի սրբոյ գրիգորի.բայց ոչ առացաք՝ չի՛ հաւատան , թէ իցեն նը , գոնե ըլ թողցին . այլ գուցէ այլոց ուրուք գրիգորի . և կամ այլազգ ինչ ։ Այս սակայն գտանեմք ՚ի կանոնս սրբոյ սահակայ բանս ինչ , զորոց մարթ է ասել թէ նոքին իցեն՝ զորս յաւել սրբն գրիգոր ՚ի կանոնս նիկիոյ , և ոչ թէ սք . Ջոյն ՚ի վերջ կանոնացս սրբոյն սահակայ գնի , թէ այս կանոնք ընկալեալ եղեն ՚ի սրբոյն գրիգորէ , և թարգմանեցան

ընեցան 'ի յոյն գրոհածոյ 'ի հայ • զի գրի անդ այսպէս • Ա. յա
,, սահմանադրութիւն կարգաց գրեցաւ հրամանաւ երանելոյն
,, սահակայ մեծ հայրապետին հայոստան աշխ՝ ընկալեալ 'ի
,, քաջ նահատակէն 'ի տնէ գրիգորէ , Թարգմանեցաւ միայն
,, 'ի յունէ 'ի հայ • եթէ ոք անհնազանդեալ կանոնիս՝ նորա
,, ձեռք կամեցի զկարգեալ սահմանադրութիւս , մի ընկալցի
,, մասն և վիճակ ժառանգութե քան սոյ • և որոք միաբանեալ
,, կատարեսցե , ընկալցի զօրհնութի 'ի տնէ՝ հաղորդելով պար
,, գևացն և անվախճան հանդստեան և երջանկին գրիգորի
,, և հօր մերոյ խահակայ և նոցին հետևողաց ‖ :

Այսա զան հայեցեալ՝ մնրթ է ասել , Թէ բազումք 'ի կանո
նաց՝ զորս աւանդէ աբեն սէգ , կին յաւուրց անտի աբեյն գրի
գորի • կամ Թէ կին այն բանք , զորս յաւել աբեն գրիգոր 'ի
կանոնս նիկիոյ • և աբեն սահակ և յաւելեալ 'ի նոսին ըստ վիճա
կի իւրոյ ժամանակի և զայլ կանոնս՝ կարգեալ է 'ի միասին •
զորս և եդաք 'ի պատմութե • գլ • ծչ • երես • 511 • Ա. յա յայտնի
և այս երևի 'ի բանից կոստանդեայ կթղիկի • որ 'ի Թուղթն առ
արևելեայ վիճակ 'ի մէջ բերէ յայնց զկանոն մի ուր տասա
նորդաց քհնյից և եպիսկոպոսաց • և ասէ , Թէ զայս գրեաց
աբեն գրիգոր • որպէս է տեառնել 'ի գիրս պատմութե կիրակոսի
գանձակեցւոյ :

Արժան է աստ հարևանցիկ գիտել և զայս , եթէ զի գտանին
և առ ասորիս կանոնք սահակայ կթղիկի • զոր ոմանք կար
ծեցին , Թէ նոքին և այս իցեն մերոյս սահակայ • քայց այ է
այնպէս • զի այն սահակ կթղիկ՝ էր ենկա տիսքոսի և սղա
կայ կողմանցն պարսից՝ հայրապետ ասորւոց արևելեայց՝ ժա
մանակակից աբեյն սահակայ պարթևի • որ և ըստ աւանդելոյ
գրիգորի քաւորչութեան ասորւոց առ աստեմանեայ • հատ • է •
երես • 401 • և այլուր , արար ժողով քառասուն եպիսկոպոսաց 'ի
սղակ քղքի 'ի մետասաներորդ ամի յայգկերտի առաջնոյ՝ և 'ի
վերջին ամի հայրապետութե իւրոյ • յորում առաքեկայ էր և
աբեն մարութա ենկա • և սահմանեաց կանոնս • իբ • կիմ • իղ •
տարբեր 'ի կանոնաց մերոյս սահակայ : Այլ է տեառնել 'ի
գործս ժողովոյ • 1182 • թարգմանեալ 'ի հատն • է • երես • 1182 • 'ի
յատենս :

Ա. Ձէ գործոյ ինչ՝ որ պատճն չլուսաւորչէն յայնհայր գէտս :

Քանի քանք գրին յայնհայր գիրս յեանոց 'ի վէր աբեյ հօրս մերոյ
գրիգորի լուսաւորչին՝ մանաւանդ յետ առանձնանալոյ նորա
յայրն մանեակ : Որոն ոմանք , յորոց առնու և հանիւ վէպ
'ի պատմութե եղիմի • յերես • 51 • և 203 • Թէ լուսաւորիչն մեր

մինչ ձգներ ի սեպուհ լերինն, ցանկայաւ գնալ յիւր յերկիր ի քարշ ի վէր ծնկացն. այլ երևեալ սերովբէին՝ արդել զնա. և նա հետևակ ընթացաւ անդր յերկիրպատուն՝ ըզ գերեզմանին. և յետ եօթն ամ՝ ձգնելոյ անդ՝ ապա եմուտ ի գերեզմանն. և ինքնին վառեցան ամ կանթեղք. և ընդ առաջ ըզգայ զուարճանայր. զոր առեալ ի կիրակամուտ. Զոր յաւելու կիրակոս. * Այսպէս ասէ թէ կախեաց կանթեղ մի ընդ գրիգոր ի ,, վէր գերեզմանին քոյ. և խնդրեաց յայն աղօթիւք առանց ,, զգայի լուսոյ լուցանիլ ի տուրբ պատեքի տանին. որ լինի ,, միանգամ ցայսօր նշան ||: Զ այս գրէ կիրակոս յաւանդութէն ուսումնոց:

Իսկ տաթեւացին ի գիրս հարցմանց. կոփ. Ի. պր. 9. երես. 548. այլազգ գրէ զայս. և դնէ լեալ ըստ նիւրակոսի յառաջ քան զգնալ ընդ յայրն մտանելոյ, ի մէջ բերելով և զաժանումն տեղեաց եէմի. * Ասատանդիանոս և սեղբեստրոս առ ,, բաժանել զնոր աթոռիս տնօրինական՝ ետուն (հայոց) զնոր ,, յակոբն պատրիարգարան, և զգողգոթայն, և զնոր կարա- ,, պետն և զնտարան. և արկեալ վիճակս ի վէր յարուածն՝ ան- ,, կաս հայոց. և տրամեցան ոմանք յազգէ նոյ. ապա հեղն ,, յոմն ընդն գրիգոր ետ նոյ, զի նք չինեացեն ընարձակ. զի ,, դեռ չէր չինեալ: Նա ասհմանեալ զտեղիսն՝ կախեաց կան- ,, թեղս յանուն աղգացս. և նա խնդրեաց յոյժ զիջումն լու- ,, սոյն ի նշան յարուածն քոյ ||:

Այս բանք՝ բաց ի վերջին աւելորդ հատուածոյն՝ գտանին և ի ձեռագիրս լինչ գրեալ հարիւր ամօք յառաջ քան զժամանակս գրիգորի տաթեւացւոյն. քանզի յայտ է թէ այսպիսի զրոյցք այլընդայլոց անհիմն աւանդութիք են, հանեալ ըստ մասին յաղաւաղ օրինակէ թղթոյ դաշանց. յորմէ առեալ է ինչ ինչ և նախայիշեալդ հանուն վարդապետ. որ և յաւելու գրել, թէ տրդատ և գրիգոր ի դառնալ իւրեանց ի հռովմայ՝ գնացին յերուսաղէմ. և թէ յայնմ ժամանակի քաղում վանորայք լինեցան անդ. երկուքն ծախիւք տրդատայ, այն է սեաւրոսի վանքն, և պանդայ վանքն. իսկ այլք իբր եօթանասունն ծախիւք մեծամեծ նախարարացն հայոց. ընդ որս և մեռոսեան եկեղեցիք:

Այլ ժամանակարարուն ևս է այն, զոր գրէ ջահկեցին զազար. գլ. է. երես. 674. թէ ի գագաթան արագած լերին կախեաց լուսաւորիչն կանթեղ առանց ջուանի. և ելից զայն արուեստօք. և վառեցաւ ինքնին. և մինչև ցայսօր ի վառ կայ ասէ այն. և յաւելու, թէ արժանաւորաց միայն երևի այն. ոչ ետես ասէ վիշտ ոմն, և կոչեցաւ անուն նմին ակնատես: Զ այս բան Թուի թէ առեալ է ջահկեցին յանծանօթ տագրութէ

վար-

վարդանայ ուրումն, որ գրէ, Թէ 'ի կողմանս արեգածու է
* գերեզմանն ականատես վիճակին. որ 'ի հայցմանէ և 'ի խնդր-
,, ուածոյ նոր' ամարային երանելի լոյս վառի 'ի վէր խաչն.
,, որ զգալն աւօք տեառնի ։ ։ Այժ այս ըստ յոյնք տեղեաքա-
նուր երևին ասացեալ։

Յայտնապէս պէտք բանից և 'ի խառնիխուռն զուարճալի մնրթ
է առնել համարիլ զայն ինչ, զոր գրէ վարդան քարձրբեր-
ոյն 'ի ներբող լուսաւորչին, Թէ նբն գրիգոր միջոցեաւ ձգներ
'ի յայրն մանեայ, ցանկալով տեսանել զնէմ՝ էջ 'ի լեռնէ ան-
տի, և կամեցաւ դնալ 'ի վերոյ ծնգաց. սակայն երևեալ նմա
երկուց հրշտկաց սերովբէականք՝ դարձուցին զնա յայրն իւր,
յայտնելով նմա զմերձակայ վախճանն։ Այլ տեղին այն՝ ուր
երևեցան նմա սերովբէականքն հրշտկք՝ կոչեցաւ սերոբէք. որ
և մինչև ցաւուրս սորին վարդանայ և անդր ևս այնպէ կոչիւր։
Այսպէս Հնար է ասել, Թէ ո՛չ վ՛ա այդր ևեթ նոճադի երև-
ման, այլ յաւէտ վկայ' զի բազում անգամ երևեին նմա անդ
հրեշտակք սերովբէականքն. որպէս գրէ յովհան երզնկացի.
'ի գիւ. լուս. երես. 294. յաւելն. * Ո զօրս անմարմին սրով-
,, բելից մարմնաւոր սերովբէն 'ի բարձրութենէ երկնից 'ի լոս-
,, բաձորս իջուցանէր, զոր առաքեաց ինձ 'ի պատիճ նմա'
,, գալ տեառնել զանտառելն Ձգնաւէ նր. ևն ։ ։ Այս Թերևս
վասն այսր պատճառի կոչեցեալ էին տեղին այն սերոբէք։
Յայս կարէ հայել և բան շարականին, ուր ասէ. * Այնբիծն
,, վարուք, արդարն հոգւով, բանիւք Ճշմարիտ, և սբն սրբ-
,, ութիւն նոր գրիգորիոս. որում ցանկացան զօրքն սրովբէից բե-
,, րանք հրեղինք յերկնից 'ի յերկիր խոնարհեալ 'ի տես մարմ-
,, նոյ Ճգնողին. որ և պատիճ տեղւոյն անուանեալ կոչի ։ ։
Այլ է՝ Թէ նոյն տեղին պատուհեալ այսպիսի իրօք՝ սերոբէք
կոչի։

Այլ և վ՛ա այլոց տեղեաց ինչ՝ եղելոց յայնոսիկ կողմանս՝ ասի
յոմանց, Թէ ընկալեալ էին պատուն 'ի գործոց լուսաւոր-
չին. բան որոյ գրէ նա ինքն յովհան երզնկացին. գիւ. լուս.
երես. 296. խօսելով ընդ լերինն սեպուհոյ այսպէ. * Այն քէն քըշ-
,, խեալ աղբիւր ջրոյն, և տարածեալ աղօթիք նբ լուսա-
,, ւորչին շուրջանակի, և մերձ առ նմին հանդուցեալ 'ի քաղ
,, մավաստակ Ճգնութենէն. յորմէ զօրացեալ ջրոյն բնութի'
,, շնորհեաց տեառն կուրին. և այժմ լուսոյ անուանքն վե-
,, րաձանին (աղբիւրն այն) ... (և դարձեալ). Այն ձեռն տուբ
,, լուսաւորչին խաչակնիք նշանաւն գրոշմեալ միւս աղբերն՝
,, յաղտաղտուկ բնութենն բարեհամ և ախորժելի փոխարկիւր.
,, որ և նոյն անուանքն այժմ ձայնի (բարեհամ) ։ ։ Ո այս
աղբիւրք յիշի և յովհաննէս կաթուղիկոս, և կոչէ բարեհա-

միկ • յորմէ ասէ և ես առն ջուր ածով և արբի • Ա. ման-
դի դրձէ՝ Թէ ոչն գրիդոր զսուրն որդւոյ օծեալ իցէ խա-
չանման , և կանգնեալ ՚ի սեպուհ լերինն • ըստ որոյ գրէ և Ե-
ղինակն Յագրութե վարդան յաւելուածով լինն այսպէս • * Ա. Ծա-
„ քնակ լեառն սեպուհ ասէ , ուր հանդեաւ սուրբ լուսաւո-
„ րիչն • անդ կայ հաւ հալանի Թուրն տրդատայ , զոր ետ
„ նմա կոստանդիանոս Թագաւորն • և յորժամ խնդիր արար
„ տրդատ Թէրն լուսաւորչին , դնացեալ եդիտ զնա ՚ի լեառն
„ սեպուհ • և նա առաց նմա զջնջուկն ազգին արշակունեաց •
„ և առեալ զԹուրն՝ օծեաց ոչ զնաւ • և եղ անդ բանիւն նոյ •
„ և ասաց , Թէ յԵլանեէն արիականն ազգին՝ երեւի նշանաս այս •
„ զոր առեալ շրջեցուցանեն ընդ ինքեանս ‖ • Ա. ապա յա-
ւելու գրել , Թէ * յետոյ պլուզ վէրպն յովհաննէս շրջեցաւ ՚ի
„ տեղիսն , և եկ ՚ի գլուխս լերինն • զոր այժմ գոհանամք ա-
„ սեն սեպուհոյ ծայրին • և ետես աչօք զնշանն զայն , և
„ համբուրեաց ‖ •

Յիշէ զայս և նա ինքն յովհաննէս պլուզ , այն է երջնկացին • գով • լոս • երես • 295 • յաւելն վ՚ս լուսաւորչին • * Ականդնեաց
„ զփրկական նշան խաչին ՚ի նշանաւոր տեղիս , և ամրակուռ
„ զինուք պարսիկեաց զՁորոց և զքարանցն բաղմութիւն • որ
„ և զկենն արքայական . . . յօրինեալ ՚ի կենաց գործիս • և
„ կայ այժմ ՚ի պահեստի ՚ի քեզ ով ամենագով սեպուհ՝ սրբ-
„ բուքեր տեղի ‖ • Զայս հայն Թերևս և քան շարունականին՝
ուր ասէ • * Ստրհուրդ խաչելոյն զերահրաշ տեղւոյն գողգո-
„ Թայ ծածկապէս ՚ի սմին լերինն տեսանել • զկենն արքայա-
„ կան՝ սպանմանն գործի՝ կենաց արքային՝ ՚ի կենաց գործիս
„ նուիրեալ ‖ • Իբր Թէ ասել • զկենն արքայական՝ յն սուրն
տրդատայ , որ էր գործի սպանման , եղև գործի կենաց՝ յն
է խաչ • և նուիրեցաւ արքային կենաց Քրս •

Վասնել է և , զի յայտնաւորն • գեկ • 19 • ՚ի մահուանն
լուսաւորչին՝ (յորում ոչոք ՚ի մարդկանէ գտաւ ներկայ ,)
գնին հարցմունք լինել արարեալ ՚ի նմանէ ցհրեշտակն , և
պինդք՝ վ՚ս հօգւոց յԵլ ՚ի մարմնոց • բայց այն բանք անվայել
են հասարակ մարդոյ , Թող Թէ երկնային հրեշտակի՝ և հօգ-
ւով սքով լցեալ լուսաւորչին մերոյ •

Այլ Թէ քանի՛ ամս կացեալ իցէ սքն գրիդոր ՚ի Թերին անդ
՚ի մանեայ այրն մինչև ցմահ իւր , ոչ է յայտ որոշակի • բայց
երևի Թէ ոչ եկաց աւելի քան զեօԹն ամ , կիճ առ առաւելն՝
քան զտասն ամ • մինչև գնաց անդ և սքն տրդատ • ըստ որոյ
դնի ՚ի կարգս առաքելորդաց գլուխայ վանից , Թէ սքն գրիդոր
՚ի վերջին առանձնութե * գնացեալ ՚ի մանեայ այրն , և կա-
„ ցեալ անդ ամս եօԹն՝ վախճանի ‖ • Իակ զոր ասէ երջնկա-

կա-

կայիմն ի գով • լուս • երես • 287 • Թէ սեպուհ լեառն * առեղն
,, եղև երեանաւեայ ձգնուեն սրբին ։ • այդու կամի Թուխել միայն
զամն ձգնութեն նր ի հաստարակի , ըստ որում ոչ զրիգոր նաև
ի ժամի հայրապետութեն իւրոյ ջեղմ անգամ գնացեալ անդր՝
ձգնել ։

ի վեր գիտի եւ փոխադրութենէ աղխատաց սրբոյն գրիգորի լուսաւորչին ։

Ապրի յայսմաւուրս • նոյեմբ • 18 • Թէ * եկաց ինաց մար-
,, մին (սրբոյն գրիգորի անյայտ) մինչև ի ժամս զենման կայ-
,, սերն յունաց յանիշխանութեա հայոց • և յաւուրսն յայնոսիկ
,, յայտնեցաւ ձգնաւորի միոջ ի տեսլեանն , որոյ անուն էր
,, գառնիկ ։ Եւ յետ պատմելոյ՝ Թէ ունի տարաւ զայն ի Թոր-
դան , ասէ ցնկեր • * ։ ոճաւ արքայն յունաց զենոն • և յղեաց
,, տարաւ զմարմին սրբոյն գրիգորի ի կոստանդինուպոլիս • և
,, եդ անդ մեծաւ պատուով ընդ այլ թագաւորաց՝ որ
,, անդ հանգեալ կան • բայց զաջն Թողեալ մեզ ի պահպա-
,, նութիւն և ի պարծանս աղգիս հայոց ։ Եւ ի եփեսոս • 30 • ե-
րես • 124 • դնի , Թէ * լուծեալ կայսրն զենոն , և յղեալ տա-
,, րաւ զքաղցր մարմին լուսաւորչին ի կոստանդինուպոլիս ,
,, Թողեալ հայոց զաջն ի պարծանս մեզ • և դի ինքն գնոյն
,, կամեցաւ ։ Նոյնպէս դնէ և մեսրոպ երէց աւետեաց ինն ի
սկզբան գրոցն • զոր չէ հարկ յառաջ բերել առ ։ Ոսկ առա-
ջինկ • է • 2 • դնի զգիւտ նշխարաց սրբոյն յաւուրս վահանայ մա-
միկոնէի , որ հայր էր ի ժամանակ զենոնի կայսեր ։

Պայ ի ձառընտիրս ինչ , որոյ բանք եդեալ են և յայտմա-
ւուրս • նոյեմբ • 18 • երես • 250 • գտանի գրուածք ինչ արարել
յումեմնէ հետաքննին և իմաստուն վարդապետէ • յորում
առաջի դնին այլևայլ աւանդութիք ի վէր այսր • և գրի անդ
այսպէս • Արդ եգիտ գառնիկ զմարմին լուսաւորչին , և տա-
րեալ Թաղեաց ի Թորթան , * Եհատ բանն յԱմասիա գաւառն
,, կայսերական կայանին զենոնի • առա բորբոքեալ սիրով և
,, մեծաւյուսով զենոն կայսրն հոռովմայեցւոց , զօր քաղցր
,, առաքեր փութանակի մեծաւ պատուհասիրութիք առ ինքն
,, հատուցանել ։ Որք եկեալ մեծաւ հոգաբարձուն ըստ հրա-
,, մանի կայսեր զնորն կատարել • և յոչ տալ Թոյլ քնակ-
,, ջայ գաւառին և աղգին հայոց , վերոյին բարիս ասե-
,, լով ոչ ներելիք այլոց լինել ձախողիլ , ամբոխք և խռո-
,, վութիք յուզելին ։ Այլոյ յոմանց այսպէս ասի , Թէ գրիգո-
,, րիոսի (արշարունեաց) եպիսկոպոսի , կիր զաղջանիկ կա-
,, Թուղիկոսին գրիգորիսի՝ տարեալ զնշխարս ։ Եւ այլք՝ Թէ
,, գմերոյն լուսաւորչի ։

,, Ասա ։

,, Եւ նա ասէ բան , թէ զօրէն քանանացւոյն՝ որք էս տա-
,, պանակին խորհուրդ արարեալ՝ երկնաւոր Հնդկին , զնոյն
,, խորհուրդ ի մէջ առեալ՝ յանառանձս եղեն թաշտհատ ջր-
,, ոջ . զի թէ զուղղակին երթիցէ պողոտայ , նոյն բարւոյ է-
,, զեցի . իսկ թէ զարտուղի խառնիւնացն , ոճն կամք լեցի՝ ուր
,, և հաձեսցի ։ Եւ ըստ այսմ խորհրդոյ արարեալ՝ երթեալ
,, դադարեաց ասի ի բարձրաբերձ վայրի ի բլրակի միջ .
,, որ և այժմ Յորհանգիստ կոչի անուն տեղւոյն ։ Եւ ոմն
,, ի պատմութենն զենոբայ՝ էր նշխարացն սրբ կարապետին
,, յայտնեալ ի ոճնէ , զի կացցէ ի վանս մատրայ՝ յամ կոչ-
,, մանց նայեցեալ ի պահպանութենէ գաւառին . այսոքն և սքան
,, զրիգորի ի Յորհանգիստն կոչեցեալ տեղւոջ , ի տես աւձին՝
,, որք հաւատով նայիցին , ընկալցին խնամարկութենէ ։ Եւ
,, թէ ի սակս այսմ պատճառի , և թէ որպէս ասի յոմանց՝
,, բան մարգարէութենէ սքան լուսաւորչին մերոյ կատարեցաւ .
,, զի ի տեղւոջ յայնմիկ քնակեալ էին որք ոմանք ձգնա-
,, ւորք , որոց անուանքն յոհան և սիմէոն պատմի . և ի
,, կենդանութենէն իւրմէ եկն առ նոսա սքն գրիգոր՝ ըստ
,, արդարհատանաց սարասի ։ Եւ յորժամ դարձեալ եղև ի
,, նոցանէ , նոքա ըստ ըղձից յեղանակի ձայն բարձեալ ա-
,, սեն . գրիգորիոս , լսցէ եթէ եկեսցես ևս առ մեզ ։ Ոմն
,, նորա պինեալ զայս ինչ . եթէ ոգւովս ոչ եկից , մարմինս
,, եկեսցէ առ ձեզ ։ Ոմն այսպիսի՝ և թէ այլ պատճառք ,
,, ծածուկն ինչ է յայտնի ։ Եւ վկայ բանիս , զի կայսերա-
,, կան հրամանաւ շինեցաւ ի տեղւոջ բարձրաբերձ և զար-
,, մանալի եկեղեցի առ ի պատիւ սքն հօրն մերոյ և լուսա-
,, ւորչին ոգւոց , հաւատով յուսով և սիրով . քանզի ի փառս
,, ինձ կատարին ասէ ։
,, Այլ թէ յորով և թէ ակն մնան ինչ ի նշխարաց սքն լու-
,, սաւորչին մերոյ տարեալ եղև առ կայսրն զենոն ի բիւզան-
,, դիա , որ է տանն երորդ ի մեծին կոստանդիանոսէ ։ Եւ
,, իրագործութենէն եղև յետ . ծէ . ամի , կիսմ սուղ լինչ ասելն
,, ի ննջմանէ սքն գրիգորի ի փառս ինձ , յիշատութենէ հայ-
,, ոց մանկունսն , և ի հայրապետութենէ ինն թագաւորին , և
,, յետ նոր սամուէլի վերադիտողի , յառաջ քան զդրուն թը-
,, ւականին հայոց . կ . ամաւ՝ սուղ լինչ կիսմ ասելն ըստ զա-
,, նազանութենէ գրոցդ ։ Ոմն վերադարձուածն նշխարաց սքն
,, գրիգորի հայոց լուսաւորչի եղև յետ երկերիւր և հօթա-
,, նասուն ամի յորով կիսմ սուղ լինչ , ի ծիկն՝ ոնդ ասի՝ վերջնոյ
,, աշոտոյ կիսմ մեռանելոյ . կիսմ որք յորով ամօք յառաջ քան զնա
,, էին կոչեցեալք աշոտք և սմբատք ևս . զի զձշմարիտն ոչ
,, ոնդիմ ասել ։

Արև և վարդան պատմիչ զայսպիսին լինէ • * Ասեալ առնէ Տուէ
,, ուշաց (զմարմին սրբոյ լուսաւորչին) Թադեոսին՝ ոչ գիտելով
,, գնալն • զոր յետոյ խնայեալ՝ մեծարեցաւ տեղին։ Ի՛սկն՝ Թէ
,, յորժամ Թագաւորն զենան ինդրեր զնշխարն, ի տեսլեան
,, յայտնեցաւ Ձգնաւորի ումեմն, զի տարցի զնա գաղտ և
,, ծածկեսցէ ի ներքոյ հիման եկեղեցւոյն Թորդանոյ, զոր
,, ինքն շինեալ էր • և կայ անդ անյայտ • և զոր ետուն կայ-
,, սերն՝ ասեն, արշարաւնեաց եղիկ էր գրիգորիս անուն • և
,, յանուն նր մեծարեցաւ • ուր և գտանէ մնան լինէ • զի և
,, նա այր առաքինի էր և բարի ։

Փոքր մի սին նման գրեն և այլ յետին պատմիչք հայոց՝ ըստ այլևայլ առանդութեց • և ուրեք ուրեք ևս գրի, Թէ յետ տանելոյ զենանի զնշխարս լուսաւորչին ի կոստանդինուպոլիս, գրիգոր պատրիկ (եղբօրորդի վահանայ մամիկոնոյ, և կամ միւս գրիգոր՝ որ յաւուրս ներսիսի շինողն, զոր ոմանք գրիգոր մոգիստրոս կոչեն) ետ քերել ի հայս • Ո այս գրե և վարդան յառելն • * Ո այլն գրիգորի նշխարս ասէն քերել
,, ի հայս գրիգորոյ մամիկոնոյ, ի գնալ նր գեղապան ի կոս-
,, տանդինուպոլիս՝ տուեալ ցնա կին ումն յաւագաց, որ ուներ
,, աս իւր • և նր գաղտ հանեալ ի ծով, և անցեալ գայ քե-
,, րէ անգիտելի քաղաքին զգանձն անանց մեծուէ ։

Լսակ ի ճառս լինչ գովեստից լուսաւորչին գրի այսպէս • * Լ՝-
,, գիտ (զմարմին սրբ լուսաւորչին) Ձգնաւորն սքէ գառնիկ,
,, և տարաւ ի Թորդան • և անտի տարաւ զենան կայսր ի
,, կոստանդինուպոլիս • և յետոյ քերաւ Ընորհքն Քրս ի հայս
,, ի ձեռն գրիգորի պատրկի • որոյ կէսն եդաւ ի ներքոյ ջր-
,, բիլ սեանսն սքէ գրիգորի առաքարչին • և այլն յեկեղեցիս
,, և ի բազմ տեղիս գանձեցաւ • և սքէն լուսընկալ և Ընորհա-
,, բաշխն՝ հանդերձ այլ նշխարօք, և նորին պատարագամա-
,, տոյց սեղանովքն, և գաւազանն կոյ յաԹոռ սրբուէ իւրոյ
,, յԱծաւհատառան գղեակ Հոռոմկլային կոչեցեալ ։

Լ՝ւանդի գրել և ի ճառընտիրս, Թէ ի ձեռս միքայէլի կայ-
սեր և ի պատրիարգութէ փոտեայ յորում ձեռի սկսաւ իշխա-
նութէն բագրատունեաց, յայտնեցան նշխարք սքէն գրիգորի
ի կոստանդինուպոլիս • ըստ նմին և նշխարք սքէն Հռիփսիմեայ և
գայիանեայ • Վանդղ պատմի անդ, Թէ ի յաջորդել վասլի կայ
սեր յետ միքայէլի՝ առաքեալ իշխան մի յունաց ի հայս նախ-
դեմս անուն, ի Թուխին Հայոց • յիե • յանդիման եղև աշտոյ
իշխանաց իշխանի ի գաւառին արշարունեաց ի զաբևհանի
դեղջ • և յետ խօսելոյ ընդ նմ՝ պատմեաց և այսպիսի լինչ • Լ՝ր
իմ ասէ պատանեակ մի ընդածին ի նահանգէն ըսկաւեայ ի
Ճմկա նախընթաց կայսեր միքայէլի որդւոյ Թէոփիլեայ • սա

ունէր այս պիղծ. որոյ վասն միշտ ի սէս չըլլեցուցանէի ըզ-
նա, զի գոցէ զբժշկութիւն։ Յաւուր միում տարայ զնա յե-
կեղեցի մի, որ շինեալ էր յանուն ամենասէր երրորդութեան ի
կոստանդինուպոլիս. էր յեկեղեցւոջ անդ շինուած ինչ փոք-
րիկ մարմարիոնեայ՝ առ որմն սէգ տաճարին՝ պատեալ ար-
ծաթով. զորմէ կարծէին լինել առեղն նշխարաց սէգ։ Նա ա-
հա անդէն առ նմին սկսաւ պատանին աղաղակել ի լուր բազ-
մութեանն ժողովրդոց. ամէն մեծաձայն գրիգորիոս եկեալ ի հայոց ձէն
դասել զիս՝ հանելով ի բնակութենէս յայսմանէ. և դու հալիս-
սիմէ եկիր ի հայոց ներքել զիս. և դու ևս գայիանէ, և որ
ընդ ձեզ սէգ են՝ հանդերձ սարգսիւ և բագոսիւ եկեալ կըշ-
տամբէք զիս։ Նա անդէն փրփրեալ պատանւոյն՝ անկաւ ի
վայր. և ապա եկեալ ի միտս՝ ասաց. սէգ վկայքս բժշկեցին
զիս։ Ապա հրամանաւ կայսեր բացեալ զառեղն՝ գտին ջուրս
արկեղս. մինն էր մեծագոյն մարմարիոն, և երեքն արծա-
թեղէնն. և մատեան մի ևս ի մարմարեղէնն արկեղն, յորում
գրեալ էր. * Այդ նշխարք սէգն գրիգորի և լուսաւորչին հայ-
,, ոց մեծաց ||. և էր բարձք նէր իբրև զհսկայի։ Երկդումն
կայսին նշխարք սէգն հալիսիմեայ, ձեռն իւր հատեալ ի յօդ-
ուճածոյն. և այնքան ունէր զմորթ ձեռինն հանդերձ եղջե-
գամբն և մատովն, ոչ առժամայն հատելոյ ի քաղցն անգա-
մոց։ Երիդումն գայիանեայ, և ի չորդումն սարգսի և բա-
գոսի հանդերձ արբուվք ոսմամբք։ Նկն անդ թագուհին թէո-
դորա և կայսրն և փոտ պատրիարգն. և պատուհեալ կարգե-
ցին տօնս. և այս եղև ասէ ի հինգերորդ շաբաթու մեծ պա-
հոց ի շաբաթ աւուրն։ Նա յաւելեալ լինի ի ձառընտիրս,
թէ յայսմանէ կարգեցաւ կատարել ի նմին աւուր զտօն սէգն
գրիգորի լուսաւորչին։ Օ այն գրէ և վարդան պատմիչ, և
և յայսմաւուրքն։ Հայեմբ. 18. երես. 251։

Գրէ գայս և կիրակոս. և զամենեցուն զբանսն հատուածիւ
առաջի դնէ այսմիկ. * Գտեալ ասէ Հովհաննէս (զմարմինն լու-
,, սաւորչին), կարկառ քարի կոստեցին ի վերայ նորա. և յե-
,, տոյ ազդեցութեամբ նոր հոգւոյն սուն գառնիկ այր ձգնա-
,, ւոր և նոր տարեալ հանգոյց ի թորդան։ Նա յաւուրս զե-
,, նոնի կայսերին տարան ի նշխարաց նորա և ի սրբոց հալիսի-
,, մեանցն ի կոստանդիանուպոլիս. և արարեալ տապան սր-
,, ծաթի՝ եդին ի նէմ զնշխարս սէգն՝ գրելով զիւրաքանչիւր
,, զանուանն ի վրէ. և եդին ի մարմարեայ տապանի, և կըն-
,, քեցին մատանեաւ. և եկաց ձիկս յալոյս անյայտ, ոչ գի-
,, տելով այր ուրուք է. բայց զայս միայն՝ թէ սէգ է. խոկ
,, յաւուրս վասլի կայսեր և աշխոյժ բագրատունեաց հայոց
,, թագաւոր յայտնի եղև, ևն ||։ Նա ի պատմէն զղենոնէ և

զբաթգենէ՝ ասէ, Թէ *յաւուրս սոցա երանելին գառնիկ ե-
,, գիտ զնշխարս սրբոյն գրիգորի՝ ի մանեայ այրեն, և հանգու-
,, ցին՝ ի Թորդան ։

Յայս ամս հայեցեալ մեր՝ տեսանեմք զինչ զինչ չխմայուտութիւն ասացեալ, և զինչ զինչ յաւանդութիւն լծոյ • զորս՝ ի մի ըստու-գութիւն համաձայնեցուցանել անհնար է ։ Ա. յՀ՝ ի վէր ժամկէ առաջինն յայտնութիւն նշխարաց սրբոյ լուսաւորչին անտարակոյս եմք, Թէ ոչ եղև այն յաւուրս զենոնի կայսեր, այլ՝ բազում ամաք յառաջ քան զնա, նաև յետ իսկ քան զփոքրն Թէոդոս • զոյգ առ ժամօք մեծին Թէոդոսի • առ որ՝ ի դէպ գայ և այն բան Ձառընտրաց և յայսմաւուրքայ • Նոյեմբ • 18 • երես • 250 • Թէ յետ իբր յիսուն ամաց փոխմանն լուսաւորչին յայտ-նեցաւ ։ Ա՝անգի և յաւուրս իսկ սրբոց վարդանանց յառաջ քան զթձրել զենոնի գոյին այն սքր նշխարք՝ ի հայս՝ ի կաթուղիկէ եկեղեցւոջ վաղարշապատու • որպէս յայտնի առանդէ զազար փարպեցի ժամակից, յասելն՝ Թէ՝ ի գալ նախարարացն յա-ռաջնում նուճագի հանդերձ վարդանաւ՝ ի կողմանցն պարսից՝ ոչ եղև՝ ոմն սուրբն էր, ըստ առաջ նոյ ելանել պաշտօնէից եկե-ղեցւոյ՝ ի վաղարշապատ քաղքէ խաչիւ և նշխարօք սրբոյն գրի-գորի • և բանք փարպեցւոյն են այս • * Ա՝յդ՝ եկեալ հառա-
,, նեին տանուտեարքն հայոց հանդերձ սեպհօքն՝ որ ընդ լին-
,, քեանս՝ յՅս հայոց, ողջք և ոչ ողջք, կենդանի կիսա-
,, մեռք • որք ոչն տեսանէին ըստ յառաջ լուսաւոր եկեցն ող-
,, ջամբ յայտնիւն հեռաւոր Ձանասպարէն, և ելեալ (յն ելա-
,, նել) ընդ առաջ նոյ դասք պաշտօնէիցն քսի՝ բերելով ըն-
,, քեանս զնշան կենսատու խաչին, և զնշխարս առաքելա-
,, նման նահատակին գրիգորի, նուիրագելով զձայն սաղմոսաց
,, • • • այլ՝ անդ էր լսել զձայն լալոյ և զձայնս գոչի, ևն ։

Ուր յայտնի երևի՝ Թէ յայնժամ կային՝ ի հայս՝ ի վաղարշա-պատ քաղքի նշխարք սրբոյն գրիգորի • և յայտ է Թէ յայնմ ժամուն չև էր նաստեալ կայսր զենոն • քանզի քանևերեք ամք անցին՝ ի նահատակութիւն սրբոց վարդանանց մինչև՝ ի նստիլ զենոնի • Յիշէ զայսոսիկ նշխարս նոյն փարպեցին և յաւուրս կաթու-ղիկոսութիւն յովհաննու մանդակունւոյ՝ ի դուքին, յասելն • * Ա՝ւ եկեալ ղօրավարն հայոց՝ որն մամիկոնենից վահան յՅս հայոց՝ առ ուխտապահ նախարարսն հայոց • որում ընդառաջ ելանէր՝ ոչ այլն՝ այլ կաթուղիկոն հայոց յովհան՝ պատուհական նշանաւ խաչին, և՝ ոչ նշխարօք ձգնաղգեաց նահատակին գրիգորի • որովք և յուզարկեաց իսկ՝ ի դուռն զամենին ։ Ա՝ւ ահա այսոքիւք բանիւք յայտնի ցուցանէ փարպեցին, Թէ՝ ի վաղ ժամանակաց գտեալ էին այն սքր նշխարք, և ամփո-փեալ կային յեկեղեցւոջ կաթուղիկոսարանին ։

Արձէ ցուցանէ այս հաստատուԹիւն և ի բանից խորենացւոյն • Բ • 88 • Ա Գ • 11 • որ պատմէ զգիւտ նշխարացն սրբոյն ի ձեռն գառնկայ Ճգնաւորի իբր ի վաղուց լեալ • արդ՝ խորհուրդ այն չայտ է Թէ յառաջ քան զնստիլ գենոսի աւարտեալ էր գպատմագրուԹիւն իւր • Ոմանք ի միջ բերել և զբանս քուզանդայ • Գ • 2 • որ էր ի ժամանակս մեծին Թէոդոսի • որ և յիշէ յայտնապէս, Թէ եդեալ էր մարմին սրբոյն ի Թորդան, (բերեալ անդր ձեռամբ գառնկայ • ոմն ասէն Ճամ պատմիչք) • ուրեմն ոչ է մարԹ ասել, Թէ յառուրս գենոսի իցէ դեալ • Ոմք ոչք գայդ ասեն, յայտնի շինօԹէն գպատմուԹի գիւտի նշխարաց սրբոյն գրիգորի լուսաւորչին և պատմէ սրբոյն գրիգորիսի աղաչանաց կՀՂկսի • քզի գիւտ նշխարաց սորա չինաւի յառուրս գենոսի կայսեր եղև ի Ժմկս վաչագանայ արքայէն աղաչանաց • որպէս ունիմք ասացեալ յերկդ գիրս •

Այս եդեալ՝ պարտ է ասել, Թէ ի դառնիլ մարմնոյ սրբոյն ի ձեռն գառնկայ Ճգնաւորի՝ ոչ եղև տարեալ ի կուստանդինուպօլիս՝ և ոչ մնան մի, այլ՝ Թաղեցաւ ի Թորդան • և յետոյ եդաւ ի կաԹուղիկէն հայոց ի վաղարշապատ, և ապա ի գուԲին • որ և ինաց ի հայս մինչև ցեօԹներորդ դար ցաւուրս կոստանդեայ Թուրքն Հերակլի • քզի գրե յովհաննէս կԹղկս՝ ընդ նմին և այլ պատմիչք հայոց, Թէ ներսէս կԹղկս չինօղն կոչեցեալ՝ յաջորդ եղբի՝ ի կանգնել զեկեղեցի յանուն սրբոյն գրիգորի՝ եդ զմասունս ինչ նորուն զմեծաւմեծս ի հինմունս ի զգուշանի պահպանուԹե • և զպատուական դլուխն եդ ի տապանակի միւմ ի վեր բազմոցի • Արուի յայտնի ցուցանի, Թէ մինչև ցայն աւուրս տակաւին ի հայս էին այն սրբ նշխարք •

Ոչ որ տարեալ եղև երբեւիցէ ի կուստանդինուպօլիս, ոչ էր ամբողջ մարմինն, այլ՝ մասն ինչ ի նշխարաց նր • և Թերևս յայն հայի վերադրեալ պատմուԹի ճառընտրաց • և երևի Թէ այն իցէ՝ որ յետ ԺմկայՀինգերդ դարուն յաւուրս միքայէլի կայսեր եկն ի յայտ • Նոյնպէս և զոր ասեն, Թէ գրիգոր պատրիկ յետս դարձուցեալ իցէ զմարմինն լուսաւորչին ի կուստանդինուպօլսոյ ևս, պարտ է խնամով ընԹերցել այլոց իրիք մասին • Վասն զի ոչինչ ընդդեմ է, Թէ յետ գիւտի մարմնոյ սրբոյն, մասունք ինչ նշխարաց նր առ և անդ տարեալ իցեն՝ ոչ միայն ի կուստանդինուպօլիս, այլև յայլ տեղիս • որպէս և մասն ինչ յաղուանս • ըստ որոյ դրի ի ճառընտիրս, Թէ մասն Թէոս երկոյն այն աշակերտ յովհաննու մանդակունւոյ առեալ մասն մի ի նշխարաց սրբոյն գրիգորի՝ տարաւ յԱղուանից, և եդ ի գիւղն դարաշոտ՝ կից քաղաքի իւրում մատուռնեաւ •

Գրէ և վարդան, Թէ * եկեալ խոսրովիդ (որ Թուի լինել

կԹղկս

,, կ՚ելնէին աղուձանից (հրամանատար վարազտրդատայ աղուձա-
,, նից իշխանի , և խնդրեալ զծնօդս լուսաւորչին՝ տարեալ
,, եդ ՚ի գլխաւանն կոչեցեալ տեղւոջ ։ Եւ յիշէ քան զայս
պատմէ , թէ գրիգոր մամիկոնեան * զծնօդս լուսաւորչի եւ
,, աղուձանից ՚ի խնդրոյ ջոճանշիրի , և քեռ իւրոյ , որ էր առ
,, կինն գրիգորի ։

Եւ յետ ձմեռայ՝ զի գլուխ նէր և այլ քանի մի նշխարաց ոսկե-
րաց նորին և գործիք ինչ զարշարանացն սուրբ եւ յիտա-
լիա , յր ՚ի ներիտոն և ՚ի նեապոլիս . զորոց խօսի և յովհան-
նէս սարկաւագն ՚ի քննուէ ազաթանգեղոսի . երես . 301 . ՚ի
մէջ բերելով զբանս յիշատակարանաց ներիտոնացւոց , յա-
սելն . * ՚Ի թանձնաւհիք յոյնք ՚ի կարգէ սըբոյն քարտղի ՚ի
,, պատճառս հալածանաց սատակացելոց յարևելս և ՚ի հայ-
,, աստան ընդդէմ ուղղափառաց՝ փախստեայ գնացեալ ի-
,, ցեն ընդ ծով դէպ յիտալիա , բերեալ ըն իւրեանս և զմար-
,, մին սըբոյն գրիգորի հայոց (հայրապետի) . և նովիմբ հան-
,, դերձ եկեալ հասեալ լոյծն ՚ի ներիտոն . և անդ մարդասի-
,, բութեամբ ընկալեալ ՚ի բնակչաց երկրին՝ տուեալ լոյծն ՚ի
,, ընտրեա երախտեաց նոցին ՚ի բերեալ նշխարաց անտի պար-
,, գեա ներիտոնացւոց զբազուկ սըբոյն գրիգորի (ըստ մասին) .
,, . . . և մնացեալ ոսկերք սըբոյն և գործիք ինչ վկայութեն նը-
,, յոյց կրօնաւորաց և ՚ի միանձնուհեաց փոխադրեալ ի-
,, ցեն ՚ի նեապօլիս ։

Եւ քարտնիոս կարգինալ ՚ի ծանօթութե յայսմաւուրաց . յա-
նուէ . 11 . գրէ այսպէս . Լուսանք ամանք ՚ի ՃՄա ինչ վրդով-
ման ՅԻն արևելից կամեցեալ ձողոպրել զանձինս ՚ի ձեռաց
բռնաւորաց՝ * փախստեայ եկին յարևելից , և բերին ընդ ի-
,, բեանս զսրբազան աւանդս եկեղեցւոյ իւրեանց զպատուա-
,, կան նշխարս , ընդ ոյս և զսրբազան գլուխ սըբոյն գրիգորի
,, հայոց հայրապետի ։ Եւ իբրև հասին ՚ի ծովակին կամպա-
,, նիոյ , բազում պատուով ընկալեալ եղեն ՚ի նեապօլեցի-
,, ից . և կանգնեալ տաճար ՚ի պատիւ մեծի հայրապետին
,, հանդերձ մենաստանաւ՝ բնակեցան անդէն սրբութե և
,, բարեկրօն կարգօք . որոց յաջորդեալ կուսանք նեապօլ-
,, եցի . մինչև ցայժմուս դար՝ կային ընդ ձեռօք և ըն կանո-
,, նօք բարւոյն . այլ եթող . . . մնին ընդ կանոնօք բենեդիկ-
,, տոսի ։ Եւ զայսոսիկ ես ինձէն (ասէ քարտնիոս) տեղեկա-
,, ցայ յորժամ եմ ՚ի նեապօլիս , ՚ի հին յիշատակարանաց նո-
,, րին եկեղեցւոյ ։

Եւ թէ յորմէ սակի իցէ լեալ այս , որոշակի ոչ ասանդի .
թէպէտ անառն բռնաւորեանց համարի լինել յաւուրս կոստան-
դեայ կոպրոնիմոսի պատկերամարտ կայսեր՝ յորժերոյդ դա-

բուն։ Արդէն և եղեւ, այսոքիկ նը նշխարք կան այժմ զետեղեալ յայնոսիկ եկեղեցիս. զորս և յարգեն համօրէն քնակիչք տեղւոյն քաղցր պատուհասով և մեծահանդէս ծանիւք, ուստի իբրև՝ ի պաշտպան թիկնուածէ իւրեանց զնջ հայրն մեր գրիգորիոս։ Այլ թէ աջ լուսաւորչին՝ որ միշտ պահիւր՝ ի կաթուղիկոսարանի հայոց, այժմ ուր եղեւ, ունիմք ինչ յիշատակել՝ ի ծանօթութիւնս վերջին գլխոյ։

Ասէ յաղագս նշխարաց սրբոյն Հռիփսիմեայ և գայիանեայ, որք յիշատակին՝ ի նախակարգեալ պատմութէ ճառընտրոյ, գիտելի է, զի ոմք հանդերձեալ եմք աւանդել յերրորդ գիրս, կոմիտաս կթիղկա եգիտ զտապան նոյ կնքեալ մատանեաւ սրբոյն գրիգորի և սահակայ. և ինքն վերստին կնքեալ՝ ամիսի զետեղեցոյց զնա. այլ թէ ունի յետոյ յայնց նշխարաց տարեալ եղեն՝ ի կոստանդինուպօլիս, չունիմք ստոյգ ինչ աւանդել։ Արձկ գիտելի է, զի գրի՝ ի ճառընտիրս, թէ ժամն ինչ՝ ի նշխարաց սրբոյն Հռիփսիմեայ տարեալ եղև յաղուանս յաւուրս սամուէլի կթիղկոսի, որ հարիւր ամօք յառաջ էր քան զկոմիտաս. և՝ ի գիրս յովհաննու մամիկոնէի գնի, թէ տեփանոս առաջնորդ գլակայ վանից գնացեալ առ կոմիտաս կթիղկա՝ էառ՝ ի նշխարաց անտի Հռիփսիմեանց. և քերեալ եդ՝ ի վանս իւր։ Այլ քզի՝ ոմ ստոյգք, տապան սրբոյն Հռիփսիմեայ ոչ էր բացեալ ցաւուրս կոմիտաս կթիղկոսի, երևի թէ այս մասունք սիրեալք յառաջ քան զկոմիտաս և յաւուրս նորա իսկ, իցեն այլ նշխարք յընկերաց սրբոցն։ Կամ թէ գուցէ այլ մասն իցէ, մնացեալ՝ ի ձեռն լուսաւորչին՝ ի ձեռս ումանց։

Ղ. Վք գրիգորիսի Նոռին սրբոյն գրիգորի։

(1) Գրէ խորենացին. գ. 3. Թէ՝ ի խնդրել վերակացուաց տէրն փայտակարանու և աղուձանից յագդէ լուսաւորչին՝ իբրեանց հովիւ, * այսմ հաւանեալ երանելին տրդատ՝ տայ նմ եպիսկ
„ զմանուկն գրիգորիս զերկեց որդին վրթանայ. Թեպետ և
„ յանլուսութիւն աւուրցն հայելով պատանեացն՝ պարականոն
„ զիրն վարկանէր, այլ տեսեալ զնոցա մեծանձնութիւն,
„ և զմտաւ ածեալ զաղօտմն երկոտասանամեայ Թգուրեալ
„ լինելն, առաքէ բազում հանդերձակութիւք ॥։
Ասէ քուջանդ գնէ, Թէ նա էր յայնժամ հնգետասան ամաց. զի ծնեալ էր ասէ՝ ի վրթանիսէ՝ ի ծերութէ նր. և գրէ այսպէս. զոր. գ. գլ. 5. * Վրթանէս էր ամուսնացեալ
„ և անորդի. և՝ ի քէմ ձմիս խնդրեր նա յայ, զի մի զկնի
„ յօրհնութէ պաւակի. այլ՝ ի պաղող նր կացցէ առաջի նր
„ ի պաշտօն տեն։ Նա՝ ի ծերութէ նորա լուեաւ տեր աղօթից

„ նր։

,, նը . յղացաւ ամուսին նը , և ծնաւ երկուս որդիս երկուքո-
,, եակս . և կոչեաց զանուն երիցուն յանուն հօր իւրոյ գրի-
,, գորիս . և երկրդին յուսիկ . որք մնան զառաջեաւ թագրին
,, հայոց . և ուսման գրոց փոյթ ’ի վեր կալան ուսուցանել
,, զնոսա ։ Այս երեց որդիս գրիգորիս եհաս յեղիսաբեաւն կող-
,, մանց աղօճանից և վրաց՝ վ’ոտ հոգեկիր առաքինի արդասեաց
,, և բարեհասակ լինելոյ . և զգիտութեն ոյժ յանձին կրելով՝
,, ոչ ամենևնացաւ նա . այլ ’ի հնգետասաներորդ եհաս յաս-
,, տիճան եպիսկոպոսութեն ՚ձին վրաց և աղօճանից և առհմանացն
,, մազքթաց ։ Այսմ բանի քուշանդոյ առեալ ումանց՝ ե-
դին հաստատուք , թէ ոբն գրիգորիս յիրաւի հնգետասան-
ամեայ էին ձեռնադրեալ ’ի կաթողիկոսութեն աղօճանից . ոյր և
տեսանել և յայտնաւորս . Տարս . 6 . ի գլխ . 1 . և ’ի գովեստ
երջանկացոյն ’ի վեր Թոռանց լուսաւորչին . էջս . 327 ։
Ընդ այս տարակուսեալ եմք . և պատճառ տարակուսութե
է՝ այս . զի կարգք բանից խորհնացոյն և այլոց մատենագ-
րաց մերոց ցուցանեն , թէ զկնի առանձնանալոյ լուսաւորչին
և զկնի կատարման արիստակեայ՝ յաւուրս կաթողիկոսութե սըկ-
վրթանեսի ձեռնադրեալ էին որդի նը գրիգորիս կաթողիկոս աղ-
օճանից . ոյր Համարի և քուշանդ . ըստ որոյ դնի յայտնապէս
և յայտնաւորս . գլխ . 1 . էջս . 287 . Թէ յաւուրս վրթա-
նեսի եղև այն ։ Իսկ այս յիրաւի հաւանականե , զի թէ չև եր
յայնժամ սըկս վրթանես նստեալ կաթողիկոս հայոց , գուցե զնա
տայր ձեռնադրել տրդատ ’ի վեր աղօճանից , և ոչ հարկաւո-
րեր կարգել զգրիգորիս զորդի նը ։ Եւս զի պատմութիւնք
հայոց յայտնի ցուցանեն , թէ ’ի վերջին աւուրս տրդատայ
ձեռնադրեցաւ գրիգորիս . և զկնի սակաւ ամաց ’ի վախճա-
նիլ տրդատայ՝ սպանաւ նա յաղօճանից , և ոչ յերկարեայ ’ի
հայրապետութե իւրում ։ Եւդ զայս այսպէս եդեալ , ոչ կ
Հնար ասել ըզ քուշանդոյ , թէ ’ի հասակի . ժե . ամաց էր
ձեռնադրեալ նա կաթողիկոս , այլ՝ գոնե ’ի հասակի . իե . ամաց ։
Իսկ զի այս հասակ՝ հայելով յայնպիսի ժողովուրդս , յորոց վեր
կաթողիկոս կարգեցաւ նա , նուազ Համարիւր , վնակ և խորհնա-
ցին մանկահասակ Համարի զնա՝ առանց որոշելոյ զամն . ոյր
և մեք ’ի պատմութե սակաւահասակ եդաք ։
Սակայն՝ ոչ կ Հնար . զի թէ յիրաւի ըստ քուշանդոյ . ժե
ամեայ ձեռնադրեալ էր ոբն գրիգորիս , կրտսեր եղբայր նը
ոբն յուսիկ գոնե ’ի նոյն ամն պարտ էր ծնանիլ զաթանա-
գինե , և ոչ թէ քիչ ամօք յառաջ . և զի աթանագինե ևս
ոչ կարէր ծնանիլ զոբն նախքան յեօթնեներորդ կամ ’ի տաս-
ներորդ ամի հասակի իւրոյ , այլ գոնե ’ի . ժգ . կամ ’ի . ժե
ամի , Հարկ լինէր սըկս նախահեղ նստիլ կաթողիկոս ’ի հասակի

տան ամաց . վ՚ր զի միջոց Ժ.ամին զայս պահանջէ . որովհետև ՚ի նատելոյ սբոյն վղեմանիսի և գրիգորիսի մինչև ՚ի կաթուղիկոսուն ներսիսի ոչ անցին աւելի քան ղբսան և հինգ ամք ըստ աւանդելոյ համօրէն պատմագրաց մերոց . որոց եթէ ՚ի հնգետասաներորդ ամի՝ այն է վերջին ամ սբոյն վղեմանիսի , ծնեալ էր սբն ներսես յամի անուպ հինեալ , լինէր տասնամեայ ՚ի նատիլն կաթուղիկոս . որ է անտեղի : Լոկ եթէ ոք պնդեսցէ , թէ յերեսի հնգետասան ամաց էր սուրբն գրիգորիս , և ոչ քսան և հինգամեայ , հարկ լինի յայնժամ շարժել զժամին , և ասել , թէ ՚ի կենդանութեն լուսաւորչին ձեռնադրեալ իցէ

նա . և սակայն այս ոչ համաձայնի պատմութե հայոց :

Պիտեմք և ես , զի ոմն տեսանի ՚ի վերոյգրեալ քանս քուզանդայ , և ես յայտնութեամբ ՚է տարեդ . ճ . և ՚ի Ճառընտիրս , գրիգորիս ասի լինել կաթուղիկոս նաև վասն և աղուձանից , մաղքեթաց և Ճենաց . և աստի յայտնի՝ ասեմուն . հապ . ՟գ . գլ . ԺԱ . երես . 616 . Հաստատ , թէ յաջորդութեի կաթուղիկոսութե վրայ իցէ ՚ի գրիգորիսե . այլ մեք զատոյգն չունիմք գրել . զի խորենացին ցուցանե գնա կեթղիս կողմանցն փայտակարանու և աղուձանից , որք ՚ի սիահակայ հայկազնոյ՝ աղուձանեցոյ՝ կոչեցեալ էին աղուձանք . զորս և մխիթար կաթուղիկոս առաւելս ստուգաբանե ՚ի նոյն աղաւնեբարոյն սիահակայ : Այս ոմն աւանդե ՚ի գիրս մեր , ՚ի կեթղկուէ սորին սբոյն գրիգորիսի հաստեցաւ ՚ի նմ առանձին կեթղկատարան , այն է աթոռն գանձասարայ . ուր և ցարդ նստին կաթուղիկոսունք :

Այլ ՚ի վեր կատարման սբոյն գրիգորիսի գրե քուզանդ այսպիսի ինչ . յետ պայծառացուցանելոյ նմ ասե զկողմանս աղուձանից՝ եհաս քարոզութե մինչև ՚ց ծագս մաղքեթաց . ուր թեքեր աներեսս յապդակատուե արշակունեաց . և երթեալ յանդիմանեն եղև թեքեին և իշխանացն հնոյց . և նոք ընկալան զնա . և ՚ի լսել՝ թէ չար է աւարառութիւն , մարդասպանութի , պառնկուէ , ևն , ըստ այս գժոխարացեալ նոցն ասեն . այս է հնարք տրդատայ , զի մի արշաւեսցուք յաւար ՚ց հայոց . եկայք սպանցուք զսա , զի մի խափան լիցի մեզ իւրումն յանդիմանութե : Այս մինչ նոքա յայս խորհրդեան էին , լուան զմնան տրդատայ . վասն որոյ կալեալ զնոսն՝ կապեցին յամենի ձիոյ ագի . և թողին ՚ի վաներսարան գաշտին . որ հարաւ ՚ի քարս և ՚ի թուփս . և այնպես կատարեցաւ ՚ի նոսն : Այս ասպա պատմէ քաղցր ինչ զանեսանայ . զորմէ տես . ծանօթ . խԵ . (3) : Այլ գիտելի է , զի այս ամենայն թեքեր աստուածային՝ է այն առաքեալ տրդատայ իշխանն արշակունի , ՚ի ձեռն որոյ առաքեաց տրդատ զսբն գրիգորիս ՚ի փայտակարան . որ և յետոյ միաբանեցաւ

՚ի

'ի սպանումն սէյն · և թագ կապեաց անձին · և ապա փախեաւ յերեսաց խոսրովու 'ի պարսս · ըստ որում գրէ խորենացին · գ · 3 · և 6 ։

'ի վէր գրոցն Ճառից սէյն յակոբայ մծբնայ հայրապետի ։

Յդաք 'ի պատմուձէ , թէ ոչն յակոբ ըստ խնդրոյ սէյն վրթանեսի յղեաց առ նա զիւր հոգեվի Ճառն . և զայս գոհանեմք առանդեալ նման 'ի Ճառընտիրս . ուր թէպէտ արիատակէս գրի , բայց յայտնի տեսանի թէ վրիպակաւ գրչաց փոխեալ է անուն վրթանիսի · քանի ասի անդ , թէ յետ անիծանելոյ սէյն յակոբայ զմանաձիկն ուղտունի և զՃն նր , 'ի հասանել պատուհասին՝ * աղդ եղև աքանչելիքն առ ոչն արիատակէս հաղորդաստ իւր · քանզ պաղատանս արձակէր (առ ոչն յակոբ) վասն Ճին ուղտուներայ՝ լուծանել 'ի կապանաց . և ըզպիրան տալ զինդրելին (յոր գՃառան՝ զոր խնդրեալ էր) , զոր ինքնահաւս արարեալ զգօն կուչեցեալ ։ Յայս բան ահա ոչն երևի՝ վինակ անուանեալ վրթանէս՝ եդեալ է արիատակէս . և կիմ վինակ դնելոյ , առ վրթանէս հարազատ արիատակեայ , եդեալ է արիատակէս հարազատ իւր ։ Նա հարկ իսկ է այսպէս ասել . քանզ յայտ է թէ յետ մահուն արիատակեայ եղև այն՝ որ պատմի 'ի Ճառընտիրսն անդ , յոր անիծումն Ճին ուղտուներայ . և նա ինքն ոչն վրթանէս էր՝ որ աղաչեաց զնա յակոբ՝ լուծանել 'ի կապանաց զայն Ճ . ոչ աւանդէ խորենացին և այլ շատ պատմիչք մեր . ապա և խնդրոյ Ճառիցն պարտ լինել վրթանէս . ըստ որում դնի և 'ի գիրս ինչ նոր հեղինակաց . վասն և մեք 'ի պատմուձէ յառուրս սէյն վրթանիսի յիշեցաք զայս ։

Այլ աստ արժան է գիտել , զի 'ի սկիզբն Ճառիցն սէյն յակոբայ եդեալ կայ թուղթ ինչ 'ի դիմաց խնդրողին զայնոսիկ Ճառս 'ի սէյն . (որպէս և այլ թուղթ մի 'ի դիմաց նորին առ խնդրողն) . բայց այնպիսի օրինակաւ , զոր չէ մարթ ընծայել սէյն վրթանիսի կամ այլում ումեք երևելի հայրապետի . քանզ զրօղ թղթոյն ցուցանէ զինքն լինել իբրև նորոգ 'ի Ճառատս հաստատեալ , և փափաքօղ ուսանելոյ զգործս քրիստոնէական Ճառատոց . ըստ որոյ ասէ 'ի թղթի անդ . * Այլ յառաջ քան զայմ ինչ՝ որ կարի պիտոյ է ինձ , գրեա՛ ինձ և խելամուտ արասցես զիս վ՛ս Ճառատոյ մերոյ , թէ զիարդ իցէ , և ո՛ր է հիմն նր , և ո՛ղ շինուՃած շինի նա , և ո՛ղն իրօք հաստատի նա , և ո՛ղն գործք պիտոյ են նմա ։ Այլ ես այսպէս եմ հաւատացեալ , եթէ միայն իցէ ՃՇ՝ որ արար զերկինս և զերկիր 'ի սկզբանէ . . . և նա առաքեաց զիս յաշ ։ Յայսմ ամի եղբայր ես այսպէս հաւատա-

,, ցեալ

Խ'։ (2)

,, ցեալ՝ աղաչեմ զքեզ , զի գրեսցես ևխելամուտ արասցես
,, զիս , թէ ծրպիսի գործ պիտոյ իցէ այսմ հաւատոյ մերոյ ։
,, և հանդուսցես զիս ։

Ա.յս եղանակ խօսից յայտնի ցուցանէ , թէ այն Թուղթ ոչ է հարազատ գրուածք մեծի Հայրապետին մերոյ Սրբոյն վրթանէսի ։ ուստի և անտարակոյս պարտ է ասել , թէ զայդ Թուղթ յօրինեալ է իմաստակ ոմն՝ անսալով աւանդութենց առաքելոց՝ առ՝ի յորմարել զդէմն Ձառից առ այն՝ առ որ գրէին ։ Այլ զարմանալ արժան է ոչ այնչափ ըստ այնպիսի աղաւաղ յօրինուածոյ Թղթոյն , որչափ ըստ վերնագրին՝ որ գնի՝ի վերայ այնր Թղթոյ յայժմու օրինակս այսոյ ։ * Թուղթ Սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին առ Սրբն յակոբ մծբնայ եղեալն ։ Որպէս այդ վերնագիրս յայտ առնէ զլսողին զանհաւատարմուի յօրինուողն Թղթոյն ։ Քզի զիարդ մտօրթ իցէ ասել , թէ զայնպիսի դեռ ավարժից վայել քանս գրեալ իցէ Սրբ լուսաւորիչն մեր , և խնդրեալ իցէ զայնպիսի Ձառս , զորպիսիս և ինքն իսկ Սրբն գրիգոր յօրինեալ էր ։ ոմն եղեալ՝ի պատմուէ ։ գԼ ։ իս ։ երես ։ 419 ։ յապաթանգեղոսէ ։ զորս և գրոՀատունըք յիշեն Սրբն գրիգոր նաբեկացին՝ի մեհենուէ երգոց երգոյն , և գրիգոր մագիստրոս՝ի Թուղթն իւր , և այլք ։

Ասոի և որք տպագրեցին՝ի հռոմ զգործս Սրբոյն յակոբայ՝ ծանուցանեն ընթերցուղաց , Թէ այն ոչ է լուսաւորչին ։ զի անվայել է ասեն կարծել , Թէ այսպիսի եղանակաւ խընդրեալ իցէ Սրբ լուսաւորիչն զՁառս վարդապետութենէ յայլմէ ։ Այսու որոյ և յաւելուն , Թէ գուցէ մի ոմն՝ի վարդապետաց գրիգոր անուն խնդրեալ իցէ զայսոսիկ Ձառս ։ և ապա անտեղեակ ոք եղեալ իցէ՝ի վերնագրի զբառդ լուսաւորիչ ։ ասի դրձ անդ , Թէ գուցէ գրիգորիս աղօճանից կԹղիկս իցէ խնդրօղ Ձառիցն ։

Ա.յլ՝ի վէր Սրբոյն յակոբայ մծբնայ Հայրապետի քզմ ինչ կայր մեզ աւանդել ։ քայց քանզի այն իրք ոչ Հայկին ուղղակիւ առ Հայս , զանց արարաք դնել՝ի պատմուէ ։ Այսու Թէ յորմէ առի վախճանեալ իցէ Սրբն յակոբ , ոչ է յայտ որոշակի ։ առաջնումն ըստ աւանդելոյ ժամանակագրուէ եղեսացւոց դնէ յամի Ռն ։ 338 ։ ոմանք յամի Ռն ։ 340 ։ կամ 342 ։ քայց Հարկ է քանի մի ամ ևս յետոյ դնել՝ ցամ Ռն իրր ։ 345 ։ կամ 346 ։ զի յայն ժամին եղեն այն անցք պատուհասին մանաՀրհի յանիծից Սրբոյն յակոբայ՝ յաւուրս խոսրովու որդւոյ արդաւազայ , և կոստանդեայ որդւոյ կոստանդիանոսի ։ զորմէ տես՝ի պատմուէ ։ գԼ ։ իբ ։ երես ։ 428 ։ և՝ի ծանօթ՛՛ ։ իբ ։ (2) ։

Ի վեր մահու և թաղման աբբին սրբոյ. և պաշտման աբբին վրիանիսի։

ԻՎ. (3) Մահ աբբին սրբոյ եղաք ի պատմութեան ըստ առանդելոյ խորենացւոյն. Է. 89. այր թէ յառաջանալ նմա՝ նախարարք հայոց * զհետ առաքեալ կոչեն զնա՝ որ լինել ըստ կամաց նոր՝ և առնել զթագրուհին. իսկ ի չհաւանել աբբին՝ տան նմա արքունի (մահու) ։ և դարձեալ գրէ ի տարին. * այլ պատմութիւն յաղագս աբբին սրբոյ ճշմարիտ է. քանզի արքունեալ նմա զեղ մահու՝ զրկեցան ի լուսոյ ընդհայց ճառագայթից նր ։ Այսպէս առանդէն և այլ պատմիչք մեր ։ Եւ սակայն ի ձեռագիրս լինչ խորենացւոյն փոխանակ դնելոյ * ի չհաւանել աբբին ։ , եդեալ է * ի հաւանել աբբին ։ . և յայտ մանէ կարդեալ են ոմանք զայլ իմն պատմուի խառն. ըստ որոյ գրէ և կիրակոս այսպէս. * երթեալ առէ զօրացն սրբոյ՝ աղաչէին զնա ունել զթագաւորուի . . . և նր հաւանեալ կամաց նոր՝ դառնայ յաթոռն իւր. և ամ կարդաց և առաքինուեւ լինքն լինէր օրինակ ։ Իսկ նոքա տաղտկացեալք ի բարեպաշտուէ նր՝ խորհեցան նենգուէ ապականել զնա. յորս զբօսանաց աղաղաւ հարեալ նետիւ խոցեն զնա իբր անգիտուէ. և տեսեալ՝ թէ ոչ մեռանի յայնմանէ, տանեմ դեղ մահու. և այսպէս լուծին զնա ի կենցաղոյս ։ Ըստ այսմ դնի և յայտնութիւնս. Նոյեմբ. 29 ։ Այլ այս յաւելուածք բանի յայտ է թէ ընդդէմ է բանից խորենացւոյն և այլոց պատմագրաց մերոց ։

Իսկ թէ ուր թաղեցաւ մարմին աբբին սրբոյ, խորենացին ոչինչ յիշէ ասա. բայց գրէ նա այլուր. Գ. 10. վն խոսրովու որդւոյ տրդատայ, թէ * բարձեալ զնա թաղեցին յանի (այր է՝ ի կամսիս) առ հօրն ։ . կամ ըստ այլում օրինակի՝ առ հայրն ։ Եւ թէպէտ յօրինակս լինչ գնի, առ Տարս, բայց ասողիկ և վարդան ըստ առաջնոյն ընթեռնուն, առ հօրն, կամ առ հայրն ։ Ասողիկ. Է. 1. գրէ այսպէս. * բարձեալ զնա տարան յանի առ հայրն ։ . և յայլում օրինակի գրոյ նր գնի, առ հօրն ։ Եւ վարդան գրէ այսպէս. * կատարեալ խոսրովու զկեանս՝ թագի առ հօր իւրում ի կամսիս ։ Յորոց յայտնի լինի, թէ ուրեմն և հայր նորա տրդատ ի կամսիս թաղեցաւ, այն է առուրն անի. որ և էր առեղի գերեզմանաց թագաւորացն արշակունեաց ըստ առանդելոյ առցն, և ըստ ագաթանգեղոսի. յերես. 351 ։

Եւ յայս ցուցանի և առտի, զոր գրէ խորենացին. Գ. 27. Թէ յաւուրս արշակայ որդւոյ տիրանայ ի դարձուցանել նախա-

բարաց զոսկերս Թ֊ղրացին Հայոց , զորս տարեալ էին պարսիկք
՚ի յանապ , Թաղեցին ասէ յաւանն աղցս յառն արագածու .
զի խառնեալ էին ընդ միմեանս ոսկերք Հաւատացեալ Թ֊ղրաց
ընդ ոսկերս հեթանոսաց ։ Զ՚որդ՝ յայտ է թէ ցայն աւուրս երկուց միայն Հաւատացեալ Թ֊ղրաց մարմինք կարէին Թաղեալ
լինել ՚ի յանդ , այլ սկզբն տրդատայ և որդւոյ նորին խոսրովու .
իսկ ապրան որդի խոսրովու ընդ գրելոյ խորենացւոյն . Ճ . 22 .
Թաղեցաւ յաւանն կոճաշ . * ոչ ապրժանի եղեալ ասէ Հարցն
,, գերեզմանատց՝ (որ յանդ) ‖ . և մեք ըստ այսմ եդաք ՚ի
պատմութիւնն ։

Զ՚որ գիտելի է , զի աւանդի յայսմաւուրս . Նոյեմբ . 29 . երէս .
283 . և յծագրութիւնն վարդանայ ուրումն , թէ մարմին սքանչելի
տրդատայ՝ այլ մասունք ինչ ոսկերաց նորա՝ ընդ մարմինս աշխէն
տիկնոջ և խոսրովիդխատոյ փոխադրեցան ՚ի ուղղտունիս ՚ի հոգւոյ վանքն որ ձծածնին . իսկ թէ զիարդ , որոշակի ոչ գրի ։
գուցէ յետ ժամուց տեսեալ զսքանչելիս ՚ի վերայ յաւուրն ոսկերաց սքանչելի տրդատայ՝ որ ՚ի յաղցս , տարան զնա անդ ՚ի հոգւոյ վանս ։ Զ՚ու կամ թերևս յառաջագոյն իսկ նախ քան զփոխադրել այնր յաղցս՝ բերեալ էին ընդ մասին ՚ի յանապ ՚ի հոգւոյ վանս , և ըստ մասին միացեալ ՚ի յանդ ։

Զ՚որ գրի ՚ի նոյն յայսմաւուրս , թէ ՚ի մեռանիլ սքանչելի տրդատայ՝ Թաղեցին զնա ՚ի Թորդան , այս Թուի առնել յանապարշ
բանից բուզանդայ . Գ . 14 . երէս . 55 . և կամ՝ ՚ի բանից յովհաննու կաթուղիկոսի , որ յետ ասելոյ , թէ գառնիկ եդ ընդ
մարմին ՚ծոյ լուսաւորչին * ՚ի գեղջն Թորդան յիւր խակ ՚ի
,, զբօսանաց պարտիզականն ‖ , գրէ և վասն մարմնոյ սքանչելի տրդատայ՝ այսպէս . * զոր տարեալ Հանգուցանեն զմարմին նր
,, ՚ի նմին աւանի ՚ի նոյն պարտիզական՝ մերձ եդեալ ՚ի քնարանն սքանչելի գրիգորի ‖ . Զ՚որ յայս բան կամ վերծակ դրչագոյ , և կամ այլևայլուածի . զի փոխանն տրդատայ եղև քնար
ամենք յառաջ քան զգիւտ մարմնոյ գրիգորի լուսաւորչին , յաւուրս ՚ծոյն վերծանիսի . ապա չէր հնար առ գերեզմանի նորին
Թաղել ՚ի Թորդան .

Այնպէս է և այն , զոր գնէ յովհաննէս կաթուղիկոս վասն
մարմնոյ ՚ծոյն վերծանիսի՝ յասելն . * տարեալ Հանգուցանեն
,, զնա ընդ Հարս իւր ՚ի գեօղն Թորդան ‖ . Զ՚ու եթէ չգոյէ վերծակ գրչագոյ ասելի է՝ թէ այդ եդեալ է ընդ բանիցն բուզանդայ . Գ . 11 . որ գրէ այսպէս . * զնէն վերծանէս . . . ՚ի գեօղն
,, Թորդան ՚ի դարանապետէ տաւտն յուղարկեին . և անդ
,, առ մեծի Հայրապետին գրիգորի զտրա ՚ծս զոսկերան Հանգուցանէին ‖ . Զ՚ու կամ պատշաճ է ասել , թէ յովհաննէս կաթուղիկոս՝ ընդ Հարս ասելով՝ իմանայ , յաւելուա առ Հարս իւր .

և ոչ թէ հայր նորա ձգէն գլխիցը թաղեալ կայր անդ՝ ի Թոր-
գոմա. զի յետ մահու ձգէն վերնախն զինեն ճիկայ բերաւ
անդ մարմին հօր նորա. ոմն գրէ խորենացին. Ճ. 11. յասելն
վասն ձգէն վերնախն, թէ * ՚ի հրամանէ նորին տարեալ
„ հանգուցանեն (զմարմին նորուն ձգէն վերնախն) ՚ի գեօղն
„ Թորգոմա, իբր մարգարէական ակամբ հայեցեալ, որ զինեւ
„ բաղում ժամանակաց և հօրն ՚ի նոյն տեղւոջ հանգուցան
„ նշխարքն ‖ :

Այլ՝ զայսմանէ սխալ գրչաց է և այն՝ որ գնի ՚ի գիւրս առաղկայ-
Ե. 1. Թէ յեկեղեցւոյ գաւառի ՚ի գիւղն Թորգոմա Թաղե-
ցւոյ մարմին սիջն արիստակէս. ոմն է և ՚ի գիրս վարդանայ.
յորս փոխանակ գնելոյ ՚ի Թիլն աւանի՝ եգեալ է ՚ի Թոր-
գոմա. զի արիստակէս ոչ եթէ ՚ի Թորգոմա Թաղեցւոյ, այլ՝
՚ի Թիլն աւանի, և այն յեկեղեցւոյ գաւառի. ոմն գնէ խորե-
նացին. Ե. 88. և և թուզանդ իսկ. Ճ. 2: Այնպէս և վըր- (4)
Թանէս ոչ եթէ ՚ի Թիլն աւանի Թաղեցւոյ, այլ՝ ՚ի Թորգոմա,
և այն ՚ի գաւառն Եկեղեցւոյ գաւառի. որպէս գնեն առենայն
պատմիչք:

Այլ գիտել արժան է ասա և զ'ս պաշարումն սիջն վերնախ-
սի. զի թուզանդ ՚ի պատմելն զայսմանէ. Ճ. 5. փոքր մի
այլազգ գրէ. Որք միանգամ ասէ զինն կռապաշտուն սովո-
րեալ ՚ի ծաճուկ ունելին, ՚ի մի ժողովեալ սրբ երկու հազարք
դիմեցին ՚ի վէր սիջն. գրգռեալք յայս ՚ի հրամանէ տիկնոջ
Թագրին. զի յանդիմանեսցէ զնա ոչն. Այլ իբրև հասին ոտքս
եկեղեցին աշտիշատու, ուր կատարեր ոչն զխորհուրդ պատ-
արագի, կապեցան աներևոյթ զօրուք, և յետս ընկրկեալ
զարկան զգեաներն. և կոյրին անշարժ և անբարբառ:
Իբրև եկ ոչն արտաքս և եռես զնոսա այնպէս, եհարց ցնո՝
Թէ ոյք իցեն և զինչ խնդրեն: Այնոքա ասեն. մեք հրաման-
նաւ Թագուհւոյն եկաք այսր կործանել զեկեղեցիդ, և ապա-
նանել զքեզ. բայց զօրուքդ ոչ յայտնեալ ՚ի վէր մեր՝ կա-
պեաց զմեզ. և մեք ահա հաւատացաք, Թէ չշնարաւիւ նա է
ոչն. և այժմ կամք մեր կաշխանգեալ, և չկարեմք քնաւ շար-
ժել զմեզ: Յայնժամ քարոզեաց նոցա ոչն երկար բանիւք ՚ի
վէր հաւատոյ. և յաղթահարեալ Թիլ յորդորեաց զնոս. և աղօթս
արարեալ՝ վերծոյց ՚ի պատուհասէն: Այնոքա անկեալ յոտս սիջն՝
աղաչէին տալ ինքեանց դեղ ապաշխարութեան: Այն ոչն յետ
ուսուցանելոյ նոյ զոր պարտ էր հաւատալ՝ մկրտեաց զնոս հան-
դերձ կանամբք և որդւովք նոցին, և արձակեաց զնս: Այս
քան քուզանդայ Թիպետ և գտանի ինչ համաձայն բանից
պատմութեան խորենացւոյն, բայց այլազգ և խորդ հանդամա-

Ի՝ ՎԲ ԱՊՏԱՓՈՒԼԵՔ ՊԱՊՈՒԼԵՑԻՆ ԱՓԱՆԱՆՓԵՂՈՍԻ.

ԽԱ. (5) Պատմութիւնն՝ զոր ասանդէ մեծ ատենադպիրն ագաթան-
գեղոս իբր ականատես և ականջալուր՝ վ՚ը տրգատայ և վանն
լուսաւորչին մերոյ և վ՚ը Հռիփսիմեանց, այնչափ ստոյգ է,
մինչև ամ աղբաց մատենագիրք՝ որք ՚ի սկզբանէ հետէ գրե-
ցին զվարս աշխ հօրն մերոյ, զայն անտարակուսելի համարե-
լով՝ համաձայն նմին կարգեցին. որով և իբր հնքուխ զատու-
գութիւն նորին հաստատեցին։ Ա՚ԼՀև բաղումք յազգի մե-
րում, մինդ կորիւն՝ այր աքանչելի, և քերթուղահայրն մով-
սէս խորենացի, և զազար փարպեցի, որք մերձաւորք էին
ժամակ, զատուգութիւն պատմութեան նորին վկայեն. և յայտնի
ցուցանեն՝ թէ յաւուրս նոյ հռչակեալ էր այն գրուճած իբրև
ամենաստոյգ։

Ա՚անգի կորիւն իբրև յանտարակուսելի գրուճածոյ առնու
անտի հատուճածանինչ բանից՚ի բաղում տեղիս ըստ շարադրութեն.
և յարմարեցուցեալ իւրում պատմութեան՝ դնէ զայնս՚ի վարս
սրբոյն մեսրոպայ՝ վասն նմանութեան ինչ գործոց՝ որք եղեն յայնմ
ժամակ. զոր եթէ ոչ համարեր ճշմարիտ, ոչ առնոյր յաձախս։
՚Ի բաղումք բանից նոր լոյծ քեզ օրինակ այն, զոր գրէ ագա-
թանգեղոս. յերես. 350. և 351. վ՚ը լուսաւորչին. * Ա՚ռեալ
„ սէ զթագաւորն՝ . . . երթեալ հասանէր՚ի դարանաղեաց
„ գաւառն. ղն և անդ զանուանեալոց սուտ ածոց զբագինան
„ կործանեացեն . . . Ասկ երանելին գրիգորիոս վաղվաղակի
„ զաւետարանական արուեստն՚ի մէջ առնոյր, ձեռն ար-
„ կեալ զգաւառան՝ հանդերձ միամիտ ստացուածք թագաւորին,
„ դերել զամենն՚ի հայրենեացն աստանդելոց՚ի սեռեական դի-
„ ւանսն պատուաւորութենէն՚ի հնազանդութեն ծառայուե
„ քան մատուցանէր. և յորժամ՚ի նմա զգանն կենաց սերմա-
„ ներ, և զամենն յաձախաչուրթեն կրթեր. որ և յայտնի իսկ
„ քննակաց գաւառին՝ նշանք մեծամեծք երևեալ, կերպա-
„ կերպ նմանութիւնք դիւացն փախստական լինելին անկանել
„ ՚ի կողմանս խաղտեաց ։

Ա՚ւ ահա զայս բան և կորիւն գրէ պահմանք չարադրութեն
քառիցն՝ վ՚ը նմանութեն այնր գործոյ, որ եղև յաւուրս նոր,
յասելն վ՚ը սրբն մեսրոպայ՝ այսպէս. * Ա՚ռեալ այնուհետև ե-
„ րանելոյն զհաւատացեալս իւր՝ դիմեալ ինքաներ յանկարգ-
„ և յանդարմանն տեղիս գողթան. այլև ըստ առաջ լինելոյ նմա
„ իչխանն գողթան՝ այր երկիւղած և ածասեր ըստ աշակեր-
„ տաց հաւատոցն քրիստ. Ասկ երանելոյն վաղվաղակի զաւե-
„ տարանական արուեստ՚ի մէջ առեալ՝ ձեռն արկանէր ըն-

„ գա-

,, գաւառումն հանդերձ միտիոս սատարութեբ իշխանին • գե-
,, րեալ զամենեսեան ի հայրենեաց առանդելոց և ի սատա-
,, նայական դիւապաշտ մոլորութենն ի հնազանդութեն քրիս-
,, տոսեանեբ • և յորժամ ի նա զբանն կենաց սերմանեալ,
,, յայնսիսկ բնակչաց գաւառին նշանք մեծամեծք երև-
,, էին , կերպակերպ նմանութեբ գիւացն փախստական լինել-
,, լոյ՝ անկանէին ի կոզմանս մարաց ‖ •

Այս չէ մարթ կարծել , թէ այս բանք մուծեալ էցեն յայլոց ի գիրս կորեան՝ առեալ յագաթանգեղոսէ , և կամ ի գիրս ագաթանգեղոսի՝ առեալ ի կորեանէն • զի ահա և խորենացին իսկ աշակերտակից կորեանն վկայէ , թէ հանգոյն այնմ՝ որ եղև յաւուրս լուսաւորչին , եղև և յաւուրս մեսրոպայ վիշապին խրտոյ փախուստ դիւացդ , ևս • յասելն • գ • 47 • * Արթեալ (մեսրոպ) ի գաւառն գողթան բնակիչ՝ զմիաբանակեցութեան վարս ստացեալ • և որ ի նմա ղօղեալ աղանդն հեթանոսական թաքուցեալ յաւուրցն արդաւատոյ մինչև ցայն ժամս , և ապա յայտնեցաւ ի վառնարել թիւրութենն արշակու-
,, նեաց , զոյն երբարձ օգնականութեբ իշխանի գաւառին , ո-
,, րում անուն էր շամբիթ • ուր և նշանք ահագինք լինէին՝
,, ոչ առ սրբոյն գրիգորիւ , հալածական լեալ դևքն մարմ-
,, նաւոր տեսլեամբ անկանէին ի կոզմանս մարաց ‖ • Այս ամենայն ահա յայտնի համառաձայն է գրութեբ կորեանն և ագաթանգեղոսի • և ի ոյոյ իմն , թէ զհարդ կորիւն վն նմանութեբ գործոց եղելոց՝ պահէ զկարդ շարադրութեբ ագաթանգեղոսի • Արդ և անտարակոյս հաստատի , թէ կորիւն քննեցեալ էր զգիրս ագաթանգեղոսի , և հաւանեալ էր ընդ այն իբր ընդ հաւաստատագրութիւն գրութեբ • մանաւանդ զի ոչ դոլով և հեռի ժամանակաւ՝ նաև յաւանդութեբ գիտէր ըզհաստատութեբ գրութեբ նորին • Այս մարթ իսկ է ասել , թէ սա ինքն կորիւն իցէ թարգմանեբ զգիրս ագաթանգեղոսի ի հայն ի յոյն , և կամ ի յունէ ի հայ •

Սոյնպէս և խորենացին աշակերտակից կորեանն քաղեբ հաստատէ զստուգութեն գրութենն ագաթանգեղոսի • քզի նախ ի բազում տեղիս առաքէ զընթերցողն ի գիրս նը • յասելն , գէր • Բ • գլ • 64 • 71 • 76 • 77 • և 80 • թէ զայսցանէ ուսուցանեն կիսպատմէ ագաթանգեղոս աղող քարտուղարն տրդատայ • Այս դրեբ զոր միանգամ գրէ խորենացին հաստատեալ քանից ագաթանգեղոսի , ի նոյն տեղիս նաև յայլոց ճշմարտից մատենագրաց ի մէջ բերէ զայնպիսի քանս , որք ամենեքեան հաստատեն զպատմութեն ագաթանգեղոսի • ոմն է տեսանել , Բ • 77 • ուր բերէ զպատմութեն ծննդեան և մանկեան լուսաւորչին և որդւոց նը ի Թղթոյ արտաքսեալ եպիսկոպոսի , որ էր մին

յորդւոց անտի քրմաց՝ որք ձեռնադրեցան ի սըկզբանէ լուսաւորչէն եւ ի սկիզբն Տիրն Հայոց. և ահա այն բանք արտիքեայ եւ գաղիր առաջի ստուգեն զեղանակ պատմութեանն ագաթանգեղոսի ի վերայ սկզբան գրիգորի և որդւոց նորա. և ապա ի վերջոյ իբր ի լրումն այնոց բանից առ ագաթանգեղոս առաքէ խորենացին զընթերցողս։ Արմատ և. Բ. 72. գնալ ի 76. մերձ խորենացին բաղում լինէր ի պատմութիւն պերմէ լիանեայ եւ գիկսի, որ էր աշակերտ որոգինեայ, և ժամակից տրդատայ. և ահա նաև այն բանք բաղմօք հաստատեն՝ զորս միանգամ գրե ագաթանգեղոս զտրդատայ և զքաջութեանց նորա, եւ զմահ ուսանել հօր նորա խոսրովու։

Եւ յառնելոյ գրել խորենացւոյն. Բ. 72. թէ ոչ միայն ի տացունց, այլև յոյոց պիւճանտական մատենագրաց յունաց պատմեմք զտրդատայ, յասելն. * Որ լինէր ի թիւրութեանէ տրդատայ և յետ նորա՝ ոչ հեղգութիւն և անզգուշաբար վերխոսել, և ոչ կամաւորս սխալանօք ի սմա յարմարել բան, այլ՝ որ լինէր ի յիշատակաց պիւճանտական մատենից յունաց. խակ ըստ նմանեացն ասէ և որ լինէր ի համբաւուց արանց իմաստնոց և հնախոս սիրատանից առուգապէս տեղեկացեալ՝ արդարաբար քեզ զայս ցուցից ||։ Արդ՝ որովհետև խորենացին այսչափ զգուշաւոր քննութիւն գրեաց զտրդատայ և զլուսաւորչէն մերմէ, եթէ տեսեալ էր լինէր ի գիրս ագաթանգեղոսի անհամաձայն իւրում հետաքննութեանէ, ոչ առաքեր զընթերցողն ընթերնուլ զդիրս նոքա, և զլուծիչն տեղեկանալ ի նմանէ։ Այսուհետև ի մէջ բերել զվայելուչահիւս ձառ նորին խորենացւոյ, զոր յօրինեաց նա ի բանից ագաթանգեղոսի և լուսաւորչէն նորա ի վերայ սքանչելի հռիփսիմեայ. և խօսեցաւ զայն առաջի բազմութեան վիրապային հայոց յաւուր ածման նորին հռիփսիմեայ. ուր և յաւուր առնել, թէ այս ամ * առնեցաւն

,, յայտնի է ||։

Ազար փարպեցին և ամենայն խորենացւոյն բազմք գոլէ զագաթանգեղոս և զպատմագրութիւն նորա. և կոչէ վնաս առուգաբան ի գրոճածս. և որ մեծն է, նաև զկարգ պատմութեանն հատանոտիւք քաղէ. և գրէ այսպէս. * Սկիզբն առաջին գրոց պատմութենն հայոց. որում սկիզբն արարեալ պատմեաց առուգիւք այնր երանելի ագաթանգեղոս, ի մանուկն արուեստնայ յոտատաշրէ որդւոյ առանայ քառնաւոր առաքիչացն. և զդարձ ծիս հայոց յանդիմութիւն կռապաշտութեան յաճախութիւն. Ջմարտութիւն ի ձեռն սքանչելագործութեան գրիգորիսի. յորոյ անուն և զգիրսն անուանեալ կոչեն գրիգորիսի .... Ընդ քաղաւմ ձառս մատենից առաջնոց պատմագրացն հայոց անցն. յորոց լսեալ յերկար ըն-

,, թեր-

„ Թէրցողութիւնէ զսի ՚ի նմանէ զժամանակաց և զդարուց հին
„ հայոց քաղմազիմի յեղափոխութիւնս , յաւոյգ և յանախալ
„ կարգաւորութիւնէ առաջինն գրոցն , զոր յարմարապէս պատ-
„ ւալ ծանոյց մեզ երանելին ագաթանգեղոս , այլ բանի-
„ բուն գիտութիւնէ , և լի ամ հրահանգիչ . ոտեգաբան ՚ի
„ կարգադրութիւնէ ձառից , և յարմարագիր ՚ի պատմութիւնս
„ առաջաբանի իւրոց :
„ Սա գնահատումն ընդրութիւնէ արշակունոյն արտաւանայ , և
„ զգօրանալն սահրատունոյն արտաշրի որդւոյ սասանայ՝ ոտե-
„ գապէս յօրինուածով կարգեալ գրոշմեաց . զբինախնդրու-
„ թիւնն խոտրոխ , և զտարակուսանս գոռոզացեալ սահրատ-
„ ւոյն . զխորհուրդն և զհոսումնական գտողի հնարս յաղագս
„ մահաւն խոտրոխ . զխորամանկութիւնն զմոռածութիւնն ա-
„ նակայ , և զպատուն ՚ի նմէ զնորոն խոտրոխ՝ նենգաւոր
„ խաբեութիւնէ . զմատնութիւն յայնմ հետէ զոս հայոց ՚ի ձեռս
„ ընդրութիւնէ օտարի . զիսախտացանելն գայեկացն զորդիս
„ խոտրոխ յօտարութի առ ՚ի յապրումն . ՚Ո՚. հակայաբար միւս-
„ անգամ զդարձն որդւոյ , և զյաղթօղ մարտիւ ունելն
„ զնորոյն զնախնեացն քաջաբար զընդրութինն . զդիմելն ՚ի
„ նմա սպին գրիգորի . զհետ պաշտաման առնելիւ զնահա-
„ տակութի նորին սպին . և թէ որպէս տարաւ անպատուին
„ և անբաւ բեմ չարչարանացն . զառաւելապէս օգնակա-
„ նութին քան , որ ցուցաւ ՚ի վերայ սպին՝ ՚ի հիացումն դեռևս
„ մոգոցն մարդկան . զհամբերութի տևողութենն այնչափ
„ ամ ՚ի վիրապին՝ ըստ կանխագէտ անտեսութենն վերնոյն , որ
„ պահեր զնահատակն ՚ի գործն հայոց . ՚Ո՚. եկս նոր կուսա-
„ նացն ՚ի հռոմայեցւոց քաղաքէն , և զհեղումն մարտիրո-
„ սական արեանն ՚ի վաղարշապատ քաղաքի՝ յոռոգումն գա-
„ լարութենէ գօսացելոց գիոց մարդկան . ՚Ո՚. եկն սպին գրիգո-
„ րի ՚ի խոր վիրապն , և զհանումն հայաստան աշխարհիս ՚ի
„ խաւարէ անգիտութենն՝ յաճախին ազգայնոցն լոյս . զյոր-
„ դորումն յայնմ հետէ վիճակութենէ կենաց ծիս հայոց . ըզ-
„ կատիս սկզբանէ գոյից , զոր փրկիչն ընդ ՚ի ձեռն մեծի
„ նահատակին գրիգորի՝ բարեխօսութենն ևս նոր կուսանացն՝
„ ծաւալեցոյց յաճիս մերում աշխարհի եկեղեցեաց . զպայծա-
„ ռութի քահանայից . զնուէրս բազմամբոխ ժողովրդոց ՚ի
„ տօնս փրկչին և ՚ի ժողովումն յիշատակաց սրբոց : ՚Ո՚. այս ամ՛,
„ ևս առաւել քան զսոյն գիտութի , յիւրում հաստատուն և
„ անսխալ կարգաւորութեան՝ պատմեաց մեզ երանելի այրն նոյ
„ ագաթանգեղոս ‖ : Այս են բանք գաղտնի վարպետացն՝
քաղեալ յագաթանգեղոսէ ՚ի գոյց ոտեգութե բանից նո՛ :
Այժ գրել սա ինքն վարպետին ՚ի մէջ բերէ գտեսիլ սրբոյն տահա-

կայ պարթևի, յորում յիշատակի և տեսիլ լուսաւորչին • և ա-
պա յընթացս բանից իւրոց պարզելով առաջի դնէ ինչ ինչ ՚ի
տեառնէ լուսաւորչին՝ հետևելով պատմութ ագաթանգեղոսի ։
Ա՚րդ՝ եթէ ՚ի ձմկա փարպեցւոյն կայր տարակոյս ինչ ՚ի վէր
գրութ ագաթանգեղոսի, սա ինքն փարպեցին ոչ միայն ոչ հե-
տևէր գրութ նր, այլև պախարակէր իակ զայն • ոչ պախա-
րակէ զբուզանդայն • քանզի բազդատութ ՚ի մէջ բերէ զբու-
զանդայն երկաքանչիւրոցն, զագաթանգեղոսինն գոլէ՝ ստուգա-
բան կոչելով • իսկ վ՚ն բուզանդայն ասէ, թէ գիրք նր աղա-
ւաղեալ են ՚ի տգիտաց և յանհաւատարիմ մարդոց ։

Ա՚յսոցիկ նախասացելոցդ երից վ՚ճռից մերոց վկայութիւնք
յայտնի ապացուցանեն, թէ գրութ ագաթանգեղոսի է ճըշ-
մարիտ և անտարակուսելի • որովհետև՝ ոչ ասոյաք, մ՚ք մեր-
ձաւոր էին ժամանակաւ նմին ագաթանգեղոսի • ուստի զի
տեսեալ ևս էին՝ գ՚նեն կորիւն և խորենացին՝ զայնպիսի ան-
ձինս, որք ականատես լեալ էին ագաթանգեղոսի և տրդա-
տայ • քանզի ՚ի մահուանէ տրդատայ, այն է ամ ՅՀԲ •
մինչև ՚ի ձմկա գիւտի հայկական գրոց անցին ամք իբր վաթ-
սուն և հինգ • յորում ժամկի սկսաւ ծաղկիլ կորիւն, և յետ նր
աշակերտակից նորին խորենացին, և յետ նր փարպեցին ։ Ա՚ւ
յայտ է թէ յայն ձմկա կային ՚ի հայաստան ուղղափառեայ
և իննամեայ մարդիկ բազում, գուցե և հարիւրամեայ ևս,
որք ՚ի պատանեկութէ իւրեանց տեսեալ էին զագաթանգե-
ղոս և զտրդատ ։ Ա՚րդ՝ եթէ ՚ոք այսչափ մօտ էին ժամկաւ,
ապա ՚ի գոլել ՚ոց զգրութ ագաթանգեղոսի և ՚ի ստուգել
զայն՝ համարին հաստատուն վկայք ճշմարտութ բանից նո-
րին • ոչ աւ մանաւանդ իրս յոմնոյ՝ հաստատուն վկայ համա-
րին բանից եւսեբեայ կեսարացւոյ՝ ոսկրատ, սոզոմենոս, և
թէոդորետոս • որք նոյնչափ ժամկաւ մերձաւորք էին ։ Ա՚ՆՑ և
զրՀլ վկայութի այդոցիկ վ՚ճռից մերոց, զի էին ոք աշակերտք
սրբոյն սահակայ և սրբոյն մեսրոպայ, որք ծնան յետ իբր քսան
ամաց մահուն տրդատայ, և վախճանեցան ՚ի ծերութ, և
էին քաջ խնդամուտ ամի՝ որք անցին յաւուրս տրդատայ և լու-
սաւորչին ըստ աւանդելոյ յագաթանգեղոսէ • և չ՚ մարթ ա-
սել, թէ այլազգ ինչ աւանդեալ եղև ՚ի սմ՚ն քան զոր աւան-
դեալ էր յագաթանգեղոսէ ։

Ա՚ղաւմ և զայլ մատենագիրս հայոց, որք միաբերան հաս-
տատեն զստուգագիր լինել նորին ագաթանգեղոսի • յորոց
միջի երևելի են յովհաննէս կաթ՚ղիկս յինեաց՚ի գարուն, ստե-
փաննոս ասողիկն և ՚ոք գրիգոր նարեկացի ՚ի տասներ՚դ գա-
րուն, գրիգոր մագիստրոս ՚ի մեսասներ՚դ դարուն, և ՚ոքն
ներսես շնորհալի յերկոտասաներորդ դարուն ։ Ա՚ղաւմ ՚ի մէջ

քերել զբաղմապիսի Ճառընտիրս, ևս և զյայսմաւուրս հայոց ։ օգոստ · 11 · և 14 · և նոյեմբ · 18 · և 29 · նաև դեկտ · 1 · և սեպտ · 30 · ևն · և զայլ երգս շարականաց · ըստ որս և անձինքն հռիփսիմեանց յօրինեալ ՚ի մեծէն կոմիտասայ կճղակեն յեօթնեղօրդ դասուն յաւուրս հերակլի կայսեր ։ Ի՝ստ այսմ և զենօք ենիկս ասորի ծիկակից ագաթանգեղոսի՝ մեծարանօք խօսելով զնմէ՝ ասէ, թէ արար յաւուրս քան զիս զպատմութիւն տրդատայ · և քնաւ իւիք կասկած ոչ տայ զգրուածոց նմա ։

Ե՛ դրէ՛ ՚ի ծիկս ՚երց վարդանանց ՚ի գրել ենիկսայ և նախարարաց հայոց թուղթ առ կայսերն Թէոդոս փոքր՝ առաքն գնեն յագաթանգեղոսէ, թէ զիւրդ տրդատ ՚ի տղայութենէ փախուցաւ ՚ի հռոմ, և թէ զիւրդ ՚ի ձեռն կայսեր կարգեցաւ թագր, և թէ զիւրդ գնաց առ նմին սեղեւտրոս, ևն · զոր որում առանդն նմին եղիչէ աշակերտակից կորեանն և խորենացւոյն · զոր ոչ համարձակեմն գրել, եթէ ոչ անտարակոյս համարիմն զբանսն ագաթանգեղոսի ։ Ի՝ վէր այսր ասմի նաև արտաշիր երկդ արքայ պարսից որդի շապհոյ երկայնակեցի ՚ի թուղթն՝ զոր գրեաց առ վռամշապուհ արքայ հայոց՝ համառօտիւ ՚ի մէջ բերէ զպատմութիւն ինչ, զոր գրէ ագաթանգեղոս՝ վ՚ը սպանանելոյ անակայ պարթևի զխոսրով, և վանդարձուցանելոյ սնի գրիգորի զհայս ՚ի հաւատս ՚քի՝ քաջիւքլով զարդատ · ոնդ է տեսանել ՚ի գիրս խորենացւոյն · գ · 51 ։

Ի՝ակ յայլոց աղբեաց թէպետ ոչ գտանիմք զոք (հայելով յայժմու մնացեալ գիրս նմ) , որ յայտնէ յանուանէ յիշեացէ զագաթանգեղոս, բայց տեսանիմք՝ զի ըստ ամի համաձայն նմին ագաթանգեղոսի գրեն ՚ի վ՚ը տրդատայ և լուսաւորչին մերոյ · յորոց միջն երևելի է սիմէոն մեծատիրացուէս յոյն մատենագիր՝ հռչակաւոր պատմիչ վարուց սրբոց · յորմէ առեալ գրէ լաբրենտիոս սուրիոս լատին անուանի պատմիչ սրբոց ՚ի հատորն · է · սեպտ · 30 ։ Ոտանի և առ լատինս հին հեղինակ ոմն անանուն, զոր ընդ անծանիմաս կոչեն, երևեալ իւր յինքնէդ գաղտն · որ և բազ առ բազ համաձայն ագաթանգեղոսի գրէ · որոյ հին օրինակ գրոցն գրեալ ՚ի մագաղաթեայս գտանի ՚ի հռոմ՝ ՚ի գրատանն պետրոսեանոյ ։

Ե՛ զստուգութենէ բանիդ ՚ոց հաստատեն նաև ազգի ազգի յայսմաւուրք յունաց, և զանազան վկայաբանութիւնք ասորւոց, եգիպտացւոց, եթէոպացւոց, քաղդէացւոց և արաբացւոց, և գրեթէ ամ ազգաց քրիստոնէից ։ Ո՛ր և հռչակ հարկանեն բազմադիմի գովեստք և երգք արարեալք յայլևայլ ազգաց՝ ՚ի յունաց և ՚ի լատինացւոց՝ ՚ի վ՚ը լուսաւորչին մերոյ · ընդ որս գան և գովեստն այն՝ որ ասի արարեալ յոսկեբերանէ յունարէն, և թարգմանեալ ՚ի հայս ։ Ի՝ տղուժ ՚ի մէջ քե-

րել զգրուածս նոր հեղինակաց • որոց միւն Թարգմանեալ իսկ
է ի հայս, որպարեալ յանառնէ կրօնաւորէ բռնուկեանց ի ինգ-
րոյ թէոդորիկեայ աթբատուհոյ վանից սրբոյն գրիգորի՝ որ ի
հնէատօլիս • որոյ գրութիւն հաստատ, և վկայութիւք բազմաց
առաջ զպատմութիւն ագաթանգեղոսի, որ ի վէր տրդատայ
և լուսաւորչին և հռիփսիմեանց ։

Այսմ ամի մնրթ է վկայ կոչել և զյովհաննէս ստիլտինկ, (զոր
յիշեցաք ի ծանօթ • լի • (1) • երես • 639 •) զմին ի պոլսեանտեանց •
և զմատեան քննուէ նէր առնուլ ի ձեռին իբր փող յայտարար
հաստատուէ բանից ագաթանգեղոսի • քզի սա ինքն ստիլտինկ
թէպէտ և յիմիք իմիք անհաւան ցուցանէ զինքն ընդ բանս նէր ,
բայց նովին իսկ վկայէ ձշմարտութիւն նորին • և թէ զի՞րդ ,
ասասցուք ինչ աստանօր ։ Առեալ առաք զյունարէն օրինակ
գրոցն ագաթանգեղոսի ի հին ձեռագրաց , Թարգմանեալ
ի լատին • և ապա գտեալ և զպատմութիւն անտիմոսի լատին
մատենագրի , զոր վերագոյնդ յիշատակեցաք , և համեմա-
տեալ զայն ընդ պատմութիւն մատաթիրաստեսի և այլոց հեղինա-
կաց և յայսմանաւրացս այլոց ազգաց , և ընդ բազմապատիկ
բանս գովեստից , նախ զարմանայ յոյժ , և ապա տարակու-
սի յանձն իւր ։ Զարմանայ ընդ համառձայնութիւն այնչափ
բազմութիւն վկայից ընդ բանից ագաթանգեղոսի ։ Տարակու-
սի , զի ի մէջ այնչափ վկայից ոչ գտանեմ ասէ զոք մերձաւոր
ժամանակ նմին ագաթանգեղոսի , * և կամ քանի մի գարուք ընդ-
հնէ ‖ • որպէս գրէ ի համարն • 90 ։ Այլ եթէ գտաներ , գնաւ իսկ
չտարակուսեր ի վերայ գրոցն ագաթանգեղոսի • որով ահա
յայտնի ցուցանէ և հաստատութիւն վկայէ , թէ ինքն հաւանն
է և այն , միայն թէ գտցի որ վկայ մերձաւոր ժամանակ ։ Ընդ-
ոմն յայտնի տեսեր ի վերոյ , ոչ մի ևեթ , այլ բազում վկայք
գտանին մերձաւոր ժամանակ առաւել քան զոր դա պահանջէ , և
բանիւք խրենից հաստատեն ամենք զգրուածս ագաթանգե-
ղոսի • ուրեմն այսուհետև անտարակոյս մնայ ստիլտինկ ընդ-
դէմ • և իւրով անտարակուսութիւնք լինի և ինքն վկայ ստու-
գութեանց ագաթանգեղոսի ։

Այլ ունի ստիլտինկ և այլ տարակոյս • զի ասէ ի քէմ տեղիս ,
թէ զայդոսիկ՝ զորս գրէ ագաթանգեղոս՝ ոչ գտանեմ ի գիրս
հռոմէացեացոց և յունաց ։ Այլ այսմ տարակուսանացս ինքն տայ
լուծումն • զի յերես • 310 • գրէ և խոստովանի , թէ պատմիչք
հռոմէացեացոց և յունաց ոչ մարթացան գրել՝ որ ինչ գործե-
ցաւ յաւուրս լուսաւորչին և տրդատայ • աւասիկ և բանք նէր •
* Որ ինչ միանգամ անցք անցին ասէ ի մեծն հայս յերկրորդ և
,, ի երրորդ գարուն , սակաւ փոյթ կալան ի գիր արձանա-
,, ցուցանել մատենագիրք յունաց և լատինացւոց • որք ուրեք

,, ուրեք հանապօտիւ ևեթ յիշատակեցին զԹագաւորս հայ-
,, աստանեայց , ՚ի պատմէլն՝ եթէ հայք հանդերձ հռոմէացս-
,, սովք սպրին պատերազմ ընդէմ պարթևաց , և ապա ընդ-
,, դէմ պարսից . և կամ եթէ երբ ընդ սոսս միաբանեալ՝ ընդէմ
,, հռոմէացեացդ զինեին . և կամ եթէ Թագ. ՚ի կոյսերաց
,, ընդունէին ։ ՚|։ սակս այսպիսւոյ առաքից դէպ լինելոց նոյ առ-
,, նել լինչ երբեմն յիշատակուի զհայոց . այլ զառանձին գործս
,, հայաստանեայց հաղիւ երբեք յիշատակեցին . և այն՝ կարճ
,, ՚ի կարճոյ ։ |։ սակս յայսմանէ մնալոյ է խնդրել , եթէ ՚ի
,, դարձի Թէոդոսեայ հայոց ՚ի հաւատս՝ բազում գործք գոր-
,, ծեալ լուեն՝ երևելիք և հրաշալիք , զորս ոչ յոյնք և ոչ լա-
,, տինք ՚ի գիր անյուշին . նաև ոչ իսկ գիտակ եղեն այնոց ։
,, |։ վասն այսր պատճառի մեզ նոր իմն և անյուր և անհաւա-
,, տալի երևին այնոքիկ յառաջին տեսութենէ անդ . որոց ՚ի
,, գէպ է լինել ՀՀնարիտ ։ ՚|։ մին իրի՝ Թէպէտ և այսպիսի լինէ
,, բազում գԺողովրդահաւատալի գոտանին ՚ի պատմութենէ գոր-
,, ծոց սիրն գրիչ որի , բայց ոչ պարտ վարկանիմ , Թէ իսկ և
,, իսկ զայն ամ արժան լոյծ կեղակարծ գաւել ։ ՚|։ Հա այսու
քանիւ ինքնին կարէ լուծանել առիլտինկ և զայն միւս ևս
գլուխ տարակոյս ։

ՀՀայ ՀՀզի ՚ի գրել նոքա զքննուն իւր՝ չև էր լուծեալ զտարա-
կուսանան , ըստ այնմ տարակուսանացդ գրեաց զոր ինչ և կա-
րաց . ՚ի սեպ . 30 . հատոր . Ը . յերես . 295 . գնալ ՚է 413 ։ ՚|։ Ե
սակայն՝ ոմն յայտնի երևի ընդՀերցողաց , ոչ եթէ զհինականն
ինչ պատճառ ՚ի ձեռին ունելով , այլ միայն զսեպհական
գաւտունս մտաց իւրոց առաջի դնելով , յասելն ՚ի քէմ առ-
գիս , Թէ ինձ ոչ երևի այդ հաւանական . և Թէ՝ ոչ կասկի
ատոյգ համարիլ . և Թէ՝ յիրաւի ՚է դէպ էր լինել այդմ , սա-
կայն եթէ այսպիսի իմն օրինակաւ լինէր՝ գիւրագոյն ևս լի-
նէր . և Թէ՝ միթէ այլազգ ոչ կարէր լինել . ևն ։ ՚|։ Ըդ՝ յայտ
է Թէ այսպիսի բանք ոչ են փաստք ինչ , և ոչ իսկ իւրեք զո-
րեն ընդէմ ՀՀնարաւորեն . ապաԹէ ոչ՝ մնալոյ էր ըստ այդմ
զնամ՝ որ լինչ պատմի ՚ի գիրս՝ մերժել . ասելով , լինձ ոչ Թուի
հաւանական . ևն ։

ՀՀայց կարեր այդպէս խօսիլ առիլտինկ . զի միանդամ պաշա-
րեալ ՚ի տարակուսանաց անտի՝ նոավաւ առաջնորդի . որոյ վճռ
փոխանակ զմԹինան պարզելոյ՝ զպարզն մՀնաղուցանէ . և
վինկ զանորոշ բանն ՚ի ատոյգ միտս վերածելոյ , որպէս օրէնն է
ուղիղ քննչաց առնել ՚ի վերայ գրուածից նախնեաց , սա զորոշ
բանն ջանայ երկբայական ցուցանել . և ՚ի վէր ձևիկ իրաց
քննութիս առնել առ ՚ի լնուլ զդործ պաշտամանն իւրոյ . զր ,
յասել ազաՀանգեղոսի ՚ի յուՀարկն օրինակին . ՚ի հմատն . 7 .

թէ արտաւանն աղքայ լուծեալ զպատգամ պարսից ընդեմ իւր,
* խոնարհեալ զգլուխն՝ զօգուտ ժամն հայեր՝ ի գետին. քզի
,, տեսաներ՝ զն հասեալ է նմա վտանգ անկանելոյ ի թիշրու-
,, թէ ։ քննուն առնէ՝ ի վէր՝ որ ստիլտինկ. * այսպէս երկա-
,, րաժամ լուռն ասէ արտաւանայ ոչ է ձշմարտանման ։ Ա՛րդ՝
յայտ է թէ՝ ստիլտինկ եթէ թողեալ էր՝ ի բաց՝ ի մտաց իւրոց
զտարակուսանան, արդարև ոչ ասէր ձշմարտանման, այլ՝ ձըշ-
մարիտ. քզի ինքն իակ գիտէ, թէ յափշտակուն կրից երկիւ-
զի և տրտմութեբ՝ ի ստատկանալն ոչ միայն տայ օգուտ ժամն
յերկիւղ հայիլ, այլև շնճարիլ և պապանձիլ իակ. որպէս յայտ է
՝ի քշմ փորձոյ. զորոյ զտառաւելն և տեսեալ և ընթերցեալ է
ստիլտինկ՝ ի գիրս յոբայ. Ե. 13. ուր ասի՝ թէ տեսեալ բա-
րեկամացն զանհնարին հարուճածանդր, և կացեալ առաջի զեօթն
տիւ և զեօթն գիշեր՝ ոչ խօսեին ընդ նմ։ Թէ զայս ևս ձշմարիտ
չհամարիցի ստիլտինկ, այլ՝ ձշմարտանման, զինչ ասիցէ՝ ի
լսել զաղաղակ երկուց ժամուց՝ ի բազմութէ եփեսացւոց յու-
զելոց՝ ի կրից վրէժխնդրութեբ. որպէս պատմէ նոքն ղուկաս՝ ի
գործս առաքելոց. ԺԹ. 34. յասելն. * միաբարբառ եղեալ
,, յամենեցունց իբրև ժամն երկուս աղաղակել, եթէ մեծ
,, է արտեմիս եփեսացւոց ։

Դրձ՝ի պատմել ապաթանպեղոսի, թէ դիոկղետիանոս խնդ-
րեաց զԽրիստոսիմ վասն կնութեբ, զարմանայ ստիլտինկ. զի-
արդ մարթ է ասէ այդմ լինել. ոչ ապաքէն ասէ՝ * դիոկղե-
,, տիանոս կին ունէր զկրիակէ յատաջ քան զկայսերուէի իւր.
,, որ և ոչ երբեք ուղեցաւ՝ ի ննմ ։ Եւ յաւելու ասել, թէ
այն քանք * ոչ հաւանձայնին ծանրութեբ կայսերն դիոկղե-
,, տիանոս ։ և թէ՝ * ամենևին օտար են (այդպիսի իրք) ի
,, բարուց նր ։ Ի՛չ ահա և զայս՝ ի պաշարմանէ մտացն ասէ
ստիլտինկ. ապաթէ ոչ՝ զինարդ մարթ էր նմա զայդպիսիս
խօսիլ. զի ինքն գոլով տեղեակ պատմութեբ՝ գիտէ և հաւա-
տայ, թէ ամանք՝ ի քրիստոնէայ (թէպէտ և արատ-
քոյ օրինաց) ՝ի կենդանութեբ կանանց իւրեանց առին զայլ
կանայս. որպէս ցուցանեն պատմութիքն նոցա. և եթէ այսմ
հաւատայ, կարէր ևս հաւատալ՝ թէ հեթանոս կայսրն դիոկղե
տիանոս, որ զայնչափ չարիս գործեաց՝ ըստ աւանդելոյ վկայա-
բանութեց նմ աղգայ, կամեցեալ իցէ առնուլ զայլ կին։
Դրձ՝ յասել ապաթանպեղոսի, թէ սքեն գրիգոր ոչ կամե-
ցաւ առնուլ զաղնիւ հանդերձ՝ զորս մատուցին մեծամեծք
հայոց՝ ի պատել զմարմինս կուսանաց, զի չեւս էք ասէ սրբ-
բել ակրատութէ, ստիլտինկ իբր մեծ ինչ՝ ի վէր քերէ. * զի-
,, արդ ապա ասէ զարկեցան յորս ամիսիսեաց զմարմինս սքեցն,
,, նոցին իակ հրամանն ետ շինել. ահա ասէ այսու օրինակաւ

,, հե-

,, հեղինակն երբ ընդարձակուածին տայ ուշիմութիւնէ իւրում ,
,, համանգամայն զհակառակնա քարքառի ։ ‖ Ահա առտեղն
գա ինքն տիլտինակ ևս ընդարձակուածի կամելով տալ իւրում
ուշիմութենն՝ ընդդէմ Ճանաչմանն իւրոյ քարքառի · զի ինքն
գիտէ՝ թէ ոչ նոյն բան է Հանդերձից և արկեղաց · զի այն
Հանդերձք անընդհատս՝ ի մարմնի սքոց ունէին հագիլ · զոր
անդադարձ վարկաւ սքոյ լուսաւորչին · իսկ արկեղք՝ միայն
արտաքին պահարանք էին։ Ոչ զայս , զի և ինքն իսկ տիլ-
տինակ չառնու յանձն , թէ լուսաւորչին ինքնին հիւանդի ա-
րարեալ՝ չինեացէ զարկեղան ։ Այլ թէ պատմեալ էր ագա-
թանգեղոս , թէ լուսաւորչին ինքնին շինեաց յայնժամ տիլ-
տինակ յիրաւի ոչ Համարէր զագաթանգեղոս հակառաքան , և
սակայն ամենևին անտեղի Համարելով զայսպիսի ինչ՝ խափա-
նհաւան գտանէր ։ Այսին նման են և այլ ևս քննութիւնք սո-
րա , զորս ձանձրոյթ լինի յառաջ բերել ։

Այլ գիտելի է , զի ուրեք ուրեք այլազգ ևս առնու տիլտինակ
զբառս ագաթանգեղոսի , Հայելով միայն ի յունարէնն · զի
ոչ ունէր զՀայերէնն · և լսար այնմ ի տարակոյս արկանէ
զանձն , և ի պէսպէս քննութիւս դառնայ · որ , որ գնէ ի Հայ-
երէնն՝ թէ լուսաւորչին կարգեաց ընդ այլ դասս կրօնաւորաց
և անապատաւորաց՝ նաև * քարանձաւատունս ‖ · կամ՝ ըստ կո-
րեանն՝ * անձաւատունս ‖ · տիլտինակ ի յունական օրինակէն
իւրմէ Թարգմանէ * սիւնակեացս ‖ · ի Համաբն · 154 · և ընդ
այս տարակուսի , և ի բազմ Հոգս արկանէ զանձն · զի ոչ գտա-
նիւր ասէ սիւնակեաց ոք նախ քան զՅովհ սքոյն սիմէոնի սիւ-
նակեցւոյ , որ բազմ ամօք յետոյ երևեցաւ քան զսքն լուսաւո-
րիչն և քան զագաթանգեղոս ։

Այրձ՝ որ գնի ի Հայերէնն , ասել գիտակ եղեսիանոսի ի Թղթի
իւրում , Թէ * ոչ գտաւ նման նմա (այր Հռիփսիմեայ) ի մէջ
,, յունաց աշխարհին ‖ , որով իմացեալ լինի անդ ՅՈՐՈՒԹԵ
Հռոմէացեացս , տիլտինակ Թարգմանէ · * ոչ գտաւ նման
,, նմա ի բովանդակ յոռիայ գաւառի ‖ · ի Համաբն · 68 · սոյն-
պէս Թարգմանէ և ի Համաբն · 77 · և տարակուսի ընդ այս և
զարմանայ , իմանալով այսու պղծեիա մանաւանդ գաւառ ա-
ռանձնակին ասիոյ ։ Նոյնպէս ի Համաբն · 22 · ուր ի Հայերէնն գնի ·
* Թագաւոր յունաց ‖ · Թէպէտ և ուղիղ Թարգմանէ , * ունքս
,, կռէտացուաց ‖ · բայց ի քննին մտանել , Թէ ոմն ինչ սա՝ որ
Թզեր յունաց կոչի · զի առանձին Թզեր ոչ գոյր ասէ ի վերայ
յունաստանի՝ բաց ի կայսերէն Հռոմայեցւոց · բայց յայտ է
յայմ մատենագրայ մերոյ՝ Թէ Թզեր յունաց ասելով՝ պարզա-
պէս իմացեալ լինի ի Հայս նա ինքն կայսրն Հռոմայեցւոց ։
Այարձեալ՝ ուր ի Հայերէնն գնի , Թէ տուրբ լուսաւորիչն

* առ-

* առնոյր այնուհետև և զարշակունեացն տոհմն որեւաթս , ՚ի
„ վայրս վիշապս պատրաստեցուցաներ ‖ , սակայնիկ ՚ի յոմնա-
կանէն Թարգմանել այսպէս • * սկսեալ այնու հետև հրամայն
„ եւ ազգին (կամ տոհմին) սարակինոսաց պատասխանի ՚ի վայրս
„ վիշապս ‖ • ոչ է տեսանել ՚ի համարն • 132 • և զարմացեալ
կայ ՚ի սոյն՝ սկսանի վիճել , թէ սիրելուսաւորչին ոչ վիշապայ
ի կողմանս Հին սարակինոսաց • և հուսկ յետոյ յաւելու ։
Թէ գուցէ քաղդ սարակինոսաց՝ պատուն լինել սակաւասեանց •
որք էին ասէ քննակիցք միոյ կողմանն Հին Հայոց մեռ յաղ-
ուանս ։ Այսոյ ինքնին իսկ յայտ է ՚ի բանէ սնոյն ազաթանգե-
ղոսէ , Թէ խօսի նա անդ ՚ի վէր արշակունի տոհմին Հայոց •
զի սնանիքսպասս յարեւ անդամսոր ՚ի նմին • * որոյ առաջնոյն
„ որդւոյ սնուն • որ և Թիգրն իսկ էր ասմ տասեր իւրով ‖ ։
Վարձեալ , ուր գնի ՚ի Հայերիցն՝ ասես ՚ի յաւնարիցն • ՚ի հա-
մարն • 128 • ետ • տուն Թարգմանչ , որով իմացեալ լինի Թար-
գմանեան ազգս Հայոց , սակայնիկ զգուշանալ Թարգմանեալ
զնոյն և ՚ի լատիներէն ըստ լատինին , սարակուսի՝ Թէ զինչ
իցէ այն • և ապա մեկնաբանել լինել մանաւանդ ինչ տեղի , որ
լեալ իցէ կալուածատէր ուրուն Թարգամ կոչեցելոյ ։ Վասն
այսմ է տեսանել և յայլս ։

( ) այս մի ինչ ՚ի վախճանին արժան համարիմ ծանուցանել •
զի սակայնիկ որովհետև չունէր ՚ի ձեռին զպատմագիրս ինչ
Հայոց , յորոց սպարզիւր գրուածի ագաթանգեղոսի , և ոչ ևս
տեղեկանի ինչ Հայկական բարբառոյ և ոճոյ , և ոչ ծանօ-
Թանայի որպիսութենէ ազգիս մերոյ , սորին աղագաւ ՚ի քիմ
տեղիս բազմավաստակ աշխատութեամբ տառապի առ ՚ի խմնդալ
զմիտս ագաթանգեղոսի • և առաւել ևս վարանի ՚ի
միտս իւր • և չիմանալով գժուարին զելս իրացն գտանել ։ Ե-
ւս յաւէտ վասն այնորիկ , զի ագաթանգեղոս ՚ի գրել զպատ-
մութենի իւր՝ զանց առնէ առաջի գնել յոլով ուրեք զպէսպէս
պատգայս • ըստ որոյ և խորենացին ՚ի յիշատակել ինչ ինչ
յայնոց պատմուեց • Բ • 64 • և 80 • ասէ , Թէ ագաթանգեղոս
պատմէ զայսմանէ կարճ ՚ի կարճոյ անցանելով և համառօտ ։
Որոյ պատճառն է , զի ագաթանգեղոս փութայր միայն զե-
ղեալն պատմել • իսկ Թէ առ ՚ի լինել այնպէս՝ այլևայլ պա-
տգայք խնդրին , զայնմանէ ոչ ինչ հոգայ • զի ոչ էր նմա
կամք զանազան ըստ ասմ պատգայից շարադրեալ , այլ միայն
զիրն առաջի առնել • մինչդ զնորահետև նմին իսկ արքային
պատասխանի ընծայելը զգիրս պատմեալ իւրոյ , ոչ ՚ի դէպ համա-
րեցաւ զպարագայսն մանրապատում ՚ի մէջ բերել ։ Այլ իրի
եթէ ոք ՚ի յետնոց վեր ՚ի վերոյ ընդհատեցի զգիրսն նմին , և առանց
հայելոյ յայլ պատմուես Հայոց , պատահի ուրեք ուրեք այն-

պիտի

պիսի բանի, զոր կամ ոչ իմանայ ըստ իրին եղելոյ, և կամ զարմացեալ տարակուսի։ Այլ զի՝ ունի ազատմանդեղս ընդ այսպիսի համառօտուն և զոհ ձոխ և գերազանցական. վասն զի նա կամելով յայտ առնել, թէ որչափ մեծամեծ էին այն իրք, որք գործեցան ի հայս ի սկզբան դարձի նոցա ի կրօնս աճապարեաւք, զորս և ինքն աչօք տեսեալ էր, զմեծութիւն իրացն ոչ կարելով չանգիսման առաջի գնել՝ որպէս կամէր, ձոխութիւք և առատութիւք ոմով բանիւց կամի ցուցանել զայն. առատ և այն ձոխաբանութիւն նոր կարգի առ ի ցոյց մեծութիւն եղելոցն։ Այդարև մնրթի էր նմա ոչ միայն այդու օրինակաւ ձոխացուցանել զհամառօտ գրուն իւր, այլև քաղաւմ և մեծամեծ մտառեանս յօրինել գերապանծ բանիւք. զի գերապանծ և հրաշալի էին և այնք՝ զորոց գրեաց։

Ա. Ձէ բարձման տոհմին մանուածոյ, գունեայ, և բշնամեայ։

Զորէ բուզանդ. Գ. 4. Թէ բարձումն տոհմին մանուածոյ (1) զեանց և գունեայ կամ օրդումոյ՝ եղև յետ Թէրեղնի խոսրովու. և կարգէ զբան իւր այսպիսի իմն օրինակաւ։ Ուշեանն մանուածեան տոհմին և նահապետն օրդումոյ տոհմին կըռուէցան ընդ միմեանս մեծաւ սպառազինութեամբ. և եղև կոտորած բազում մարդկան։ Ուռաքեաց առ նա խոսրով Թէրեր և սքանչելագործ եղիկն ազբիանոս՝ հաշտութիւն առնել ի մէջ նոցա. բայց նոքա անարգեցին զնա, և նախասանեաց գարձուցին յետս. և ապա սկսան յաւարի առնուլ զտունն արքունի, և առաւել սաստկացուցին զպատերազմ ի մէջ խաբանց։

Այն տեսեալ արքային՝ առաքեաց ցսատմամբ մեծաւ ի վէր նոցա զվայրէ զորդի արտաւազդայ զնահապետ մամիկոնեան տոհմին յազգէ սպարապետաց հայոց զմեծ զօրավար զօրաց իւրոց՝ կորուսանել զպղծն ձերկոսին։ Յարձակեալ վայրէն ի վէր նոցա առատակեաց զնամսին զնա, և ոչ եմոզ ի նոցանէ արտ զաւակ. և դարձաւ առ արքայ։ Ուր արքայ էտ ազբիանոսի եղիկն զմանուածազականեան հանդերձ սահմանօք նորին առ կողմամբք եփրատայ. նոյնպէս էտ նմա և զառանն որդուեաց զօրդորու հանդերձ սահմանօքն յերկրին բասենու։

Այսպա եղեալ բուզանդայ՝ ասպա խոսի և վասն ջնջելոյ տոհմին քնունեաց. բայց այլազդագոյնս. Քզի յետ պատմելոյ զվանին սանեսանայ. ի Կէ. 7. զորմէ գրեացուք ի ծանօթ". Խ. (3). գրէ ի Կէ. 8. Թէ յորժամ ի խաղաղուէ էր ծն հայոց, յանկարծակի գուժկան եհաս առ խոսրով, Թէ ահա դիմեալ գան ի հայս անհամար զօրք պարսից ըստ գաւառն հեր և զարմանդ։ Ուր արքայ հրամայեաց ետ դատաբենայ նահա-

պետին թզնաւնեաց՝ հանել զօրս յՀայս աւելի քան զչաւիշն , և գնալ հարկանել զպարսիկս ։ Եւ նոքա գնացեալ հանդերձ բազմութեամբ զօրաց՝ միաբանեցաւ ընդ պարսիկս ի ծածուկ , և ետ կոտորել զօրս բիւր զօրս Հայոց . և փութայր հասանել և ի վէր խոսրովու ։

Եւ այն լուեալ խոսրովու Թագուհին՝ յայնմհետէ եղև ապաստան Հանդերձ վրէժանխիհ . և ապա գումարեալ զօրս երից բիւրուց քաջաց , և առեալ ընդ իւր զվաչէ և զայլ նախարարս՝ եհաս մերձ ի ծովն բզնունեաց . և տեսեալ անտի զզօրս պարսից , զի էին իբրև զաւազ ծովու բազմութիւն , և փիղք անթիւք ընդ նմա , զահի հարաւ . և անդէն առ Տէրիկ ամենեքին գոչեցին առ աձ . և դիմեալ ի վէր պարսից՝ կոտորեցին զամենեսին . և ոչ Թողին ի նոցանէ և ոչ մի ։ Եւ ընդ վաչէ սպարապետ և վահան ամատունի ձերբակալ արարեալ զդատաբեն՝ ածին առաջի խոսրովու , և քարկոծեցին զնա . և ապա հրամանաւ աղբայի գնացեալ վաչէ ի կղզին աղթամարայ՝ կոտորեցին զորդիսն դատաբենայ , և զազգ նոր ընդ նա . և այսպէս բարձաւ ազգատոհմ նախարարութեն այնորիկ ։ Եւ յայնմհետէ ոչ վստահեր արքայ հաւատալ յայլ իշխան ոք , բայց միայն ի ծերունին վաչէ ի բուն սպարապետ իւր , և ի քաջն վահան ամատունի ։ Ո՛յս պատմուի քաջութիւնք ընդարձակ բուզանդ . որոյ ընդէմ ելանել կարդ պատմութեան խորհեցաւոյն ։

Յետ պատմելոյ բուզանդայ զվերոյգրեալսդ՝ յաւելու , թէ յայնմ հետէ խաղաղացաւ երկիրս Հայոց Տարուստ մի Քրիստ . և ապա հրամանաւ ետ ասել Թագուհին Հայոց խոսրով տալ պարգեւս արանցն քաջաց , որ վստահակեցին նմա , և փոխանակեցին զանձինս իւրեանց ընդ Հային Հայոց մեծաց ի պիծրգմին մեծի . և ետ վաչէի զօրավարին զսահանջս ջանջանակին և զջրատաշխես և զյուզգուխս ամ գաւառակօքն Հանդերձ . և հրամայեաց նմա թերել վայրենի կաղնի բազում , և տնկել յաշխարհին ապատաւայ՝ ի քաղաքին գաւնոյ մինչև ի դաշտն մեծամօրի , ցգետն՝ որ անուանի դուինն՝ ի հիւսիսոյ կողմանէ արտաշատ քղքի մինչև ի գետն . և կոչեցաւ այն՝ տաճար մայրի . նոյնպէս և ի միւս կողմունսն տնկեալ անտառս՝ լցին զդաշտն , որ և կոչեցաւ խոսրովակերտ . և զերկոսին զնա պատեցին որմովք . և Թողին ի միջի ձիգ . և ժողովեալ ղերդ բնդ՝ լցին ներքս . որով և պատրաստեցաւ այն՝ տեղի զբօսալի որսոյ ի Թագուհեն խոսրովու ։ Ո՛յս այն անտառ է , զոր յիշէ խորենացին .

Գ . 8 ։ Տակ յաղագս վաչէի տե՛ս ի ստորև . ծանօթ . խԲ . (4)։

Ա. Վ. Գործոց Մանասէհի, և Էլիանուայ Վաղինակայ։

Որք թուզանդ. Գ. 10. Թէ Մանասէհ կալեալ և կապեալ
եր զՅուդան Հարիւր այր ի մծբնայ. իսկ Խորենացին. Գ. 7. (1)
դնէ՝ ուր Յուդան սարկաւագունս սքին յակոբայ։ Այս (ասէ թուզանդ) յաղագս սքին յակոբայ զմանասէհ՝ արձակել ի բայ
զկապեալսն, ծաղր արարեալ նր զսքն՝ առաջի աչաց նորա եւ
ընկենուլ զնա ի ծով. և ասէ ցսքն. * առ քումդ բարիասա-
,, ցումն ինդ տեսեր զիւրդ մեծարեցի զքեզ. դիւր արարի նո-
,, ցա ի կապանացն, և ի ծովս դեռ ղուղին ։ Այս սքն ա-
նէծ զերկիր նր. և ըստ բանի նորին՝ * ոչ եղև ասէ խաղաղու-
,, թի յՅնին յայնմիկ յօրէ յայնմանէ ։
Ուակ յայսմաւուրս. Թեկո. 15. քաղեալ ի բանից թուզանդայ՝
յաւելուածով առաջի դնի պատմութի անիրաւութե մանա-
սէհի առ սքն յակոբ, այսպիսի ինն օրինակաւ. Ա՝անասէհի
իշխանն ուղղաւնեաց, որ եկեալ եր ընդ զօրացն շապհոյ, ա-
ռեալ բռնի գերիս յատրուց, և տարեալ ի ուղղաւնիս՝ նեղէր
զնոսա։ Այ ի գալ առ նա յակոբայ՝ սպան ի մանակերտ գիւղ,
արս. յորոց ուրն սարկաւագ էին նր. և ծաղու արձակեաց
զնա. և սքն եղեալ ի լեառն՝ անէծ զերկիր նորա. և յետ երկու աւուրց մեռաւ կին նորա եօթն որդւովք։ Այ սքն գնաց
ի գանգատ առ խոսրով արքայն Հայոց, և առ վրթանէս,
որք յայնժամ ի վանս գլակայ էին. և նախ քան զկամիլ թա-
գաւորին վրէժս առնուլ ի մանասէհ՝ նա ուժասատ բար-
կութեամբ որդնալից լեալ սատակեցաւ. և սքն յակոբ դար-
ձաւ ի տեղի իւր։ Այ գաւառն մանակերտի ինաց զերիս ամն
ընդ անիծիւք. մինչև քայքն մանասէհի և այլք ընդ նմա ե-
կեալ ի գերեզման սքին՝ պաղատէին. և սքն յակոբ ետ նո-
ցա ի գերեզմանէ գնող և զձկոյթ մատն ի բժշկութիւն և
յօրհնութիւն երկրին ուղղաւնեաց. զոր առեալ բերին և ե-
դին ի վանս ընծաբայ. ուր և յետոյ շինեցաւ մեծ ապառաժ վանք։
Այսոսիկ պատմութիս բոլոր ինչ կան, որք օտար են ի հա-
րազատ գրութէ խորենացւոյն։
Ա՝ստանօր գրէ թուզանդ և զայս, Թէ մանասէհ ի սպանա-
նելն զբակուր բդեշխ աղձնեաց՝ ապրեցոյց զղուսար նորա. և
ապա յաւելու. Գ. 9. Թէ զայն աղջիկ խոսրով արքայ Հայոց
ետ վաղինակայ սիւնւոց. և կացոյց զվաղինակ բդեշխ աղձ-
նեաց. և յետ ժամուց՝ օրդին բակուրայ հեշայ կամ խեշայ եառ
զայն իշխանութե։ Այայց խորենացին. Գ. 24. որ ստուգա-
գոյնս գրեաց, դնէ՝ Թէ վաղինակ սիւնի զօրավար եր արեւելեան
դնդին. և սպանաւ ի նմին զօրավարութե ի փառանձեմայ։

Ի Վ պատերազմին Հովհաննու։

ԽՄ. (3) Ո՜ պատերազմի՝ զոր հաւուն քննակիչք վասկասու ի սադրելոյ սանահարիոյ, առնելին այլազգ պատմէ քուզանդ. Գ. 7. և զանահարուկ Համարի Թիւրք մաղքթաց, և կոչէ զինա սանեսան։ Յայնմ ժամուն ասէ Թիւրին մաղքթաց սանեսան արշակունի յանհնարինս սրտմտեալ ի վերայ խոսրովու խոսրամաղգակցի՝ գումարեաց զիւր զօրս հինաց, և փոխաց, Թաւասպարաց, հեծհնաստակաց, խժմխաց, գաթաց, և գողճարաց, շքաց և Ճղբաց, և քաղաստանաց, և եգերաստանացն, և այլոց, որոց ոչ գոյր Թիւ. և անցեալ նոքօք ընդ կուր գետ եկն ի հայս, և լցոյց զերկիրն։ Իսկ ի դիմել անդ ի ներքս՝ հրամայեաց զօրացն, զի առնուցուն իւրաքանչիւր մին մի քար. և ի հասանել ի գաշտաւայրս՝ ընկճեսցուն ի քաց. որով կանգնեցան շեզջակոյտք քարանց իբրև զերկինս առ ի ցոյց բազմութեանն։ Յարձակեալ սոցա ի վեր ձին մինչև ի գաւիժ՝ քանդեցին զիւր երկիրն. և ապա եկեալ ժողովեցան յԱն արտաստոյ. և առին զվաղարշապատ։

Ո՜ այն տեսեալ խոսրովու՝ փախեաւ յերկիրն կովդայ յամուր բերդն դարևնից. ընդ նմա գնաց և աբեն վրթանէս։ Իսկ զի օչ եր վասէ ի հայս, այլ երթեալ էր ի վեր յունաց, առ մի կայան Թշնամիք զերկիրն։ Իսկ իբրև եկին վասէ, ժողովեաց զիւր զօրս հայոց. և յանկարծակի հասեալ ի վեր Թշնամեացն, մինչդեռ բանակեալ էին ի լերինն՝ որ կոչիւր ցլապլուխ, կոտորեաց զամենին ի բերան սրոյ. և իջեալ անտի ի գաշտն արտաստանեան՝ եկն ի վեր վաղարշապատու, ուր նստէր Թիւրին սանեսան. և էառ զքաղաքն։ Իսկ զօրքն սանեսանայ փախուցեալ ի քաղաքէ՝ գնացին ի կողմն ուշական բերդին. և անկան յոտաստաժուտ տեղիս։ Յայնժամ բագրատ բագրատունի, և մեհունդակ և գարեգին աշտունիք, և վահան նահապետ ամատունեաց, և վարազ կամսարական հանդերձ վասէիւ հասեալ առ նոսա՝ հարին զամենին, և լցին զդաշտ առաստաբացն դիակամբք մեռելոց. և արիւն նոցա իբրև զգետ գնայր. և ըզսակաւ մնացեալսն հալածէին արտաքին մինչև յԱն բազաստանաց։ Առեալ ապա զգլուխն սանեսանայ՝ բերին առ արքայ. առեալ զայն արքայն՝ սկսաւ լալ. զի * եղբայր իմ էր ասէ՝ ազգ, գաւ արշակունի։ Յետ այսորիկ եկին Թիւրն և մեծն վրթանէս ի տեղի Ճակատուն. և տեսեալ զբազմութիւն գիանայ՝ զարմացան. և զի մի նեխեսցի երկիրն, հրամայեցին ծածկել զնա քարամբք. և դադարեաց երկիր ի խաղաղութիւն ամն Թիւն։ Իսկ ապա յաւելու բուզանդ. * և այսոյ ասէ վրէժ

„ այլն դրկեսցէ խնդրելոյս ի Թէոփիլոսէ սանեատոյ և ի
„ բանակէ նորա. զի ոչ մնայ ի նմին և ոչ մի ։ Ահա այս է այն
պատմութիւն, զոր գրէ խորենացին. Գ. 3. Ա. 6. զառաջամ-
բուածէ սանատրկոյ, և զգերդուածէ նորա, որով ետ շապհոյ
շարժել զբնակիչս կովկասու։ Իսկ այս և ի ձառընտիրս լինի
առեալ ի բուզանդայ. զոր անկարմանամբ իբրեւ յուզեցաք
բանից վերացուածել։

Այլ զայս մի ինչ պատշաճ համարիմ հարկանոցիկ յուշ առնել
ընթերցողաց, և զայս պատմութիւն առ ասացոյց. իբր զի ամին
նման են և այն պատմութիւնք, զորս առանդեն օտար աղգք
զազգէ մերմէ, թէեւ ի մէջ աղգին բազմ ժամս կացեալ լինեն,
և զլեզուն եւս ուսեալ։

Ի վեր պաթերազին խոսրովու ընդ պարսից, և ի վեր մահուան
վաչէ գօրավարի։

Զոր խորենացին. Գ. 10. Թէ խոսրով որդի տրդատայ լու-
ծանէ զերազարեալ թինն ըստ շապհոյ, * և ածեալ զգօրս յունաց
„ ընդիմանայ արքային պարսից ։ և յաւելու՝ թէ բայց ոչ
երկարեալ զկեանս՝ վախճանեցաւ։ Իսկ բուզանդ. Դ. 11. գրէ
լինել այնր պատերազմի մեծ յոյժ։ Պատմէ, թէ կուտեցան
բազմութիւնք պարսից, և կամեցան առնուլ զՅունս հայաստան.
յայնժամ վաչէ սպարապետ ժողովեալ ասէ զնմա հայս և զա-
զատախտամբ բանակ նախարարացն՝ եկ ընդդէմ նոցա, և ես
պնդեմ առաւոտիկ ընդ նմա. և եղեւ կոտորած անհնարին յերկուց
կողմանց. և անկան բազմ մեծամեծ իշխանք հայոց. ընդ որս
անկաւ և վաչէ մեծ սպարապետ. օրոյ վն տուգ անհնարին
պատահեաց զնմա մարդ։

Յայնժամ սկսեալ զրկանել ժողովեալ զնմանն և զթշնամն խոսրով
մխիթարեաց զնա, ասելով. մեզ չէ պարտ տրտմիլ ընդ այս.
զի ի մէնջ օրինաց ոչն մեռանի եղբարք մեր. և եթէ նոքա չէին
պատերազեալ, պարսիկք տիրէին մեզ, և ծառեցուցանէին օրի-
նաց իւրեանց. ապա մի լացցուք ասէ զնա, այլ պատուեսցուք
զնոսա։ Այս եղ օրէնս՝ առ յառնէ պատերազմ ընդ նոսա։ Եւ ասէ
մանեաց յիշել զնա ընդ սքան առաջին սրոյ պատերազմի։ Օ այս
պատմութիւն երկար գրէ բուզանդ. զոյն գրէ և մեսրոպ ե-
րէց, որ յամի ձկեան գնայ բուզանդայ։ Յիշատակէ սահակ
և վարդան. * զօրավարն վաչէ անկեալ ասէ ի պատերազմին, յի-
շել հրամայեաց զանուն նորին ի պատարագին սքան վրէժանել։
Այլ թէ զիարդ լեալ եկն այս, չունիմք այլուստ հաստատել.
այլ միայն ընդ անստոյգս համարիլ։

Իսկ այն վաչէ՝ զոր յիշէ բուզանդ, երևի լինել անդոյ. և

կիք գուցէ անշնան ոք • այլ թէ զնախդ ասէ զնմէ լինել սպա-
րապետ՝ իբր հայրենի իշխանութիւն ունելով զայն , անգիտելի
է • կիմ թէ գուցէ զայրմէ խօսի քուռազանդ • և կիմ թերևս այլ
ընդայլոյ կարգէ զբանն • քզի ՚ի բէմ տեղիս կոչէ զնա որդի
արտաւազդայ մամիկոնէի սպարապետին տրդատայ • բայց
յայտ է թէ արտաւազդ ոչ էր մամիկոնեան , այլ՝ մանդա-
կունի • ոմն յայտնի առանդէ ագաթանգեղոս և խորենացին •
և ոչ իսկ մնաց նորա արու զաւակ • զի ասպետքեր սահմանեան
կոտորեաց զտուն նորա ։

Բայց սակայն յաւելու աստ քուռազանդ գրել , թէ մնաց վաչէի
որդի մի , որ յանուն հաւուն իւրոյ արտաւազդ կոչիւր • զնա
ասէ կացուցին սպարապետ ՚ի տեղի հօր իւրոյ • այլ քզի զեռ
մանուկ էր , զգործ սպարապետութենն յանձնելոյն առ ժամ մի
արշաւրի կամնարականի և անդռնիկայ իշխանին սիւնեաց , որք
էին ասէ փեսայացեալ տանն մամիկոնէից • Այս պատմութի-
այլազգ է՝ քան զոր աւանդէ խորենացին ստուգութիւն • ըստ
որոյ եղեալ է և մեր ՚ի պատմութենէ • զի ըստ նմ փառանձեմ
կացոյց զօրաւար զանդուիլ զհայր իւր , սպանեալ զվաղինակ
սիւնի ։

՚ի վե՛ր էջ յոսկան , և յալորդայ նը • և գործոյ ինչ պէրանայ ։

(1) Ի պատմել քուռազանդայ զյաւակայ՝ գրէ նախ • Ճ • ե • Թէ ՚ի
տղայութենէ նը մուսացաներ զնա տիրան որդի Թիգրին խոսրո-
վու • և ետ նմ զղաւառ իւր ՚ի կնութի՛ն • և յետ մերձենալոյ
՚ի նա միանգամ՝ ետես յաւակ ՚ի տեղեաւն , զի երկու ման-
կունք էին յարդանդի կնոջն , և երկոքին և անհաձոյ ցայ •
վնակ ոչ և մերձեցաւ նա ՚ի կին իւր • այլ * յերկոտասանամե-
,, նից և ՚ի վեր ասէ առաքինանայր ։ Ի և կինն յետ ծնանել-
լոյ զմանկունս՝ զպատ և զաղթանապհինն՝ մեռաւ • և աբեն կայր
տրտում ՚ի վր նոցա ։ Ի պա երևեցեալ նմ հրեշտակ ոմ՝ սիսիմա-
րեաց գնա , ասելով՝ Թէ յորդւոց քոց ծնանելոց է զաւակ մի
(այն է ներսէս) , որ կատարելոց է զնմ զկամս ոմ , և հա-
Հոյանալոց է նմա ։

Ի և ապա կամեցեալ քուռազանդայ խօսել զձեռնադրուէ յոս-
կան՝ համարի , Թէ էր նա տակաւին ՚ի մանկութենէ հասակի •
և գրէ զհանդիպիլոյ նմ այսպես • Ճ • 12 • Հոդովեցան ասէ նա-
խարարք մեծամեծք , վաղարշ իշխանն անձատոյ հայաստանեա-
ցոյն հայոց • զարեհ իշխան մեծին ծոփաց • վարազ իշխան
շահունի փոքունն ծոփաց • գնելի իշխան հաշտենից ՚ի կամ-
նականն տոհմէ • վորոթ իշխան վանանդայ • շահէն իշխան ան-
ձևացեաց • ատամ իշխան գողթան • մանաւազ իշխան կող-

բայ-

բացաւոց • զորութիւն իշխանաց ձորոց Ծին • մանաւանդ խորխոռունկն իշխանն մնդկնազունեանն տան • ապայ իշխանն գնոունեայց • և իշխանն տահատունեայց ։ Ա՚ռեալ սմա զսքեն յուսիկ՝ տարան՝ի կեսարիա , և եռուն ձեռնադրել կաթողիկոս հայոց • և՝ի գառնալ սմա յեռս՝ եղ ընդառաջ տիրան արքայ բազմութեբ՝ի դաշտն , որ յայնկոյս գետոյն տաճերն կամրջի • և եաճ յարտաշատ քաղաք , և նստոյց զյուսիկ յաթոռն հայրապետական ։

Ա՚յս յուսիկ ասէ * զհետ հօրն իւրոյ վրթանայ զառաքելականն յաջորդեր , հայրական չափոցն նմանեալ ծնունդ , ,, առհասարակ զամ յիմն հրեշտակակրօն զանձն ցուցաներ , ,, զամ ըս պարգեւացն սկզնորհացն կատարեր • քահանայ բան ,, նաւոր խաչանցն հովուելով աւետարանական պատգամա ,, տրօքն խրատելով ընձեռեցաւ ։ Օ՚ի աւուրբք մանուկ՝ տիօք ,, առոյգ՝ և բարձր հասակաւ , գեղով երեսաց սքանչելի և ,, էքնաղ • զի այլ ոչ գտաներ ուրեք նման նմ՝ի վեր երկրի • ,, սքե և պայծառ հոգւով առհասարակ ոչինչ զպաղեալ ըս առտիս • ,, իբրև զքաջ սպառազէնն քրիստոսի , իբրև զախոյեան նահատակ ,, ի տղայութենէ տիոց՝ նշկահեր աներևոյթ թշնամոյն յաղ ,, թութենէ սպառնայեալ • ակն առնուլ կիմ ասլաւել մեզկան ,, բնաւ առհասարակ ոչ գիտեր • այլ՝ զբան հոգւոյն սքոյ առաջեր ,, ածեալ ընդ մէջ իւր կրեր • իսկ ջնորհատուր հոգւոյն լցեալ ,, զնա գիտութենէն էր աղբիւրացեալ , զամ լսելեացն յօշս ա ,, կանջացն և սրտիյն ցօղեր ։

Զետ այսորիկ պատմէ և զհանգուցեանէ նորա այսպիսի բնութիւնս լեալ • որպէսզետև ասէ Թէ՚ւրն և մեծամեծք զհետ էին անարժան գործոց , հանապազ յանդիմաներ զնա սքեն յուսիկ ։ Ն՚ա ասէր յաւուր միում՝ յորժամ էր սքեն՝ի ծոփայ գաւառին՝ի բերդն բնակել , և մատուցանէր պաշտօն յեկեղեցւոջ անդ , լսէաք՝ Թէ գայ տիրան արքայ հանդերձ առագանւովն , եւ ընդդէմ նր , և արդեւ զնա՝ի մտանելոյ • * չէս ասէ արժանի • ,, հնձմ գաս • մի գար՝ի նեղբս ։ Օ՚այս լսէաք ամենայն և այլոց իշխանաց՝ բարկացան՝ի վեր նր • և անդէն քարշեալ զնա սպատուհասաց արքային՝ բրածեծ արարին զնա • և Թողին կիսամահ • զոր բարձեալ պաշտօնէից նր՝ տարան՝ի գարանա զեաց գաւառ՝ի գեօղն Թորդան • ուր կացեալ նր զաւուրս քանի մի աւանդեաց զհոգին • և Թաղեցին զնա առ գերեզմանի հաւուն իւրոյ սքոյ գրիգորի ։ Ա՚յսպէս պատմէ քուզանդ զպատճառս և զօրինակ մահու սքոյ յուսկան • և զնաւ էսիշէ զբան պատկերին յուլիանոսի , զոր գրէ խորենացին ըստ վկայելոյ ականատեսից ։ Ա՚յս ասա սա ինքն քուզանդ , և կիմ որ եմոյծ ձեռն՝ի գիրս նր , ակսանի՝ի գլ • 13 • յերես • 48 • մինչ՝ի 53 • նախատել զապգն բոլոր անպատճառ բանիւք • որովք

յայտնի ցուցանել , թէ յաւելուածք գրէ՝ զոր գրէ : Յաւելու ասա , թէ կամելով հայոց՝ իւրեանց յարմար առաջնորդ ունել՝ խնդրեին ընտրել զանարժանս , որպիսի էին պապ և ա-
թանապինէ :

Ուստի՝ ի յայսմ գլուխն , այն է . 14 . գրէ , թէ հնազոյ կերտոյ ընտրեցին զդանիէլ . զորմէ բազում գովուածս գրէ՝ հանդերձ աւելորդ քանիւք . և ասէ պատմէ , թէ զնոյն յանդիմանեցաց նոա զքաջն և զիշխանսն . և հրամանաւ թագաւորին անդէն խեղդամահ եղեւ : Նա աշակերտք նորա , շաղիսայ՝ որ էր կարգեալ՝ ի նմանէ վերակացու ծխին , և եպիփան՝ որ էր կացուցեալ վերայ աղձնեաց և մեծին Ծոփայ , տարեալ թագաւորին զնոսա : Նա ասա՝ ի գլ . 15 . պատմէ զպատիժ և զանարգութիւնս . զոոսա ասէ ձեռնադրեցին ապիրատք . բայց երկոքեան ևս առնին կանայս զքոյր թագաւորին տիրանայ . պապ էառ զվարազդուխտ . իսկ անանապինէ զամբիծ . յորմէ ծնաւ ասէ ներսէս : Որ և կրկնէ . յերես . 106 . յասելն , թէ մայր ներսիսի էր * թամբիչն անուն քոյր արքային տիրանայ ‖ : Այլ այս անձառնի իմն է . նախ՝ զի ժամն ըստ կարգի պատմուած դորուն բազանդայ ոչ ներէ . և երկրորդ՝ զի ինքն գնէ , թէ անանապինէ թոռն էր տիրանայ արքային՝ ի դստերէ նորին . ապա անտեղի լինի ասել , թէ նա էառ զքոյր տիրանոյ հաւան իւրոյ :

Ուստի՝ յայսմիկ եդեալ բազանդայ՝ յաւելու՝ ի գլ . 16 . թէ տեսեալ իշխանացն հայոց զանկարգ գնացս պապայ և անանապինեայ՝ թողին զնա . և ընտրեցին կրճիկա զփառէն ոմն երէց (այն է փառնեբսէհ) ՝ի միաբանից տարոնոյ . և տիրանարքայ առաքեաց զնա հրովարտակաւ իւրով՝ ի կեսարիա . և էին որք տարան զնա , մեծ զօրավարք հայոց վասակ մամիկոնեան , ՄԽՀենդակ աշտատն , անդովիկ սիւնի , արշաւիր կամսարական , և այլ ևս տասն իշխանք : Նա փառէն կերտ նստեալն յաթոռ հայրապետուն թէ ոչ այլ ինչ առնէր ասէ , բայց եթէ զանձն սէր պահէր . ուր յաւելեալ լինի և այսպիսի ինչ քան . ,, թէ փառէն * ընկերեր անօրէնն թագրին , և ըստ նորին կամ ,, մացն երթիկ հնազանդեալ ‖ յամ չարիս . և ապա պատմէ , թէ իբրև մեռաւ նա , տարեալ թագրին՝ ի տարսն : Նա այսորիկ՝ ի գլ . 17 . գնէ թուազանդ՝ թէ ընտրեցին զշահակ . և առաքեցին՝ ի կեսարիա մեծաւ պատուով , և եառն ձեռնադրել կաթողիկոս . և յաւելու գրել դարձեալ ինքն կամ այլ ոք թէհնամանս՝ ի վեր ազգին . նոյնպէս և՝ ի գլ . 18 . զորովք բառ է զանց առնել : Նա ասա՝ ի գլ . 19 . պատմէ զտարաչարս մահ պապայ և անանապինեայ . և ասէ , թէ պապայ ինոց որդի մի՝ ի տարսէն նոր վերին անուն . զորմէ չունիմք գրել ինչ :

Աստանօր գիտել արժան է և վէր տիրանայ արքային Հայոց ,
զի ասէ խորենացին · Գ · 13 · Թէ սոյն այս տիրան վանեալ
զօրս պարսից՝ որք զդուշանային առ եփրատաւ , անսոյզ կա-
զազուէ զյուլիանոս · իսկ մազաղ անտիոքացի այլուա՛ տայ
զայս · քանզի պատմէ ՚ի գիրն · ԼԴ · Թէ յուլիանոս ՚ի խաղալ
իւրում ՚ի պարսս՝ ունէր ընդ իւր զղուխիանոս կոմս զայր քաջ
պատերազմող · և սա առէ վանեալ ցրօճեալ ՚ի կոզմանցն եփ-
րատայ զնոմ պահապանս պարսից ։ Այլ այս ոչ հակառակի
քանիս խորենացւոյն · իբր զի գուցէ ՚ի վանել տիրանայ զպար-
սիկս և յանցուցանել նոցա զյուլիանոս՝ դարձակից եղեալ

Նմա և զղուխիանոս կոմն ։

Կիտելի է և այ , զի սոզոմենոս · գԼԲ · Ղ · Գլ · ԺԱ ՚ի յիշել առ-
աւօր զՔրիստոս Հայոց , առ որ գրեաց առ Թուղթ յուլիանոս՝
զալ յօգնութիւն իւր , ոչ կոչէ զնա տիրան , այլ՝ արշակ (կամ
ափրիկ) · ոմն երևի այս և ՚ի Թուղթի անդ յուլիանոսի · զոր ՚ի
միջ բերեն լատինք ՚ի կարգս յոնական մատենագրուեց առ
փաւստիկեայ · հատ · Է · երես · 82 ։ Եւս առաքելոս · գԼԲ ·
Գլ · 2 · և ԼԴ · 12 · զգաստութի գործոցն տիրանոյ և կատարե նը
առաջի գնել յանուն արշակայ · զորոյ զգանան տեսցես ՚ի ծանօթ.
ԼԲ · (1) ։ Եւ սակայն մի՛ արշակ ասելով՝ գուցէ ոչ իմանան ո-
րոշակի իբր յատուկ անուն , այլ՝ իբր հնարակ յորջորջումն ար-
քայական պատուոյ · ըստ որում և զայլ Թագս պարթևաբնակ
արշակ անուանեն յանուն առաջնոյն արշակայ · ոմն գրե իակ
և ոա ի պն ամմիանոս այլուր , յասելն ՚ի նոյն գԼԲ · ԼԴ · Գլ · 1 ·
Թէ զոր օրինակ յառնախեալ է առ հռոմմայեցիս անուանս օգոս-
տոս՝ իբրև ցանկալի ինչ շուք վերստաւուէ , նոյնպէ և առ պար-

Թևս անուանդ արշակ ։

Եւ սակայն՝ եթէ օգոս արշակ ասելով՝ ոչ իմանան զտիրան ,
այլ զորդի նը զարշակ , այդու յայտ է Թէ խառնեն ընդ միմեանս
զդ ործս տիրանայ և արշակայ ։ Իսկ զոր յիշ բերեն ՚ի Թղթ-
Թոյ յուլիանոսի՝ զայդ գնեն ընդ կարգի պատմուէ իբրեանց՝ ոչ
գխոհելով զանուն Թագաւորին Հայոց , ասպա Թէ ոչ՝ ՚ի ձեռին
ունիմք և մեք ՚ի գիրս խորենացւոյն՝ որ մերձաւորն էր ժա-
մանակաւ՝ գհնագոյն օրինակ Թղթոյ նորին յուլիանոսի գրել
՚ի Թագրաւ Թէ իւրում ոչ առ արշակ , այլ առ տիրան արքայ
Հայոց · որով և յայտնի ցուցանեմք , Թէ այն արքայ՝ զորմէ են
առա քանք մեր , ոչ էր արշակ , այլ Հայր նը տիրան ։
Ընդ ժան է առա Հարևանցիկ յիշատակել և զայս , իբրզի ոմանք
՚ի նոր մատենագրաց՝ ոչ Հայելով ՚ի պատմուԹիս Հայոց , այլ
միայն յանդրադ գրուածս նախնեացն ամմիանոսի և սոզո-
մենոսի՝ խոպան շփոԹեն զպատմուԹիս տիրանայ և արշակայ
և և յոսրոյեայ որդւոյ տրդատայ , և յերից ՚ի սոցանէ կա-

ցուցանեն Թիգր մի արշակ անուն՝ որդի և յաջորդ տրդատայ, ոմն է տեսանել ՚ի գիրս բարթևիոսի. հատոր. Գ. յամ. 311. և ՚ի գիրս յովհաննու վայրանատայ. զորմէ տես. ՚ի ծանօթ. էջ. (1). յերես. 596. և 597։ Սակ ոմանք ներհակ այսմ զմին յերիս բաժանեն. զորոց չէ այժմ տեղւոյս խօսել։

՚Ի վէր կոտորածէ՝ զոր պապէ բռնալանդ լեալ ՚ի պահին ազգատանեաց և արծրունեաց։

(2) Բուզանդ. Գ. 18. յետ բազում քանից, զորս համառօտելով յիշեցաք ՚ի նախընթաց ծանօթութենէդ, յաւելու գրել պատմուի ինչ այսպիսի. Զգէք հայոց ասէ ՚ի միմեանց քանդեալ աւերեցան. այլ քան զանխնայ աւելի գտաւ այր ոմն՝ որ ունէր զպատիւ մարդպետութենէ, այր ներքինի չարասիրտ. որում հայր կոչէին։ Սա դրգռեալ զնիւրան արքայ՝ զբազումս ՚ի նախարարացն ետ կոտորել. և ետ ՚ի սուր հանել զերիս տոհմս յաւագաց՝ զընշտունիս և զարծրունիս. զորս առանց ինասու կոտորեցին ՚ի ծերոյ մինչև ցանդեայս զարու և զկտաւ հասարակ. միայն երկու տղայք ասէ զերծան ձեռամբ դայեկայ իւրեանց. ոյք են՝ տաճատ որդի մեհնդակայ ոշտունւոյ, և շաւասպ որդի վահէի արծրունւոյ։ Ո՛ստոս կալեալ ածին առաջի տիրանայ. և տիրան հրամայեաց փողոտել զնոսա. բայց անդ դիպեալ արտաւազդ և վասակ արք մեմիկոնեանք, որք էին զօրավարք ամ զօրաց հայոց, յափշտակեցին ըզտղայսն. և մէն մի յանթի հարեալք՝ մեռեցան անտի։ Այլ զի ընդդէմ գարձան ոմանք, նոքա զնոսա վերայուցեալ՝ վանեցին ՚ի բաց. և երեալ գնացին յոշ իւրեանց յամուրս տայոց. և նստան անդ ամս բազումս ընտանեօք իւրեանց. և մնուցեալ զերկոսին մանկունսն՝ եռուն նոցա զդաւեր իւրեանց. յորոց վերապրին սերեցան այն երկու տոհմք ոշտունեաց և արծրունեաց։ Այս պատմուի երևի հիւսուածոյ լինի զորոյ. և կամ աւանդութենէ ոմանց. զորս առեալ գրէ բուզանդ. Քզի այլազգ է ստոյգ պատմուի եղելոցդ ըստ աւանդելոյ խորենացւոյն. Գ. 15. ըստ որոյ եղաք և մեք. յերես. 436։

՚Ի վէր ըմբռնման և կոտրտէ փրանայ։

(1) Ամենևին այլազգ պատմէ զայսմանէ բուզանդ. Գ. 20. և 21. Ասենեկապետն տիրանայ ասէ փիսակ անուն սիւնի՝ գնացեալ դեսպանութ առ վարազ շապուհ իշխան պարսից, որ էր սահմանապահ ատրպատականի, դրգռեաց զնա ընդդէմ տիրանայ։ Վասնզի ուներ ասէ տիրան ձի մի * պոռնով Ձարտուկ

,, Ձանձկիչն ‖ , կիմ խայտաբղետ և մողղիկ (այն է խըտ ձի),
գեղեցիկ և մեծ • ղրկի և բազում ինչ խօսեցաւ փիսակ առ
վարագ • և նա խնդրեաց զձին ի տիրանայ ։ Եւակ տիրան դտեալ
զայլ ձի՝ որ փոքր մի նմանն էր նմա , զայն առաքեաց առ
վարագ • այլ փիսակ քաջք ծանոյց զայս վարագայ • և յաւել
և բազում ինչ չարախօսել առ նա զտիրանայ • իբր թէ նա
միաբանիլ կամի ընդ յոյնս , և բառնալ զթագաւորութիւն ի սահա-
նեանց , առելով՝ թէ հարց խնդ արշակունեաց է այն թագաւո-
ւ այս լուեալ վարագայ՝ գրեաց ամբաստանութիւն զտիրանայ
առ ներսէհ աղքայ պարսից • և ներսէհ հրամայեաց նմա գա-
լաձանուցն բռնեալ զտիրան ։

Սմին իրի գեղապան յղեաց վարագ առ տիրան , և ասէ • եթէ
հրամայես՝ կամիմ գալ յայգահովիկ կողմանդ , և խօսիլ ընդ
քեզ • և տիրան ուրախ լեալ ընդ այն՝ պատրաստեաց նմա տեղի
յերկրին ապահովեաց , և հանդերձանս որոց , այլ ոչ մեծ •
զի մի ասէ չարակենացին պարսիկք ընդ որս մեր ։ Եւկեալ անդր
վարագ ասպահովեաց երեք հազար արամբք՝ պատուհէցաւ ի տիրանայ •
և յաւուր միում կոչեալ վարագայ զտիրան ի խնջոյս՝ կալաւ
և կապեաց զնա յերկաթի կապանս • և էած զնա ի գիւղն
դալարիս • և անդ ջեռուցեալ զերկաթ յածուխ՝ խարեաց զաչս
նր և կուրացոյց • և առեալ տարաւ զնա և զընտանիս նորա
հանդերձ բշմ սւարաւ ի պարսս առ ներսէհ աղքայ ։ Եւյլ
ի հանել զնա ի դալարիս գեղջէ , յոգւոց եհան , բարբառե-
ցաւ և ասէ • * փիսակ զի իմ երկու աչքս լուսաւորքս խաւարե-
ցան և ասէ զօրավարն պարսից մեծ ամբոխիչ • և խաբկանօք առ
ինքն կոչեաց զտիրան • և խաւարեցոյց զաչս նր ի գաւա-
ռին ապահովեաց՝ ի գիւղն , որ արծուէն կոչեցաւ ի պա-
տահմանէ գործոյն ‖ • Յիշատակէ և ասողիկ • Ը • ւ • յա-
սելն , թէ զօրավարն պարսից * խաբկանօք կոչեալ առ ինքն
զտիրան՝ խաւարեցոյց զաչս նր յապահովեաց գաւառին՝ ի
գիւղն , զոր արձիւղն կոչեն • ոմք պատմէ բիւզանդ ‖ •
Յաւելու ապա նա ինքն բառզանդ • Եբրև ասէ լուան զայս
նախարարքն հայոց , ժողովեցան ի մի , և պնդեցան զկնի պար-
սից • աւար հարին զբազում տեղիս , և գարձան յեաս ։ Եւ
առաքեցին առ հայրն վաղէս զանդուլի իշխան սիւնեաց , և
զարշաւիր կամսարական • զի նա ինքն վաղէս տիրեցաւ հին-
քեանց • և այն ինչ չև էր դարձեալ նր , եկին յաշն հայոց ի կող-
մանս բասենոյ ներսէհ աղքայ ամ զօրօք • և նախարարքն հայոց

փախեան 'ի յոյնս : Եւ կայսրն եկն զօրօք 'ի Հայաստան . և
Թողեալ զբանակ իւր զառաջ քաղաքաւ՝ էառ ընդ իւր զան-
դովիկ սիւնին և զարշաւիր կամնարականն . և 'ի կերպարանս կա-
ղամբաւաձառի եղեալ՝ եկն ետես 'ի բանակին պարսից՝ դի-
տել զչափ զօրուն . և ապա եղեալ անտի՝ էառ զբանակ իւր ,
և յանկարծակի յարձակեցաւ 'ի վր պարսից . և եհար զամենին.
և գերեաց զառաջումն . միայն ներսեհ միով ապատմբ զերծաւ . և
կայսրն կացուցեալ իշխան երկրին Հայոց զանդովիկ և զարշա-
ւիր՝ գնաց 'ի տեղի իւր :

Ներսեհ հրամայեաց հանել զմնրթի վարազշապհոյ , և
ընդ խոտով , և կախել 'ի հրապարակի՝ վն լինելոյ նմն պատ-
ճառ չարեացս այսոցիկ . և առաքեաց գեոպան առ կայսրն՝
խօսիլ զհաշտութի՛ն , և դարձուցանել զգերիսն . և կայսրն
գրեաց առ նա , զի և նա դարձուսցէ զգերիս Հայոց , ըստ որս և
գրիցան : Յրձակեաց ներսեհ զտիրան 'ի կապանսն՝ և կա-
մէր առաքել 'ի Հայս և Թիւրեցուցանել . բայց առաց ոչնա տի-
րան . զինչ օգուտ է ինձ կուրութի՛ն Թիւրել . եԹէ կամիս՝ Թա-
գաւորեցո՛ զարշակ զորդի իմ . և նա արար այնպէս . և դար-
ձոյց զնա գերիսն Հանդերձ տիրանաւ . նոյնպէս և կայսրն

Այս պատմութի՛ւնք բուզանդայ բնչմ իրօք օտար են 'ի Հարազատ
պատմութէ Հայոց , զոր աւանդէ խորենացին յականատեսից և
'ի Հաւատոյ ԹղԹոց . օտար են և 'ի պատմութէն ամմիանոսի .
Ցողոմ ասել , Թէ երկու այլատարազ ժմկադրութի՛ն այլոյլ
առ բուզանդ զբանս իւր . մի՛ զի Համարի , Թէ յայնժամ Թա-
գաւոր պարսից ներսեհ էր . որ ըստ աւանդելոյ պատմութեց նմա
աղգաց բազում ամօք յետ մեռեալ էր . և միւս ևս՝ զի խառնէ
զգործս առաջնոյ տիրանայ արքայի Հայոց՝ ընդ երկրորդին .
յորոց միջն անցեալ ամք իբր երկու Հարիւր . իբր զի ըստ ե՛ռեալ
սի՛ Թէ տիրան առաջին ունէր երկուս ձիս գեղեցիկս և արա-
վարս . ոմն եդաք . գլ . Ը . երես . 353 . ըստ խորենացւոյն . Ը . 59 .
տայ զայնոսիկ երկրորդ տիրանայ՝ յերիւրմամբ բաղմապիսի
պարագայից . և այսպէս ամենևին այլատարազ գրէ զպատ-
մութի՛ւն տիրանայ :

Հաւանօր Հարևանցիկ արժան է դիտել և զայս . զի յօրինակս
լինչ վկայաբանուէ ընդհատոյն . Հմմտ . Ն . ուր պատմի զտի-
րանայ՝ գրի այսպէս . * Ինքն յաշխոյն խառարեալ , ծառուղա-
, բար յիւրմէ մեռեալ ‖ . բայց յայտ է Թէ վրիպակաւ գրած
թոց անկեալ և ասա քանի մի լինչ տող քանից , և խառնեալ է
գործ արշակայ ընդ գործոց տիրանայ . զի Թէպէտ խառարեալն
կուրութի՛ւն տիրան էր , այլ՝ այն , որ սաւուղաբար զիւրովին չո-
քաւ՝ որդի նր արշակ էր :

Ի. Վէպ սէյն սարգիս։

Իրսկս կայսր կ՚ի Թղթոց չնորհալւոյն , պատմուի վարուց սէյն սարգսի զօրավարին յառաջնմէ ոչ գտանիւր յաղգի մերում լինելոյ ըն կարգի աւանդեալ , այլ այսչափ ինչ միայն էր յայտ , թէ է նա վկայ մեծ նահատակեալ՝ի պարսս հանդերձ զօրօվ իւրով։ Սին էրի գերդ վիշապ առաջնորդ հաղքատու գրեալ Թուղթ առ ներսէս չնորհալի յառաջ քան զնատիլ նմ կԹիկիա՝ աղաչեաց զնա գտանել զատրպ և զնդարձակ պատմուխն սէյն . և նա խնդրեալ՝ի վանտայա ստորւոց՝ տեղեկացաւ՝ Թէ կան՝ի հին ձեռագիրս նմ վարք չորից սէյն սարգիս անուանեալոյ . որոց միւն էր սէյ սարգիս ընկեր բագրոսի . զորմէ ասեն լատինք՝ Թէ նահատակեալ իցէ յօգոստիա եպիրատացւոց . և ասելիք՝ Թէ՝ի ռուճատի . և հայք , Թէ՝ի յերուսաղէմ . սկզ գնէ՝ի հոկ . 7 : երկրորդն էր սէյ սարգիս զօրավար՝ նահատակեալ՝ի պարսս : երրորդն էր այլ սէյ սարգիս նահատակեալ՝ի յաղիդ : չորրորդն էր միւս ևս սէյ սարգիս նահատակեալ՝ի գաւառ : ոմն է և սէյ սարգիս ոմն նահատակեալ՝ի տրապիզոնաւ ընդ այլ քանի մի վկայս յաղուելիս : Եւ զի զօր ասացին հայք (քայ՝ի սարգսէ յընկերէն քագոսի) էր՝ սէյ զօրավարն սարգիս , ներսէս չնորհալին թէմ զգուշութ ետ Թարգմանել զվարս նմ։ և առուգուէ՝ի լոյս ընծայեցոյց զայն :

Այլ սակայն յոյնք՝ որք ոչ գիտէին , Թէ այսպիսի ոմն սէյ էր զօր ասացին հայք , պէսպէս առասպելս յօգէին . մինչև ասել ոմանց , Թէ այն սարգիս իցէ աբեղայ ոմն հայոց , և ոմանց Թէ եպիսկ ոմն . և այլ ևս բազմք . և զի ասն՝ զայն սարգսի յաւարտ առաջաւոր պահոցն կատարիւր , յորմէ և այն պահք՝ զայն սարգսի ևս կոչիւր , նաև՝ի վէր սէյ զառասպելս խօսէին , և գայլաձակղէին . և զայն պահք անուանէին՝ սարգսիքեաց պահք սարգսի . որոց վասն և չնորհալին՝ի Թուղթն՝ զօր յղեաց առ մնտուէլ կոյսր , գրեալ զայսմանէ ինչ ինչ առ՝ի զգուշութ .

* Ասոյց ասէ ասել և վասն առաջաւորին պահոց առասպելաբանուէ՝ի ձերոց այսի յօդեալ վասն մեր . Սարգիս ասեն ,, կրօնաւոր՝ էջ ունելով և սկսունդ . և սկսեալ նորա յառաջին ,, Թագ վինելով՝ի տեղիս՝ ուր հանդերձեալ վիներ ընԹանալ ,, սարգիսն , աւետիս տալով գալստեան նմ , զի ըառաջ ընԹանայցեն նմա . և՝ի չորս նորին անուն՝ վ՚ն առաջաւոր լինելոյն՝ եգեալ ասեն մեր զանուն պահոցն՝ի սարգսէն այն ,, օրինադրուէ . որ վերագոյն է այս զոպարտուԹէ առացուած ,, զմէնջ քան զՀեթանոսականացն առասպելեալ ընծաթա- ,, նուիան : Այսպիսի է ծնունդն սուելուԹէ . զի Համբառոց

,, բարեաց յաշտգս ատելոյն խնուն զլսելիս , և տուա վարկա-
,, նին • և տուէ և առաստիճեաց յանկոյ բանսն յօժարութ ,
,, և ձշմարիտ համարին • ոչ միոյն այս է տեսանել։ Օ՛ի Թէ
,, տակաւին ՚ի խաւարի անգիտուե ետեսաք՝ ոչ ՚ի կատարած-
,, տուէն , չէր հնար այսպիսւոյ ծիծաղական աւանդից հա-
,, ւանել • Թող Թէ յայժմուս , մինչ լցեալ է երկիր ամ գի-
,, տութէ նմն , և լոյսն խնամատուէ ծագեալ է յն։ (Ա՛ս յետ
մեկնելոյ զառաջաւոր պահան՝ զորմէ խօսեցաք ՚ի ծնոնդ • Ը •
(2) • էրես • 625 • յարէ զկնի) • • • Ուստ այն՝ զի յետ կատար-
,, ման պահոցն զնջոյն սարգսի զօրավարի կատարեմբ զյիշա-
,, տակ , այս է պատճառն • Քանզի զկնի ՅԻսկի ՚ինոյն Թուի ամ-
,, սոյ • Ը • յունվարի կատարեցաւ նա վկայական արեամբ վասն
,, քրս • վասկ սահմանեցին յաւուր շաբաթուն այնուհետև զնո-
,, րայն տօնել կատարել զյիշատակ • ոչ յառաջինն շաբաթու
,, քառասնորդացն զոր ոչ Թէոդորոսի տօնախմբեն զօր յիշա-
,, տակն ՚ամ Հնձայեալք ՚ի քս • Ա՛ս էր ասե՝ ըստ պատմուԹե
,, նորին՝ իշխան երևելի յՀայոց գաւառայ (յր կապադովկացւոց)
,, յաւուրս կոստանդիանոսի մեծի , քաջամարտիկ գոլով
,, ՚ի պատերազմունս բարբարոսաց , և բարեպաշտուԹե հաւա-
,, տով զարդարեալ ՚ի քս • և ՚ի Թշդրել յանցաւորին յուլիա-
,, նոսէ փախուցեալ ՚ի պարս , և անդանօր պահակեցաւ ՚ի քնե
,, հանդերձ որդւովն իւրով՝ վկայեալ առաջի արքային պար-
,, սից շահոյ զբարութք դաւանուԹի հաւատոյն՝ հատեալ ըզգ-
,, լուխն սուսերաւ ‖ Օ՛ սոյն գրե ջնորհալին և ՚ի ԹուղԹն
առ ալէքս ։

Ա՛ՀԱ գիտելի է , զի պատմուԹի վարուց այսր սրբոյ և այլոց երից սարգիս անուանելոց՝ երևի չիմիք խիք խառնեալ ըստ միմեանս՝ մինձագ առ յոյնս և առ արևմտեայս • նոյնպէս և առ զի Թազմանդ նոյ և նշխարաց նոցին • ուստի և տեսանելիք ինչ ինչ ընծայեալ սրբոյն սարգսի ընկերին բազատի , զոր պարտ էր առ սրբոյն սարգսի զօրավարի • որպիսիւ և անուն քրքինն սարգսուսլոյ • զոր յիշէ եւագրիոս • Ը • 28 • յասելն անորոշակի , Թէ անդ էին նշխարք սրբոյն սարգսի անյաղԹ վկային • յորոյ վըկ արժան համարիմ ծանուցանել ինչ մի առաւնօր • Թէպզի այն քրքք որովհետև այժմ ոչ յիշատակի այսու անուամբ , յոմանց արդի մատենագրաց համարեալ էրև՝ Թէ իցէ օգոստիա , և կիբ առնծաւի՝ ուր ասի նահատակեալ սարգիս ընկեր բազատի • ոչ դրե աստեման՝ ՚ի նոյն միտս վերածելով զանորոշ վկայու-
Թի եւագրի • Ա՛ՀԱ մեզ հաւանական տագնի Թուի ասել , Թէ այլ քրքք է այն սարգսապօլիս մօտ յերկերին սար-
գոյ , առեալ զանուն ՚ի սրբոյն սարգսէ զօրավարէն՝ վն բերեալ
լինելոյ անդր մարմնոյ նորա • Ա՛ս Թերևս իցէ համիան քրքք ,

ուր ըստ աւանդելոյ յայտնաւորացն հայոց • յոանվ • 31 • թա-
ղեցաւ մարմին սրբոյն • իսկ եթէ այս համիան չէիցէ անդ , այլ
յերկրին պարսից , ասելի է՝ թէ անտի փոխադրեալ եղեն նըշ-
խարք սրբոյն յաստրիա • ոմք եղև և այլոց ՚ձեց • յորմէ և առուգա-
գոյն գտաւ առ ասորիս պատմութիւն այսր սրբոյ • և Թումի թէ
երանելին մեծորոյ անտի իցէ առեալ զմասն նշխարաց սրբոյն ՚ի
գալ իւրում անդ յերկիր ասորւոց ։

Եւ թէ յիրաւի սոյն այս է նա ինքն սուրբ սարգիս զօրաւարն , և
ոչ սրբն սարգիս ընկեր բագոսի , զոյգանին ասեն , զի ՚ի դէրս
հինն մատենադրաց յոանայ կոչի անցեալք վկայ պարսից կամ
պարսկաստանի , և օգնական նեղելոց յիմն • որպէս գրէ Թէո-
փիլակտոս սիմոկատտա յոյն պատմիչ • գիրք • Ը • գլ • 14 • երես •
137 • կամ 232 ։ ՚Ընդ՝ յայտ է թէ միոյն սրբ սարգիս զօրաւարն
է՝ որ ասի վկայ պարսից • որ և հռչակեալ է յարևելեայս , թէ
է երապահաս օգնական • մինչև ըստ գրելոյ նորին սիմոկատ-
տայ • երես • 120 • կամ 219 • պարսիկք իսկ տալոր էին պատուել
զանուն նր , և կարդալ յօգնուն ՚ի նեղութե ։ Իսկ միւս սրբ սար-
գիս՝ որ էր ընկեր բագոսի , ոչ կոչի վկայ պարսից , այլ՝ հռով-
մայեցւոց • զի հռոմայեցի էր և ՚ի հռոմայեցւոց կատարե-
ցաւ յաւուրս մնաքսիմիանոսի • ոմք աւանդեն ամ պատմիչք և
յայտնաւորք յոհնայ և լատինացւոց • ՚ի հոկտ • 7 ։

Եւ դրձ գրեն պատմիչք յոհնայ և զայսպիսի ինչ • այր թէ
խոսրով երկրդ արքայ պարսից ՚ի փախչիլն յերեսաց սպաստամ-
բին վարհամայ՝ տարակուսեաւ , թէ յո գիմեսցէ , էջ ՚ի ձիոյն
և եթող գնալ ուր և կամիցէ • և կորդաց առ ՚ած ձեմարիտ ,
և կոչեաց յօգնութիւն զայն սարգիս վկայն , զոյգանել ինքեան
ձիոյ բարի և յաջողուի , ուխտեալով զերևելին ընծայս և ըզ-
նուիրս մատուցանել ՚ի տաճար նորա • զի լուեալ էր՝ թէ նա
օգնական է մոլորելոց և վտանգելոց ։ Եւ ապա իբրև յաջո-
ղեցաւ նմ յաղթել վարհամայ , և գառնալ ՚ի Թիւրութի իւր ,
յղեաց մեծապին ընծայս ՚ի տաճար սրբոյն ՚ի սարգսաւորիս •
գրեաց և Թուղթ ՚ի հրամայական զաքանչելիս սրբոյն • ուր ըստ
աւանդելոյ սիմոկատտայ Թիվակցի • Ը • 13 • երես • 136 • կամ
231 • ասէ նա ինքն խոսրով արքայ • * ՚ստահացեալ ՚ի ձեռն
„ տուութեն օգնականութե մեծապատիւ և գերահռչակ սրբոյն
„ սարգսի , զոմէ լուեալ էր մեր՝ թէ նա ստոյգ է լսել խնդրո-
„ ուածոց և ուխտից , ուխտեցաք նմ ՚ած ՚ի ՚ ։ և պատմէ ան-
դէն՝ թէ զնորդ կատարեցաւ այն ամ ։ Օ տոյն է տեսանել և
՚ի գիրս եւագրի • գ • 21 • որ և այ էր Թիվակից ։

Ա՚յս քանք ամենևին համաձայն են այնմ , զոր սոյն այս սրբ
սարգիս զօրաւար խնդրեաց յՈՒ՚ի ժամ կատարման իւրոյ ,
յասելն • * Ընորհեա՛ որով յիշեն զանուն իմ , զԹողութի

„ մե-

„ մեզաց, և յիւրաքանչիւր վտանգից զփրկութիւն հոգւոյ և
„ մարմնոյ . . . ի պահպանութեան յաղթութենէ, ի քանդից և ի
„ կապանաց զարձակումն, ի ծնեալքեզ զաղատութիւնն, ի
„ խռովութենէ վնասակարէ, ի նեղութենէ անգործութիւն,
„ ի հանապարհի զառաջնորդական պահպանութիւն . . . և որք
„ նոքիրական ընծայիւք և ողորմութիւք զիշատակս մեր կա-
„ տարեացեն, ընկալ ի հոտ անուշից, և վարձատրեա բիւ-
„ րապատիկ բարութիւն ‖ . ըստ որում է տեսանել ի հինն Կտա-
րինտրոս գրեալս առ Ֆիկոք հնոր հալոցն և համբրնացոյն :
Այսմ՝ամենայնի մնալի է անտարակոյս ասել, թէ այն քանք և
գործք խոսրովու արքային պարսից, և քանք նախնեաց պատ-
մագրացն յունաց՝ մինդ թէոփիլ ակտոսի մամիկաստոյ, հայեին
ի սէր սորդես զօրավար անյաղթ վկայն . ուստի և քաղաքն
արգաուպոլսոյ յանուն նոր հոչեցեալ այնպէս՝ որ թէ յայտ-
նութիւն լսականացոյ միւս սրբոյ սորդոյ ընծայն անուն այսր
քաղաքի, այդ թուի ի յեանոց առեալ . ապա թէ ոչ՝ սիրտ
էր դնել այդմ և յայտնութիւն յունաց . բայց անդ այսպիսի
ինչ ոչ լիշի : Այլ թէ նաև ոմանք ի նոր մատենագրաց լա-
տինացոց այսպէս դնեն, չէ զարմանք . զի նոք ոչ ունեին և ոչ
ունին որոշակի տեղեկութիւն զսոյն սորդոյ զօրավարի և զգոր-
ծոց նորա, այլ թէ եղեալ ի կեսարիոյ կապադովկացւոց՝ գնացեալ
իցէ ի պարսս, և անդ կատարեալ . զի անուն նորա ոչ էր հռչա-
կեալ յաւետմտեացս, այլ յաւետեղեայս : Այլ այսու ամենայնիվ գտա-
նեմք զիշատակութիւն ինչ սորին սրբոյ ի նոյն յայտնութիւնս լա-
տինացոց . ի թուի . 24 . յասելն Համառօտիւ, թէ յիշատակ
է * սրբոյն սորդոյ վկային ի կեսարիայ կապադովկացւոց . որոյ
„ են աքանչելի գործք ‖ :

ի վեր ոլոմպիադայ երկրորդին՝ և ի տասանչեղմայ :

(1) Ի սորա ամսեանոս մարկելլինոս . գիրք . Է . Թէ կոստանդ որդի
մեծին կոստանդիանոսի կոչեաց զսորին առ ինքն . և հաս-
տատեալ գահն միաբանութեամբ ետուն նմա զուլղումպիադա ի կնութի .
և քանք սմմիանոսի են այս . * Կոստանդոս (կայսրն) մինչ-
„ դեռ էր ի կապադովկիա, կոչեաց առ ինքն զսորին Թ-զեր
„ հայրաստանեայց . և բազմ մնդրտասիրութիւք ընկալեալ զնա՝
„ ազգ սորա և յորդոր եղև նմա, զի հաստատուն կացցէ ըզ
„ մեզ ի բարեկամութիւնն և ի հաստատմունն . քանզ լուեալ
„ էր, թէ յոյժ անգամ գուն գործէ սրբոյն պարսից պատ-
„ րաստութիւնք և նենգութիւք և քանիւք սպառնալեաց ի բաց քե-
„ րել զնա ի բարեկամութէն հռովմայեցւոց, և ըլ իւր վաս-
„ քանել : Այնժամ և նա (այր սրբոյն) երդմամբք հաստա-

,, տեսայ՝ կամակաւ զանձն՝ ի կոտուածս մատնել՝ քան յետս կալ
,, ՚ի մահուամբ (կայսերն) • մեզ և բոլոր օժտութիւն մեծա-
,, բեալ հանդերձ նախարարօքն՝ որ ընդ իւր էին, դարձաւ յՅ
,, ռուքէ թրքոյ • և ոչ իւիք յեռանեալ գոտւոյ առ՚ի զետոստա-
,, յեալսն կատարելոյ, քաջմնապատիկ երախտապարտութիւք
,, կապեալ ընդ կոստանդեայ • յորոց միջի մեծ և այն էր, զի
,, տուեալ էր նմա զոդուամպիատա զդուստր աբլաւեայ պրե-
,, տորական հազարապետի՝ զերբեւին հպատակեալն եղբօր
,, իւրում կոստատոսի (վախճանելոյ)։

Ասկ խորենացին • գ • 21 • դնէ, թէ զայս արար վաղենտիա-
նոս կայսր՝ յետ բազմ ամաց • զի ՚ի դիմել հրամանաւ նր մեծին
Թէոդոսի զօրաւարի ՚ի հայս, * զարհուրեի առ արշակ, և ա-
,, ռաքէ ընդ առաջ նր զմեծն ներսէս ... որոյ երթեալ և ՚ի
,, հաշտութիւն գթութիւն (յր գկայսրն) շարժեալ՝ մեծարի ՚ի նմէ
,, յոյժ • և զպատանդսն խնդրեալ՝ առնու և դառնայ • և կայս
,, ր ոն անուն ոզոմպիադա յազգէ կայսեր կին մեծ արշակայ։
Ասուզանդ ևս • ը • 15 • այլազգ ինչ պատմէ • իբր թէ արշակ
նախ առեալ իցէ զփառանձեմ, (և ծնեալ ՚ի նմէ զպապ), և
ապա առեալ իցէ զոզոմպիադա • զի ՚ի գժտիլ փառանձեմայ
ընդ նա, * առաքեաց առ արքայն արշակ յերկիրն յունաց, և
,, խնդրեաց էած անտի կին ՚ի կայսերական տոհմէն ազգաւ •
,, զի անուն էր նր ոզոմպի ։ զորմէ ոչինչ տեսանել և ՚ի յա-
յորդ ծանօթութեան։ Ասէ մեսրոպ երէց • գլ • ը • ասէ, թէ
էառ զքոյր վաղեսի կայսեր զյօրիս • այնպէս և յայսմա-
ւուրս • նոյեմբ • 19 • ասէ, թէ այն այս յօրիս կին ոզոմպիա
իցէ քոյր վաղեսի։

Այսպիսի այլևայլութիւն բանից հայեցեալ մեր՝ Թէպէտ և
ըստ խորենացւոյն եղաք ՚ի պատմութե, բայց քզի մեծ է աս-
տանօր վկայութիւն ամիհանոսի՝ որ ժամակից ասի լինել, մնրթ
է համեմատելով ընդ պատմութիւն խորենացւոյն ասել, թէ
գուցե բան իմիք յառաջս կոստանդեայ կայսեր իցէ լեալ այս •
իբր զի ՚ի գնալ սկզբն վրթանէսի հանդերձ տիրանաւ ՚ի կոս-
տանդինուպոլիս, կոստանդ կայսր տուեալ իցէ զոզոմպիադա
տանիլ ՚ի հայս ՚ի հարանութիւն արշակայ արքայորդւոյ • (զոր
ամիհանոս միայոցանէ միշտ ընդ հօր նր տիրանայ) • և թէ-
րևս այս ոզոմպիադա պատճառաւ լինիք գնացեալ յետոյ ՚ի
կոստանդինուպոլիս վասն տեսութիւն ազգականաց իւրոց, և
գնալ անդր սկզբն ներսիսի՝ ընդ նմա դարձեալ իցէ վերստին ՚ի
հայս։ Այլ զայս ոչ իշխեմք մեր յայտնի հաստատել՝ քաղաք
Թուէեցաւ մեզ ընդ բանից խորենացւոյն դնել • քզի նա գոլով
աշակերտ մեծին սահակայ որդւոյ ներսիսի, և մեծին մես-
րոպայ՝ նօտարի նորուն ներսիսի, որք աչօք տեսեալ էին զանցս

արշակայ և պատմիսիադայ , առուգագոյնս տեղեկացեալ է՛ի
նմանե ։ Սակ բանք բուզանդայ ոչ ինչ ապդեն . զի գիրք նոր ոչ
է անարատ . յորում խանդարեալ են ոչ միայն պատմութիւնք
հայոց , այլև այլոց ազգաց՝ մեծաց կայսերացն ։
Սակ այն՝ զոր ասէ բուզանդ՝ և այլք՛ի նմանն բուզանդայ ա-
ռեալ , թէ՛ի փառանձեմայ էին ծնեալ պապ , այդ երևի ան-
կարելի . զի որովհետև փառանձեմ՝ի ՃԻՀ թիւրութեանն արշա-
կայ և յաւուրս վաղենտինիանոսի կայսեր եղև նախ կին գնելոյ ,
և յետոյ ուրեմն էառ զնա արշակ , եթէ արդարև պապ՝ի նմա
ծնանիլը , ՚ի մեռանիլ հօր իւրոյ՝ ինքն պապ թագրելոց էր իբր
հնգետասանամեայ կամ պակաս ևս . և ՚ի նոյն ամն ծնանելոց
էր զարշակ և զվաղարշակ , որք զկնի տակաւին թագրեցին . և
յայտ է թէ՛ի թագրելն ոչ էին սքանչանալի և տասնամեայ .
զի երկոքին ևս յառաջնում՝ ամի թագաւորութեանն առին իւրեանց
կանայս , և պնդզմեցան ընդ թշնամիս իւրեանց , ևն ։ Սև այս
հաշիւ թէպետև ոչ ընդդեմ ելանէ բուզանդայ , զի ինքն այլ
ինչ պատմէ , քայց ամ իրօք ներհակի բովանդակ պատմութեանն
հայոց՝ զոր աւանդէ խորենացին և այլք . և այլապէս զկարգ
ժամանակաց ։

Ի՛ վեր մահուան գնելոյ յարշակայ պապ ճառս գառանձեմայ՝ քան
առաքելոյ պետրոսի ։

Ի՛ մահուանէն գնելոյ այլազգ պատմէ բուզանդ . գ . 15 ։ (2)
Տիրութիւն հօրեղբօրորդւոյն ներ ասէ ցանկայր կնոջ նորին փառան-
ձեմայ . որոյ վճռ հնարեր՝ի մահ մատանել զգնել . ուստի և այն-
չափ ամբաստանութիւնս մատոյց առ արշակ արքայ , մինչև կա-
մել արքային սպանանել զգնել ։ Սև յորժամ գնաց արշակ յամ-
սեանն նաւասարդի՝ի շահապիվան , առաքեաց անտի զվար-
դան մամիկոնեան՝ կոչել առ ինքն զգնել , զի՛ի միասին կա-
տարեացին զառն առուրցն ։ Հաւատացեալ գնելոյ՝ եկ՛ի Ձիզի
գիւղերայն հանդերձ հինաւ իւրով և ծառայիւք՝ գալ առ արք-
շակ ։ Սև էր յաւուրն ոտն մեծ յոխմանու կարապետի կար-
գել՝ի լուսաւորչէ՝ի թագաւանի . ուր և ժողովեալ էին բազ-
մութիւնք եպիսկոպոսաց և սուրբ ժողովրդոց . որոյ վճռ առաքեաց անդ սքան
չելիս զնոսա ընդ նմին զսարկաւագապետ իւր զմե-
ծիկ . և ինքն մնաց ընդ թագրին՝ի շահապիվան ։
Սերև մերձ եղև գնել՝ի բանակն արքունի՝ յաւուրսն
պահու , հրամայեաց արշակ ըմբռնել զնա և սպանանել .
յայնժամ բազմութիւնք նիզակաւորաց և սուսերաւորաց ընդ-
առաջ եղեալ նմ՝ ընկեցին զնա յերիվարէ . և ձեռս յետս կա-
պեալ տանէին զնա՝ի մահ ։ Սերև եռես գայն կին նոր փառան-

ձեամ , դիմեաց առ մեծն Տերեսէս՝ որ յայնմ ժամու կատարէր զպաշտօն առաւօտեան աղօթից . և աղաչեաց զնա հասանել յօգնութիւն առն իւրում : Եւ նոր Թողեալ զպաշտօնն՝ եկն ՚ի խորանն արշակայ : Գիտացեալ արշակայ՝ Թէ վո քարեխաչելոյ գայ սքեն , էած զգլխով իւրով զամոյրն , ոպ Թէ Տնչեաւ իցէ : Տաւն եհար զնմանէ սքեն , և յորդորեր զնա՝ խնայել ՚ի գնել , և փութալ խափանել զմահ նր : Տակ արշակ որպէս Թէ ոչ ինչ զգալով՝ ոչ տայր քնաւ պինդ :

Եւ ՚ի վերատին խօսել Տերեսէս՝ եմուտ ՚ի Տերըքս զահձապետն , և պատմեաց առքայի՝ Թէ կատարեալ զՀրամանն քոյ . տարայ զգնել ՚ի սիւս , և սպանի զնա , և Թաղեցի անդ : Յայնժամ սկսաւ սքեն Տերեսէս անհնձանել զարշակ , և զազգ նր զարշակունիսն յանէծս ցաւագինս , և մեկնեցաւ անտի . և ոչ ևս կարել քնաւ տեսանել զերեսս արշակայ : Տակ արշակ գնացեալ ՚ի դերեզմանն գնեալոյ՝ կոծ էառ ՚ի վր նր , և հրամայեաց՝ զի ձիքին կոծեացեն զնա : Ա.յլ կին նր փառանձեմ այնչափ լայր , մինչև զնմանին լացուցանել : Եւ մինչդեռ նա ՚ի լացն էր , յղեաց առ նա տիրիթ պատգամ՝ մի՛ կոծել այնչափ զգնել , այլ՝ առնուլ զինքն փխակ նր . զի ես ասէ վեհ եղէ պատճառ սպանումն Թէ առն քոյ : Ո՞չ այն լուեալ փառանձեմայ՝ բողոք երկարձ առ ամենին . և սկսան ողբալ ձայնարկուքն ՚ի վր եղելոցն :

Իբրև իմացաւ զայս արշակ , զարմացաւ և ատրճացաւ . բայց քզի և ինքն տուփացեալ էր ՚ի փառանձեմ , խորհեցաւ սպանանել և զտիրիթ . և մինչդեռ յայս խորհուրդս էր , յղեաց առ նա տիրիթ աղաչանս , զի տացէ ինքեան զփառանձեմ : Ընդ որ ցասուցեալ արշակայ՝ եաս վաղվաղակի բառնալ ըզկնանս տիրիթայ . և էառ ինքն ՚ի կնութիւն զփառանձեմ . և որչափ սիրեաց նա զփառանձեմ , այնչափ ատեցաւ ՚ի նմանէ : Իրոյ աղագաւ գժուեալ արշակայ՝ առաքեաց և եբեր յերկրէն յոնաց ՚ի կայսերական տոհմէ զայր կին , որոյ անուն էր ոսիմսին . և ամուսնացաւ ընդ նմա (ոպ յիշեցաք ՚ի նախընթաց ծանօթութեան) : Ընդ որ նախանձեալ փառանձեմայ՝ եաս սպանանել զնա ՚ի ձեռն քջնյի միոջ՝ խաւնեալ Թոյն ՚ի խորհուրդն սքե . և եաս վարձ քահանային զգիւղն գոմկունք կոչեցեալ ՚ի գաւառին տարոնոյ :

Եւ զի սքեն Տերեսէս մեկնեալ էր այլուր , և ոչ կամէր տեսանել զերեսս արքայի և փառանձեմայ , ընտրեաց արշակ զայլ ոք ՚ի տեղի նր չունակ կիր չունակ անուն . բայց ենկսունք Տայոց ոչ առին յանձն ձեռնադրել . իսկ երկու եպիսկոպոսք Տերեսէս և Կորդուէաց ձեռնադրեցին զնա կաթուղիկոս . և նա յամի վարեցաւ ըստ կամաց Թգրին և փառանձեմայ : Ա.յս և ալե-

կոծեալ ինն պատմութեն աւանդեալ՝ի գիրս բուզանդայ. զոր
չէ մարթ անքոյթ հատուցանել՝ի նաւահանգիստ մտանեալ
գրութեն խորենացւոյն։

Ասացաւ գիտելի է և, զի վարդան պատմիչ գրէ՝ի Թոռնին
Հայոց. ոչ. զարմանալի ինչ՝ի վէր մարմնոյ սպանուցանն գնե-
լոյ, այ տիրութեայ և վարդանայ՝ որ և ինքեանք սպանան՝ի
վասակայ ըստ խորենացւոյն։ * Յաւուրս յայսոսիկ (ասէ, այ՝ի
,, Թոռնին Հայոց. ոչ. և յամի ինն. 1156.) յայտնեցան՝ի
,, շահապիվանա մարմինք սպանուցանն գնելոյ՝ անփուտ հան-
,, դերձիք, և արիւնաշաղախ մարմնով, ոչ և սպանան ըստ
,, անվճից սքջն ներսիսի ॥։ Այլ թէ ոչ էին լեալ այս, զու-
նիմք ինչ օրուշակի յայլմէ աւանդեալ։

Ի վէր գնալոյ արշակայ առ շապուհ, և ապա սպանանելոյ նը
գնդարդան. և պատերազմելոյ ընդ յոյնս և ընդ պարսիկս.
և գործոց ներքուստանայ։

(1) Որոյ բուզանդ. գ. 16. 17. և 18. թէ՝ի կալ արշակայ՝ի
խաղաղութեէ՝ կոչեցաւ բարեկամուէ աղաչաւ՝ի շապհոյ ար-
քայէն պարսից, և մեծարեցաւ՝ի նմէ յոյժ, մինչև հաւասար
նմա ընդունիլ պատիւ, և միանշան հանդերձիւք և թագիւ
պերճանալ. նաև ետ նմա շապուհ զերկրպահան տուն իւր յատը-
պատուական ծի։ Վասն եղև յաւուր միում գնալ արշակայ՝ի
ձիաստան շապհոյ հանդերձ վասակաւ, որ էր իւր սպարա-
պետ, և տեսանել զերիվարս արքայի։ Նոքա ախոռապետն
շապհոյ տեսեալ զնա անդ, ոչ միայն ոչ մեծարեաց զնա, այլև
նախատեաց՝ ասելով. * այծից հայոց արքայ՝ ելկ նմա՝ի խըր-
ձան խոտոյ վէր ॥։ (1) այս լուեալ վասակայ՝ չկարաց հանդուր-
ժել նախատանացս իւրոյ արքային, այլ՝ հանեալ զսուր իւր՝ ան-
դէն եհատ զգլուխ ախոռապետին։ Ընդ սպուհ իբրև լուաւ
զայս, ոչ ինչ զայրացաւ, այլ՝ մանդ գոլեաց զվճռակ վէն հա-
տաւորիմ լինելոյ առ նոր իւր. և ետ նմա բնդմ պարգևս։
Յորժամ անդ էր արշակ, կամակած էառ շապուհ, թէ գուցէ
ոչ հաստատուն մնասցէ արշակ՝ի սէր բարեկամութեն, այլ՝
ատեսցէ, և ընկալցէ միաբանեսցի. վասն պահանջէր երդումն
՝ի նմանէ. * Հաւանեաց առեալ և երդումբ ինձ յօրէնս քոյ, զի
մի ատեսցես ինձ ॥։ Եւ ապա ետ կոչել զերիցուսնս տիսբոն
քաղքի, որոց գլխաւորի անուն էր մարի. և բերեալ զաւետա-
րանն՝ ետ արշակայ երդնուլ յայն, և կռնել դաշն։ Եւ զի
միջնորդ այսր դաշինն եղև վարդան մամիկոնեան, կրտսեր եղ-
բայր նր վասակ նախանձեալ ընդ նա՝ քանսարկու եղև՝ի մի-
ջի, և խափան էարկ դաշինն. և արշակ փախեաւ՝ի հայս

հան-

Հանդերձ վասակաւ ։

Ո՜ այն տեսեալ շապհոյ՝ ասէ • ուրեմն առաքեցէք խաբեայ զնա արշակ • և դուք քահանայքդ միաբանեցէք ընդ նմա , զի ոչ կամիք խաղաղութիւն ունել ընդ նմա , այլ ընդ հաւատակիցս ձեր ընդդէմ եկեալ մարտի քննիք , (այլ պրե բուզանդ այլուր • է • 54) • * մեք արդարութեամբ տուընդանիս երդնուլ • բայց եթէ նա ,, առեաց , նոյն աւետարանն ածէ զնա առ ոտս ձեր ։ Ո՜հ սակայն շարժուհ չհաւանեալ բանից նոքա՝ երդուեաւ յարեգակն և ի ջուր և ի հուր , և ասէ • յայսմ հետէ ոչ թողից մնալ կենդանի միում ոմանք , որ ունիցի զանուն քրիստոնէի • և անդէն հրամայեաց սպանանել զմարի և զընկերս նոր • և տարեալ փողոսեցին զեօթանասունսն ոչխս ի գուբ մի ։ Ապա զաւետաբանն՝ յոր երդուեաւ արշակ , կրակեալ և պատեալ երկաթի շղթայիւք , և կնքեալ նուրով մատանեաւ՝ եդ ի գանձատան նուրա ։ Եւ ապա յարոյց հալածանս մեծ , և հրամայեաց եհան կոտորել զամ քրիստոնեայս՝ որք եկին յիւրում իշխանութենէ • և

կոտորեցան ասէ հազարք հազարաց և բիւրք բիւրուց ։

Եպայց կասկածեալ շապհոյ յարշակայ՝ առաքեաց առ նա լզվարդան հանդերձ հրուխարտակաւ • * որ ինչ եղև ասէ ի փախչել քո՝ այն ահա թողեալ լինի ձեռաս • բայց դու յայսմ հետէ ,, տե կաց յոխտին քումմէ , և մի՛ անցանիր ընդ քան երդմանդն ,, քում օրինակ՝ յոր երդուար ։ Հասանեալ ընդ այս արշակայ՝ հաստատեաց զբան ուխտին • և վարդան դնաց ի գաւառ իւր ի տայս ։ Եւ եր անդ վասակ ի գալն վարդանայ եղբօր իւրոյ • և խրթև խմացաւ՝ եհաս անդր , և սկսաւ զրդռել զարշակ ընդդէմ նր , ասելով՝ թէ նա կամակից է շապհոյ , և կամի մատնել զքեզ ի ձեռս նր ։ Այնպէս և փառանձեմ միահաւան լեալ սկսաւ յորդորել զարշակ վն ապստամբել ի վարդանայ • քզի ոչ առնէր ընդ նա • որով հետև նա եղև՝ որ գաւառ

Ձանուէիր կոչեալ զայր իւր զգնել առ արշակ ։

Ապա գումարեալ վասակայ զօրս՝ որք ի ներքուստ գինեալ էին և ի վէր հանդերձս ապուչեալ , գնաց ի վերայ վարդանայ , որ նստէր յիւրում՝ գաւառի ի քերդն երախանի կոչեցեալ ։ Եւ թրև տեսին զդունդն վասակայ քնակիչք գաւառին , ոչինչ երկեան և ոչ զդուշացան • զի չունէին ինչ կասկած զվասակայ , որով հետև եղբայր էր վարդանայ ։ Իսկ վարդան ի նմին ժամու լուծանայր զգեստս իւր • յորոյ վէր հասեալ զօրացն վասակայ * մինչդեռ նա կայր խոնարհեալ , զի արկցէն ջուր ի վէր նորա ։ , խոցոտեցին և սպանին զնա անդէն ։ Եւ զի կին նր յղի էր , ի հասանել առ նա գուժկանացն՝ ծնաւ զորդի , և

կոչեաց զնա յանուն հօրն վարդան ։

Եյետ պատմելոյ զայս բուզանդայ , և յետ գրելոյ ի գլ • 19 •

թէ զինւորդ արշակ կոտորեաց զնահատարարս Հայոց · զորմէ գրեալ եմք ՚ի գլ· ևէ · երես · 457 · ըստ խորենացւոյն , ասա ականի երկայնաձիգ Հառա յօրինել և պատմել զպէսպէս պատերազմունս ՚ի գլ· 20 · ինչ ՚ի 49 ։

Յուզել սակ և ՚ի սատականալ մարտի (գլ· 20) ՚ի մէջ յուզնաց և պարսից՝ արշակ և ոչ ՚ի մի կողմն լինելն ձեռնտու , այլ սպասէր , զի յոյնք կոչեցեալն զինքն յօգնութիւն իւրեանց · բայց իբրև ոչ կոչեցին նք , շապուհ հրեշտակս առաքեալ առ նա՝ աղաչէր օգնել ինքեան ։ Ընդ այս ուրախացեալ արշակայ՝ հրամայեաց վաղակայ պատրաստել զօրս · և նա գումարեաց * չորեք հարիւր հազար զօր կուռ վառեալք , որ ընտիրք և ,, պատերազմողք էին՝ ըստ արուեստից նահատա- ,, կութեն , նիզակաւորք , տուբերաւորք , աղեղնաւորք՝ ան- ,, վրէպք , կօրովիք , վաղրաւորք , սակրաւորք , որք ոչ գի- ,, տէին զերկիւղ զանգիտելոյ յարանց յախոյեանց , համակ ,, հեծելազօրք , զրահաւորք , պատենազէնք , տաղտաւարտա- ,, ւորք , դրօշաւորք , և կազմ նշանաւորք՝ բազմաձայն փո- ,, ղարաքն ։

Սոքօք դիմեալ արշակ յԱծն աղձնեաց՝ տպատեր անդ զօրացն շապհոյ · բայց զօրք հայոց ոչ կամեցեալ մնալ գպատեան շապհոյ՝ դիմեցին ՚ի վերայ բանակին յոռնաց , և կոտորեցին զնմա · * այնպէս՝ զի ոչ ապրեցուցանէին ՚ի նմանէ և ոչ զմի ։ և առին զաւար նոցա , որոյ * ոչ գոյր չափ կամ թիւ ։ Իբրև եհաս անդ շապուհ , տեսեալ զեղեալսն՝ զարմացաւ · և գումեաց զարշակ և զվաղակ · և հարցանէր ցիշխանս իւր , թէ զինչ պատգամ պարտ էր տալ նմա փոխարէն այսպիսի յաղթութեան , զոր մեք չկարէաք առնել առանձինն ։ Նա ՚ի պէնել նմա , թէ գանձ բազմ է քո , տուր նմա որչափ ինչ կամիս , ասէ շապուհ · այդ չէ ինչ · այլ այս լիցի մեծ , եթէ տացէ արշակայ զդուստր իմ , և արարից զնա բարեկամ անքակտելի · և տացէ նմա ասպարանս յերկրի իմում · զի երբ և հաճոյ լցէ նմա , եկեալ քննակեացի անդ · և ՚ի ձնշելի եւս միանգամ ՚ի տիրապետ չինեցիլ զնմա զբազմ օրհասոյն · իսկ վաղակայ տացէ ոսկի և արծաթ , ուր ՚ի հաճիլ ընդ այս զօրավարացն պարսից՝ շապուհ հրամէրեաց զարշակ գալ զօրօք ՚ի իւր յատարեստան , և անտի ՚ի տիրապետ , զի անդ փեսայացուսցէ զնա ինքեան ։ Իսկ զօրք հայոց ոչ կամէին · զի յանկայնին դառնալ փութով յԱծն իւրեանց իւրաքանչիւր ՚ի տուն իւր ։

Ոչեալ զայս անդովկայ աներոյն արշակայ՝ շուարեցաւ , գուցէ ՚ի խնամանալ արշակայ ընդ շապհոյ՝ անարգեացի դուստր իւր փառանձեմ · վասն մատուցեալ առ իշխանս հայոց՝ և յաւէտ առ վաղակ՝ ետ նոցա կաշառս բազմս · և հաւանեցուցեալ զնո-

արկանել թշնամութեն՝ ի մէջ արշակայ և շապհոյ, և մի թո-
ղուլ զարշակ գնալ ընդ շապհոյ ։ Եւ իբրև հաճեցոյց զնա,
մնառեալ և առ մեծ իշխանն ումն պարսից, և ետ նմա թագուհի
լինել, և աղաչեաց զնա գնալ առ արշակ, և ասել ցնա, թէ
զգոյշ լեր անձին քումմէ, զի շապուհ խաբել կամի զքեզ և սպա-
նանել ։ Օ այս միայն ասա դու նմա, և ես լցուցից զքան քոյ ։
Եւ իբրև գնաց իշխանն առ արշակ, և ասաց նմա ըստ բանիցն
անդուկայ, զարմացեալ ընդ այն արշակայ՝ կոչեաց զմեծամեծս
իւր զնմա, և յայտ արար նոցա զոր լուաւ ի պարսիկ իշխանէն ։ և
զի նոքա առեալ էին կաշառս յանդուկայ՝ լինել դիւրաւիչ թշնա-
մութեն, սկսան ի մի բերան ասել ։ * մեք զայդ վաղ լուաք,
,, գքեզ չիշխեցաք ասել ։ այլ իրքդ այդ հաստատ են ։ Յայն-
ժամ արշակ բազմ պարգեւս տուեալ իշխանին պարսից վերայտ-
նելոյ նմա զերկրն՝ հրամայեաց նմա զօրսայ իւրոց պատրաստիլ ի
փախուստ ։ Եւ յարուցեալ սմիյն ի գիշերի՝ հեծան ի ձիս և
փախեան, թողեալ անդ զնմա կահ և զկարասի իւրեանց և զը-
վրանս և զկազմածս և զնմա լինչ ։ և ոչ ոք իմացաւ ի քանա-
կէն պարսից զփախուստն նոցա ։

Իբրև առաւօտ եղեւ, եկին առ շապուհ իշխանք պարսից առ
ի յարդուլթի ըն սովորութենն, ընդ որս և թագրք այլևայլ ազ-
գաց՝ որք եկեալ էին ընդ նմա ։ Իսպասեր շապուհ՝ զի և արշակ
եկեսցէ, ոչ սովոր էր ։ բայց յորժամ ետես՝ թէ յամէ նա,
հրամայեաց իւրոցն դնալ ի բանակն հայոց և հարցանել զոր-
ջունէ արշակայ ։ Իսկեալ պարսից և տեսեալ զբովոր բանակն
դատարկ, զարմացան ։ և եկեալ պատմեցին շապհոյ ։

Օ այն լուեալ շապհոյ՝ ինքն ևս զարմացաւ, և ասէ ։ գի-
տասջիք, զի այն փախուստ ի նենգուէ պարսից եղեալ է ։ և
վաղվաղակի յղեաց զկնի արշակայ դեսպանս ։ և երդմամբ յու-
ցաներ նմա, թէ քնաւ չունիմ ինչ խեղճ ի սրտի վերջ ։ մի՛ հա-
ւատար բանսարկուէ այլոց ։ բայց արշակ ոչ անսաց նմա, և ոչ
գնաց առ նա ։ և առաւ բացաւ դուռն մեծի պարսպի ի մէջ
արշակայ և շապհոյ աւելի քան զամս երեսուն (գուցէ ամօք
զամիսս իմանայ թուղանդ) ։ Բայց շապուհ արքայ (ոմն գրէ
ի գլ. 21.) առն ուխտն ողոքեր և աղաչեր զարշակ հաստատել
զհաշտութի խաղաղուէ ի միջի, և լինել ինքեան օգնական
ընդդէմ յունաց ։ այլ արշակ ոչ զիջաւ, և ոչ իակ պէտի ա-
րար ։ Ապա իբրև եղև հաշտութի ի մէջ պարսից և յունաց,
դրեաց կայսրն առ շապուհ, թէ տամ քեզ զմծբին ։ և ամիո-
փեմ զձեռն իմ յձէն հայոց ։ և չունիմ ինչ ընդ հայս ։ Յայն-
ժամ ժողովեաց շապհոյ զօր բազմ՝ գայր ի վր արշակայ ։ զոր
լուեալ սահմանապահին արշակայ, որք նստեին յձին ատր-
պատականի ի գանձակ (յն ի դաւրեժ), ազդ արարին նմա։

Եւ արշակ հրամայեաց վասակայ զոր գումարել զդէմ պատ-
սից · և ի ժողովել նոր զօրս՝ գնան ի հայս վաճառն բիւր ,
յոր վեց հարիւր հազար հեծելազօրք կուռ վառեալ ընդ նիզակս
ոսկի՝ համակ միահիւրք՝ միահանք և միամիտք ։ Իմեալ ա-
զօքն վասակայ ի վէր զօրացն պարսից՝ եհար և ոտնակեաց զա-
մենեսին · և միայն շապուհ արքայ կարաց միաձի ձողոպրել
զանձն ի կատորածէ ։

Ի երրորդ ժողովեաց շապուհ զօրս անթիւ և անհամար (ոմն
պրն ՝է փլ · 22 ·) իբրև զաւազ առ ովկն ծովու , և փիղս բազմս ·
և յերիս բաժանեալ զոյնս՝ զառաջինն գունդն ինքն էառ ·
զերկրորդն եղ անդիկանայ · և զերիցն հազարապետայ · և
խաղաց ընդ երիս առհասնս յԱծն հայոց ։ Ոչ այն լուեալ արշա-
կայ՝ և նա ժողովեաց անհամար և անթիւ զօրս · և յերիս բա-
ժանեալ զնոսա՝ զմի գունդն եղ ի ձեռս վասակայ · զերկրորդն
ի ձեռս բագրատայ եղբօր նորա · որ թէպէտ բախած էր , բայց ի
պատերազմունս քաջ · և զերիցն ինքն էառ ։ Այլ ի խաղալ
առցա ընդ երիս առաջս յայլևայլ տեղիս , վասակ դիմեաց ի վէր
հազարապետայ , որ առաջատակերք զերկերն վանանդայ · և-
հաս գնաց և ցրուեաց զնոսա զեղեմ զօրսն նոր · և զհետ սպառեալ կոտո-
րեաց զամենեսին ։ Ոչնչով արարք և բագրատ ի նմին աւուր ընդ զօրս
անդիկանայ , որք բանակեալ էին ի վերայ ձկնատեղիս առաջ-
ոտեայ · պատահել առաք բագրատայ և ի գունդս փղաց , և տե-
սեալ զփիղ մի զարդարեալ՝ հասանելոցս , թէ շապուհ ի վէր
նորա իցէ · էջ յերիվարէն , և հասեալ ի փիղն՝ եմուտ ի ներքոյ
նորա , և եհար · և փիղն մեռեալ անկաւ ի վէր բագրատայ և ձըմ-
լեաց զնոսա ։ Հասեալ և արշակ ի նմին աւուր ի գունդ թիւրին
ի գաւառն բասենոյ ի տեղին ոսկան առայեալ · և ի վերայ ան-
կեալ՝ էառ զնոսա զեղեմ · բայց միայն շապուհ զերծաւ մեռանի ։
Այս ապա պատահեալ միմեանց երեքին գունդք հայոց՝ ուրախ
լինէին · և դիմեալ ի կողմանս պարսից՝ յաւարի առնուին ըզ-
բազում տեղիս ։

Յետ այսորիկ պատմէ բուզանդ ՝է փլ · 23 · և 24 · թէ միումն
ի նախարարացն հայոց մերուժան արծրունի ապստամբեալ
յարշակայ՝ չորս առ շապուհ · և ուրացեալ զՔաւառան՝ եղև
զօրավար շապհոյ · և հրամանաւ նորա ժողովեալ զօրս աւելի
քան զոր յառաջն՝ դիմեաց յԱծն հայոց , մինչդեռ արշակ ի
կողմանս անդեղ տան էր · և այրեաց զբնակ տեղիս , և կոտո-
րեաց զբնակն · և զօրք նոր քանդեալ աւերեցին զմիջնաշխարհն ։
Խաղայ ի վէր նոցա վասակ տոհմն Հազարաւորք · և նոցա ա-
ճապարեալ գերեցին զանհամար ոգիս , և անկան ի փախստեան ·
և երբեմն եհաս առնէր վասակ ի կողմանս աստղատոհմականի , նոքա
Թողեալ զգերիսն՝ փախեան ի պարսս · և վասակ առեալ ըզ-

գերին՝ արձակեաց ՚ի տեղիս իւրեանց • և ինքն դեգերէր անդ • ուր եկեալ և արշակայ՝ պահէին զկողմանան զայնոսիկ • Եւսկ զօրք պարսից՝ որոց ոչ չափ գոյր և ոչ սահման, առաքնորդ առեալ իւրեանց զմերուժան՝ դիմեցին անդրէն ՚ի հայս ընդ այլևայլ Ճանապարհս ընդ աղձնիս, ընդ ծոփս, և ընդ գաւառն անձաւայ և ընդ այլ • և յաւարի առին զշն • և հրձիգ արարին զբջնի տեղիս • և քանդեցին զբջնի ամուրս • և հարին ՚ի սուր զյոլով անձինս • և ՚ի գերուի վարեցին զանհամար մանկունս • և աւերեցին զտիգրանակերտ • առին և զանի, և յափշտակեցին անտի զոսկերս Թ՚ագրացն հայոց • բայց չկարացին քանալ զգերեզման սահատրկոյ արքային * վասն անհեթեթ սկայացուցիկ հաստատչինած Ճարտարապետին արարածոցն ‖ • և անտի եկեալ դիմեին ՚ի վիր արշակայ •

Նասին գուժկանք առ արշակ, և ասեն • գու առաջոյ սպառեաս Թշնամեաց • իսկ Թշնամիք զմիկամբք անկեալ քանդեցին զնա • Ոսկի հարաւ արշակ և զօրավարն վասակ • և հանդէս արարեալ զօրաց իւրեանց՝ գտին վաԹսուն հազար այր ընտիր պատերազմող • Ելեալ զնա վասակայ՝ խաղաց ՚ի վիր պարսից • իսկ արշակ մնայ յամուր տեղւոջ յերկիրն մարաց • Նասեալ զօրացն հայոց մծտ յարարատ՝ գտին անդ քանակեալ զզօրս պարսից • անկան ՚ի վիր նոցա և կոտորեցին զամենին • առին զնամ աւարն և զոսկերս Թ՚ագրաց • միայն շապուհ և մերուժան ապրեցան •

Յետ այսորիկ սկսանի պատմել զուզանդ զբջնի պատերազմունս • Ելն հայք (ասէ ՚ի գլ • 25 •) օգնութի՚ ՚ի հոնաց և յալանաց • և դիմեալ յատրպատական՝ կոտորեցին անդ զնամ զօրս պարսից, որք գային ՚ի հայս • և քանդեցին զբոլոր ՚ն աստրպատականն, և վարեցին ՚ի գերուի * քան զաստեղս բազմութի՚ ‖ • և զայլան ընդ սուր հանին • Ելն ապա զօրավարն պարսից վին չորեք հարիւր հազարաւ ՚ի հայս • և արշակ կոտորեաց զնա առ հոտարակ • ոչն գրե ՚ի գլ • 26 • Ելն ապա անդրիկան զօրավար նոյնչափ զօրօք քաւառաւն բիւրուք • և վասակ երկոտասան բիւրուք եհար զնամին • ոչն գրե ՚ի գլ • 27 • Ելն ապա բազմօք հազարաւուիւտ • և վասակ մեռաստան հազարաւ առատակեաց զնա • ոչն գրե ՚ի գլ • 28 • Ելն ապա դմանուհդ վռեմական՝ իննսուն բիւրուք • և վասակ եհար զամենին • ոչն գրե ՚ի գլ • 29 • Ելն ապա վահրիճ չորեքհարիւր բիւրուք • և վասակ քաւառաւն հազարաւ կոտորեաց զամենին • որպես գրե ՚ի գլ • 30 • Ելն ապա գումանդ շապուհ ինն հարիւր հազարաւ առաջնորդութի՚ մերուժանայ • և վասակ կորոյս զամենին և սպառեաց, անմի արարեալ • * բայց միայն չարագործն մերուժան միայն ձողապրեալ փախչէր անկանէր յերկիրն պարսից

սից ‖ · որպէս գրէ ՚ի ՌԼ · 31 · Եւ ինքն ապա գեհկան չորեքք հա-
րիւր բիւրուք ներգակաւորօք՝ հանդերձ մերուժանաւ · և վա-
սակ եօթանասուն հազարաւ եհար զզօրսն · և զինապետսն
արար Հալածական հանդերձ մերուժանաւ · ոյզ գրէ ՚ի ՌԼ · 32 ·
Եւ ինքն ապա սուրբն պահլաւ բազում գնդօք և անթիւ փղօք ·
և վասակ երեսուն հազարաւ կոտորեաց զինն քայ ՚ի մերուժա-
նայ · որպէս գրէ ՚ի ՌԼ · 33 · Եւ ինքն ապա ազգական վեհմեհան
* անչափ բազմութեբ և անթիւ զօրօք ‖ · և վասակ եհար զամե-
նեսեան · * և զմի ՚ի նոցանէն ոչ ապրեցուցանէր · քայց միայն
,, փախչէր չարագործն մերուժան ‖ · ոյզ գրէ ՚ի ՌԼ · 34 · Եւ ինքն
ապա զիւկ նոմիրականապետն շասհոյ՝ ունելով ըզ իւր * գումար-
,, տակ բազում իբրև զաւազ ծովու բազմութեբ ‖ · և վասակ
զվէց նոյ կոտորեաց , և զվեցեան հալածականն արար · ընդ որս
զերծաւ և մերուժան · ոյզ գրէ ՚ի ՌԼ · 35 · Եւ ինքն ապա սուրբն
պարսիկ՝ վաթսուն բիւրու · դիմեաց վասակ ՚ի վէր նոցա տասն
հազարաւ · և հետիոտս եղեալ կոտորեաց զնոսա · և զսուրբն
կալեալ էած առ արշակ · և քարակոշկոճ արարին զնա ·
* քայց մերուժանն ապրեր փախստեայ ‖ · ոյզ գրէ ՚ի ՌԼ · 36 ·
Եւ ինքն ապա հրեշտակս արշակունի ինննասուն բիւրու · և վասակ
հալածական արար զնոսա · ոյզ գրէ ՚ի ՌԼ · 37 · Եւ ինքն ապա աղա-
նաոզան պահլաւ չորեքք հարիւր բիւրու · և արշակ հանդերձ
վասակաւ և այլովք նախարարօք եհար զնա · և զինապօրդան
արար փախստական · ոյզ գրէ ՚ի ՌԼ · 38 · Եւ ինքն ապա բոյեկան
քառասուն բիւրու յատրպատական · և վասակ եհար զամենին ·
և մտեալ ՚ի դավրէժ՝ այրեաց զապարանս արքային պարսից ,
և զպատկեր նր նետաձիգ արար · * քայց միայն փախչէր մե-
րուժանն ‖ · որպէս գրէ ՚ի ՌԼ · 39 · Եւ ինքն ապա վաչականն պար-
սիկ ումեւատան բիւրու · և վասակ կոտորեաց զնա · * քայց
,, միայն սպրեր սակաւուք փախուցեալ մերուժան ‖ · որպէս
գրէ ՚ի ՌԼ · 40 · Եւ ինքն ապա մշկան երեսուն և հինգ բիւրու · և
վասակ զամն կոտորեաց · այլ մերուժան զերծաւ · ոյզ գրէ
՚ի ՌԼ · 41 · Եւ ինքն ապա մարիճ կամ մարուձան վաթսուն բիւ-
րու · և կորեաւ խրովքն հանդերձ · * քայց միայն փախչէր մե-
րուժանն ‖ · ոյզ գրէ ՚ի ՌԼ · 42 · Եւ ինքն ապա զինդակապետ հին-
նասուն բիւրու · և վասակ ըզ սուր եհան առ հասարակ զամենին ·
* քայց միայն Ձողսպրեալ սպրեր մերուժան վատանշան ‖ ·
ոյզ գրէ ՚ի ՌԼ · 43 · Եւ ինքն ապա սակատան չորեքք հարիւր հազա-
րաւ · գնաց ՚ի վէր նոյ արշակ · այլ նախարարքն հայոց ոչ թողին
նմա մտանել ՚ի պատերազմ · եւ վասակ հանդերձ նախարա-
րօք ընդդէմ պարսից · և մնացեալ զամն սրով · * քայց միայն
,, սպրեր մերուժանն արծրունի փախուցեալ ‖ · ոյզ գրէ ՚ի ՌԼ ·
45 · Եւ ինքն ապա շապուհան տաճատապետ հինգ հարիւր բիւրու ·

և վասակ կոտորեաց զնոսա • * քայց միայն սպրեր մերոյ ժանն
,, փախուցեալ ‖ • ոյզ գրե ՚ի գԼ • 46 ։ Լ,ևն ասպա մոգաց Հան-
դերձապետ ուղի և տասն քեռորս • և վասակ հալածեալ գնաց •
և եհար զանձին * անմի արարեալ • քայց միայն մերոյ ժանն
,, ՚ի տաճիկ ձի նստեալ փախչէր ‖ • ոյզ գրե ՚ի գԼ • 47 ։ Լ,ևն
ասպա համբարձակապետան շահիոյ ինքնասէն քեռորս • և վասակ
տասն հազարաւ զարանամուտ լեալ, և ՚ի գիշերի անկեալ ՚ի
վերն նոյ՝ զանձին կոտորեաց • * քայց միայն մերոյ ժանն արտա-
,, քոյ գնդին գիտել փախչէր ‖ • ոյզ գրե ՚ի գԼ • 48 ։ Լ,ևն ասպա
մհիկան քառասուն քեռորս • և վասակ առիւծաբար ծախեաց
զանձին • * քայց մերոյ ժանն և այն անգամ փախչէր ‖ • ոյզ
գրե ՚ի գԼ • 49 ։

Լև զկնի այսր ամի վաստակել քուզանդոյ ՚ի պատմելոյ զայս-
պիսիս, ասպա յաւելու ՚ի գԼ • 50 • Թէ երեսուն և չորս ամ պատերազմ
տուեալ հայոց ընդ պարսիկս՝ ձանձրացան • և քեզմ նախարարքն
Թողեալ զնոքա իւրեանց զարշակ՝ գնացին առ շապուհ • և քեզմ
ևս գնացին առ կայսրն յունաց Մաւրիկ և վահան եղբայր վասա-
կայ հրապուրեալ ՚ի մերոյ ժանոյ՝ որ էր քեռորդի իւր, գնաց ՚ի
պարսս • և ուրացեալ զՀաւատս՝ էառ զքոյր շապհոյ զորմիզ-
դուխտ • և գրգռեաց զնա առաւել ևս ընդդէմ արշակայ և վա-
սակայ • Լսակ այլ նախարարքն և մեծամեծք՝ որք մնացեալ էին,
դիմեցին առ մեծն ներսէս • ոյզ գրե ՚ի գԼ • 51 • և ասեն ցնա •
մեք ոչ ևս կարեմք ծառայել արշակայ և օգնել նմա ՚ի պա-
տերազմունս • զի լքան անձինք մեր • * զի ոչ մի ամ մեզ Հան-
,, գիստ եղև ՚ի պատերազմէ • և Համակ սրով և սուսերօք և
,, ՚ի պաքս և ՚ի տեգս նիզակաց զբրտունս երեսաց մերոց
,, ջնջեցաք ‖ • լաւ ևս մեզ ասեն ծռել արքային պարսից՝
քան սմա ։ Լև սքեն ներսէս խրատեր զնա կալ ընդ Հնազանդութիւն
արշակայ • քայց նք ոչինչ անսացին նմա, այլ՝ մեկնեալ գնա-
ցին յիւրաքանչիւր տեղիս ։

ԼԻ՝ Վէ ասերման արշակասանայ ։

(1) Ա յսմանէ ամենևին այլաստարազ գրէ քուզանդ • ը • 13 • և 24 • յորմէ և մեսրոպ երից • ՚ի գԼ • ը • և կիրակոս, և այլք
ումանք • քանզի համարի՝ Թէ զայն քաղաք ՚ի ժամկի աքսորանաց
ներսիսի չինեաց արշակ • և Թէ սքեն ներսէս ՚ի դարձին իւրում
իմացեալ զնորն ՚ի խաղաղ փոխանորդէն իւրմէ՝ գնաց առ Թա-
գաւորն • և յորդորանօք և սպառնալեօք խրատեաց զնա քառ-
նալ ՚ի միջոյ զձեռայեղսն, և յրուել զարարածս բնակիչս
նր • * իսկ Թագորն ծաղր առնէր ասէ զբանսն կՀիկսին, և
,, մկՀայր զնր առայելովքն ‖ ։ Լնդ որ զայրացեալ սքեն՝ անէծ

զարշակաւան . և զկնի երից աւուրց անկաւ ի բնակիչս նորա
սիտ հարուածոց . * զոր չարաչեղն ինն կոչեն . իսկ կէսքն
ժանդ սնոճանեն ‖ . և հարան յախտէ անտի մարդ և անա-
սուն . և ի միջոցի երից աւուրց մեռան աւելի քան զքսան
հազար . և տունք քանդեալ կործանեցան : Օ այն տեսեալ
արշակայ՝ գնաց առ սբն ներսէս , և աղաչեաց զնա աղօթել
վս իւր . քանզի երկեաւ՝ թէ գուցէ և ինքն պատուհասեսցի :
Եւ ոչն խրատեաց զնա բնիւր քանիւք՝ գնալ ի Ճանապարհս
արդարոյն . զոր յանձն էառ արշակ , և ուխտ եդ չանցանել
երբէք զբանիւք սբն : Այս պատմութիւն այլազգ աւանդի ի
խորենացւոյն . զի նա դնէ , թէ նախարարքն Հայոց զայրացեալ
ընդ անարժան գործն , զոր արար արշակ՝ շինելով զարշակա-
ւան , և ընդ փախուստ ծիլից իւրեանց ի նոյն ի ձեռակերտ
նէր , դիմեցին ի վէր քաղաքին . և ի սուր սուսերի մաշեցին
զբնակեալսն ի նմա . և միայն զմանկունս ապրեցուցեալ ի
գերուի վարեցին . և թէ՝ վասն այսր գժոխարեալ արշակայ ըն
նախարարսն՝ վրէժս խնդրեաց ի նոցանէ , ևն . որպէս եդաք ի
պատմութ :

Ի վէր առաջինոյ լինելոյ սբն Ներսէսի ի Ժողովն Կոստանդինուպօլսոյ :

(2) Ի պատմութ Ժողովոյն Կոստանդինուպօլսոյ թէպէտ և ոչ
յիշի անուն սբն ներսիսի , բայց Հաւանականագոյն է ասել ,
թէ անդ գտաւնա . զի որովհետև մեծն Թէոդոս միևչև գա-
ւարտիլ Ժողովոյն պահեաց զնա ի քաղաքի անդ իբրև զնբ
ոք , և իբրև զպատրիարգ Հայոց , ըստ որում աւանդէ խորենա-
ցին . ե . 33 . և յովհաննէս կԹղկս , անտեղի երևի ոչ մնծա-
նել զնա ի Ժողովն : Օ այսմանէ վկայէ և շնորհալին ի վի-
պասանութ . նէ . * ի յաղթայն վերադարձեալ , որ Թէոդոս
„ մեծ կոչեցեալ . ի սբ Ժողովն որ գումարեալ , յերից յիսնից
„ միւն սա եղեալ ‖ : Եւ գրիգոր կԹղկս տղայ Հաստատեալ զայս ի
Թուղթս իւր , զորս գրեաց առ մանուէլ կայսր , և առ հիւ-
սիսական վիշապս : Եւ խաչիկ կԹղկս ի Թուղթն առ մեսրոպ
պօլիտն սեբաստիոյ ի գիրս ասողկայ . ե . 21 : Օ նոյն աւան-
դէ և յայսմաւուրքն ի նոյեմբ . 19 . և ի յունվ . 18 : Եւ փոս
պատրիարգ յունաց զնոյն գրէ առ զաքարիա կԹղկս , այն Թէ
ներսէս էր ի Ժողովն անդ :
Ասմանք համարին , թէ սոկրատ պատմիչ յունաց ևս աւան-
դէ զայս . զի գրի անդ ի հայերէն Թարգմանութ այսպէս .
* զայ ի Ժողով ի կոստանդինուպօլիս գամասոս ի հռոմայ .
„ և ներսէս պարթև հայոց մեծաց . զոր վաղեսի էր արտա-

„ սահ-

,, սահմանեալ, և Թէոդոսէ ածեալ՝ ունէր մեծարանաց զ, մինչև
,, հաւատն ստուգեցաւ ի ժողովին. և ժողովեցան ձՁ. եպիս-
,, կոպոսունք ‖ : Այլ յայլ քան սակրատայ ի քնադիրս յոե-
նաց ոչ յիշի ներսէս. ուստի յայտ է Թէ յայլոց մուծել է այն,
ոյն և այլ բազմ ինչ :

Իսկ Թէ ընդէր անուն այսր մեծի սրբոյ Հայրապետի ոչ ըն-
Թերցեալ լինի՝ ի կարգս Հարց ժողովոյն՝ ի ստորագրութեն,
ասելն է, Թէ գուցէ այլայլեալ իցէ անուն նոր ըստ տառիցն՝ ի
կարգս անուանց, մինչև ոչ գոյշ, Թէ ուր իցէ : Ասասցո
զայս ոմն ինչ ևս հարևանցիկ յիշատակել արժան է. իբր զի՝ ի
յետին գիրս ինչ Հայոց ասի, Թէ ժողովն կոստանդնուպօ-
սոյ լեալ իցէ նաև հրամանաւ արշակայ Թագաւորին Հայոց. և նա
առաքեալ իցէ զոգն ներսէս՝ ի ժողովն. բայց չեղև այսպէս.
ոյն յայտ է՝ ի պատմութեց :

Ի վեր հատուածէ արշակայ՝ ի ձեռս շապհոյ, և տուրելոյ՝ ի բերդն
անյոյշ. և հանիւս նը :

Ուզանդ յետ պատմելոյ զբնչմ պատերազմունս արշակայ ընդ
շապհոյ, և յետ գրելոյ՝ Թէ նախարարքն առ հասարակ Թողին
զնա. ոյն յիշեցաք՝ ի ծանօթ՝՝. խղ. (1). ապա սկսանի պատ-
մել. գոյ. ը. գլ. 52. ինչպէ՞ է 54. Թէ ոյն անկաւ արշակ՝ ի
ձեռս շապհոյ, և զինչ պատահեաց նմա :

Յորժամ եառեալ ասէ շապուհ, զի նախարարքն Հայոց Թօթա-
փեցան յարշակայ, յղեաց հրովարտակ առ արշակ հանդերձ
պատարագօք, և կոչեայ զնա սիրմ առ՝ ի հաստատել զբա-
րեկամութիւն՝ ի միջի : Իսկ արշակ Թէպէտ և կամէր տակա-
ւին պատերազմիլ, բայց զի զօրք Հայոց ոչ կամէին, կայր տա-
րակուսեալ. ապա՝ (ոյն գրէ՝ ի գլ. 53.) խնդրեաց զերդումն՝ ի
շապհոյ. և նա ըստ պարսից դենին եառ երդումն մեծ : Այլ ար-
շակ ոչ հաւատաց այնմ : Ընդ առկայն առեալ Հայոց զբեւկար
երդմանն շապհոյ՝ առին պէրն զարշակ փութալ գնալ առ նա.
և արշակ բռնադատեալ՝ ի նոյն՝ ակամայ կամօք եկ և գնաց
հանդերձ վառակաւ : Իբրև հասին՝ ի պարսս, կալան զնոսա
պատուարն շապհոյ և պահեցին՝ ի բանակի զօրաց : Ոչեաց
շապհոյ և տարան զնա դրժել՝ ի բանակ զօրաց :

Ուրանան եառ յայնժամ շապուհ, (ոյն գրէ՝ ի գլ. 54.) և կո-
չեցին զդիւթա և զմոգս. և պատմեաց նոյն՝ որ ինչ անցք ան-
ցեալ էին՝ ի սկզբանէ հետէ՝ ի մէջ իւր և՝ ի մէջ արշակայ՝

պատմեաց և ասացա , Թէ երդուաւ ինձ ՚ի ձեռն երիցանց յաւետարան իւր . և իմ երկբայեալ հարցի ցմարն երից տխրութենէ . և նա ասաց ցիս , Թէ մեք այդպարտաւորք տուընք նմա զերդումն . իսկ եթէ նա ստեաց , նոյն աւետարանն ածէ զնա առ ոտս ձեր . և ահա այժմ լցաւ բանն նոր : Եւ ես եթէ գիտէի , Թէ յայսմհետէ մեզ նա լիւրում ոչխարս , խաղաղութեամբ արձակէի զնա . դուք զի՞նչ խորհիք ՚ի վերայ այսր :

Պետրոս առաքեալն մոգքն , և ասեն . Թող մեզ այսօր , և վաղիւնն առաւօտուք քեզ՝ զոր պարտ է առնել : Պա ՚ի վաղիւ անդր ժողովեալ նոցա առ շաւուխ՝ հարցին . զի՞նչ ասեն խօսք այժմ ընդ քեզ արշակ , և զիարդ համարիս զանձն : Ա՛ստ արքայ . խօսք խռովարհութեան , և համարիս զանձն իբրև զհող ոտից : Ասորհուրդ եառն նմա մոգքն , և ասեն . տուր քեզ ՚ի սահմանացոյն հայոց երկու բեւռինս հողոյ , և կահոյր մի ջուր (յն կևչիւմ մի ջուր) . և հրամայեա՛ , զի սփռեացեն զհողն զայն ՚ի կէս յատակի վրանին քո . և զջուրն ցանեսցեն ՚ի վերայ նոր . և դու առեալ զարշակ ընդ քեզ տարցիս ՚ի վրանն . և շրջեսցիս ընդ նմա նախ ՚ի վեր հողոյ պարսից , և ապա ՚ի վեր հողոյ երկրին հայոց . և տեսս , Թէ զի՞նչ խօսի . և համասցիս զնմա՝ զոր ունի նա ՚ի սրտի . զի զոր ինչ խօսեսցի նա ՚ի վեր հողոյն հայոց , զայն ունի նա ՚ի սրտի , և զայն արտասանէ՝ յորժամ հասցէ յերկիր հայոց :

Յայնժամ վաղվաղակի առաքեալ շահոյ զծառայս իւր ՚ի հայս՝ եւ բերել զհողն և զջուրն . և արար ըստ բանի մոգուցն : Եւ յաւուր միում եւ ածել առ ինքն զարշակ . և զձեռանէ առեալ նոր՝ սկսաւ շրջիլ և ձեմել ՚ի վրանին . և յորժամ էին ՚ի վեր հողոյն պարսից , ասէ շաւուխ ցարշակ . ընդէր եղեր իմ թշնամի արշակ . եւ ոչ զորդւոյ սիրեցեր զքեզ . կամեցայ տալ քեզ զդուստր իմ ՚ի կնութեն . և դու արհամարհեցեր զիս . և այս երեսուն ամ է՝ զի պատերազմեցար ընդ իս : Ա՛ստ արշակ . մեղայ քեզ և յանցեայ . ես արդարև վանեցի զքեզնահիս քո , և առնուի առնուլ պարգեւս ՚ի քէն . քայց առեալիք իմ նենգեցին զիս , և արկին խէթ զքէն ՚ի սիրտ իմ . վայ և յայնմ ժամի փախուցեալ առ ՚ի քէն՝ քայլ դուն պատերազմի ընդ քեզ . և առկայն երդումն՝ զոր երդուայ քեզ , նա եած զիս այժմ յոտս քո . և առաւիկ կամ ես ՚ի ձեռս քո . արա ընդ իս՝ ոչ և հաճիս . և եթէ կամք իցեն քեզ , սպան զիս . զի ես ծառայ քո եմ , և յանցաւոր առաջի քո :

Իսկ շաւուխ ձեռնտուի դրձել ընդ արշակայ՝ եած զնա ՚ի վեր հողոյ հայաստանեաց . և ընդ կոխել արշակայ յայն հող՝ սկսաւ խօսիլ խաղաղական , և ասէ ցշաւուխ . ՚ի քայ կաց յինէն ծառայ չարագործ , որ անիրաւութեամբ տիրացար ՚ի վեր տերանց

քոց՝

քոց • այլ ես ոչ թողից քեզ և ոչ զաւակի քում զվրէժ նախ-
նեաց իմոց և զվրէժ մահու արտաւանոյ արքային • դուք ծո՛ղք
էիք պարթևազանցս , և այժմ կալեալ ունիք զաւարձ մեր •
այլ ես դարձուցից զտեղիդ մեր առ մեզ ։

Լսելոյ պէտին տուէալ նմ՛ շապուհ՝ սկսաւ շրջիլ ընդ նմա վերա-
տուն , և էած՛ ի հող պարսից • անկաւ անդ արշակ յոտս շապու-
հոյ , և աշխարհը զառացեալն • և խոնարհեալ խնդրեր զթո-
ղութի ։ Ետուաւ զնա շապուհ դարձեալ՛ ի հող հայոց • և նա
սկսաւ քան զառաջինն ամենայնառատանս բարբառիլ ։ Ի յոր-
ժամ միւսանգամ էած՛ ի վէր հողոյ պարսից , միւսանգամ խո-
նարհեցաւ արշակ ։ Յայն ատեն շապուհ ընդ արշակ յայգուէ
մինչև ցերեկոյ •

Իբրև ժամ եղև ընթրեաց, հրամայեաց շապուհ սեղան պատ-
րաստել • և յորժամ բազմեցան ընդ շապհոյ և այլ թիւրք աղ-
գաց՝ որք կային առ նմ՛, ոչ նստուցին զարշակ առընթեր շապ-
հոյ՝ մի՛ յառաջն էր սովորեալ, այլ՝ ի խոնարհ քան զայլս , ուր
էր սիրեալ հող հայաստանեաց ։ Ընդ բազմեալ արշակայ՝ ե-
կաց վայր մի ուռուցեալ , և խոժոռ նայեցուածով • և ասէ
յոտին կացեալ՝ առ շապուհ • իմ՛ն այդ տեղի , ուր դուդ ես
բազմի՛ք • յոտն կաց այտի • թո՛ղ ես բազմեցայց այդր • զի այդ
լեալ է տեղի ազգի իմոյ • ապա թէ ոչ ելցես , յորժամ հասից
ց՛ծ իմ, մեծամեծ վրէժս խնգրեցից ի քէն ։ Այնժամ հրա-
ման ետ շապուհ , և բերին շղթայս երկաթիս • և կապեցին
զձեռս և զոտս արշակայ , և արկին զանուր շղթային ի պա-
րանոց նորա • և վաղվաղակի առեալ տարան զնա ի յընդմէջ
կիմ յանդմուշ , այն է՝ անյուշ բերդ , յի անսիրատակելի • երբ
զի որ միանգամ աքսորեալ լինէր անդ , անուն նո՛ր ոչ ևս լինէր
բնաւ յիշատակեալ • և եթէ ոք յիշէր զայն , մահու լինէր
պարտական • ըստ որում գրէ և պրոկոպիոս • գիրք • ա • պատ •
գլ • ե • առեալ՛ ի բուզանդայ •

Լսեալ՛ ի վաղիճն հրամայեաց շապուհ ածել առաջի իւր զվա-
ռակ սպարապետ, և ասէ ցնա բարկութի՛ • աղուէ՛ս՝ դուն էիր ,
որ այնչափ աշխատ արարեր զմեզ , և զայնչափ արիւն հեղեր
առեաց • հեղից այժմ և ես զարիւն քոյ՝ մատնելով զքեզ՛ ի
մահ աղուէսու ։ Պէ՛տ էր ևս վառակ , և ասէ • այժմ տեսեալ քո
զիս փոքրիկ անձամբ՝ վ՛ո կարձուցե՛ր հսկակիս փոքր համա-
րեցար զիս • ոչ թէ չէ առեալ քո զչափ մեծութի՛ն իմոյ • ես
մինչև ցայժմ առիւծ էի քեզ , և արդ աղուէ՛ս • յորժամ վա-
ռակ էի , ես հսկայ էի • ի ոտնս՛ ի վէ՛ր միոյ ելերին կայր , և միւս
ոտնս՛ ի վէ՛ր այլոյ ելերին • յորժամ յաջ ոտնս յենուի , զաջ լեառն
ե՛ գետին տանէի • յորժամ՛ ի ձախ ոտնս յենուի, զձախ լեառն
ե՛ յատակս վարէի • և դու այժմ՛ ի դաշտի հաստիս ե՛ իս ։

Ասէ շապուհ . ազէ տուր ինձ գիտել , ով ևս այն լերինք՝ զոր դուն ընդ ունջ տանիցիր ։ Պատմի ետ վասակ . մի՛ ի լերանցն դու էիր , և մի թագրն յունաց . յորժամ ընդ մեզ էր օրհնութիւն հայրապետին մերոյ ներսիսի , հաստատեալ էին ուղք իմ . այլ զի այժմ պակաս գտաք անտի , անկաք՝ ի խորխորատ . արդ զինչ և կամիս առնել իս ։ Յայնժամ հրամանն ետ շապուհ , և քերթեցին զմորթ վասակայ . և լցեալ զայն խոտով՝ տա-

րան՝ ի նոյն բերդն յընդմէջ , ուր աճատ արշակ ։

Պատանօրեայ պատմէլոյ բուզանդայ բդմ ինչ , և յետ գրելոյ զթագրելոյն պապայ և զգործոց մուշեղայ , սկսանի պատմել զմահուընէ արշակայ՝ ի ե . դպր . գլ . 7 ։ Եւ յետ վանելոյ ասէ շապհոյ՝ ի պապայ և՝ ի մուշեղայ՝ իբրև խաղաղութիւն եղև՝ ի մէջ հայոց և պարսից , թագրն քուշանաց՝ որ նստեր՝ ի բաղիս կիմ՝ ի բահլ քաղաքի յապգե արշակունեաց , յարոյց պատերազմ՝ ի վէր շապհոյ . և շապուհ ժողովեալ զամ զօրս իւր՝ գնաց ընդդէմ նմա . էառ ընդ իւր և զհայս՝ զորս գերեալ էր յայնչափ պատերազմունս . ընդ որս էր և ներսիսեան արշակայ դրաստամանն վերակացու տանն նմա . որ և՝ ի ձմեռն տերանայ կարգեալ էր իշխան գաւառին անդեղ տան , և վերակացու գանձուց բնաբեղ բերդին . և բարձն նմա՝ ի վերոյ էր քան զայլոց նախարարաց ։ Եւ եղև իբրև պատահեցան երկոքինն ձակատքն , հարին քաջանք զզօրս պարսից յարաչար . և գերեցին զբազմն , և հալածեցին զմնացեալսն . հասին և՝ ի վէր շապհոյ , և մերձ եկին հարկանել զնա . յայնմ վայրի ընդմէջ մնեալ դրաստամանտնեայ՝ եհար զքուշանսն , և սպրեցոյց զշապուհ ։ Եւ յորժամ եկին շապուհ յաստրեստան , մատոյց դրաստամանտնեայ մեծ ջնորհակալութիւն . և ասէ ցնա . խնդրեա՛ դու յինէն զորինչ և կամիս . և ես ոչ արգելից ։ Ասէ դրաստամանտն . * ինձ՝ ի քէն այլ ինչ ,, ոչ պիտէ , բայց տուր ինձ հրամանն , զի երթայց տեսից ,, զբնակ տէր իմ պարշակ արքայ հայոց ‖ . և թոյլ արար ինձ՝ օր մի և եթ արձակել զնա՝ ի կապանաց , և ուրախ առնել զնա ։ Ընդ այս խնդիր դրաստամանտնեայ զժուարացաւ շապուհ՝ զի յորմէ հետէ շինեցին բերդն անյուշ , եթէ ոք աքսորել լինէր անդ՝ ոչ առացաք , ոչ ոք կարէր յիշել առաջի թագրի կամ դնուորի զանուն աքսորելոյն . ապա թէ ոչ՝ նա ինքն յիշողն աքսորեալ լինէր անդ . և այս էր օրէնք անդառնալի ։ Ոչ ասաց շապուհ դրաստամանտն . չարիս խնդրեցեր և մահ քումդ անձին . բայց քզի՝ ի մահուընէ զերծուցեր զիս , մահ ընդ մահուդ փոխանակեացի , և մահ քոյ քաւեսցի՝ ի քէն . և որ չէր երբէք լեալ , լեսցի քեզ՝ ոչ և խնդրեցեր ։ Եւ ետ նմա փուշտիպան մի կամ ասպիկան մի հաւատարիմ , և հրովարտակ կնքեալ արքունի մատանեաւ՝ գնալ յանյուշն բերդ ։

Ի նայել գրաստատնատայ անդր՝ իբրև ետես զարշակ, անկաւ յոտս նր. արձակեաց զնա ի կապանց ձեռաց և ոտից և յանդրոյ շղթայից պարանոցի նորա. լուծաց զգլուխ նորա, և սրբեաց և էած զմարմինն. զգեցոյց նմ պատմուճան ազնիւ. նստոյց զնա ի վր վայելուչ բազմարանի. եղ առաջի նր խորտիկս համա- դամն, ոյր վայել է Թգրի. մատոյց նմ գինի պատուական. սփոփեաց զանձն նր, և ուրախ արար զնա. կաճ և գուսանս, և երգօք նուիագարանաց բերկրեցոյց զսիրտ նր։ Ետ ուտել զխորտիկսն՝ մատուցին սպասաւորքն զմիրգս՝ խնձոր և վա- րունգ և սմիւռ. և բերին դանակ, զի ըստ հաճոյս իւր հատցէ և կերիցէ ի պտղոցն. և գրաստատնատան յոտին կացեալ մա- տուճակէր ծաղկահամ գինի, և սիսեռ արեր զնա։

Ա՛ յորժամ արբեցաւ արշակ, հիշեաց զփառս ԹգրուԹե իւ- րոյ. հիշեաց զմեծուԹի իւր. հիշեաց և զորս գործեալ էր ի կեանսն իւրում. յոգւոյ եհան, և ասէ ցաւագին. վայ ինձ՝ վայ մեծի արշակունւոյս, որ յայսմ ի սոյն չափու՝ այս անդք անցին ընդ իս։ Օ այս ասացեալ՝ հայեցաւ յաջ ձեռն իւր, յոր կալեալ էր զդանակն հատանել զմիրգ. և գտանայեալ յանձինն՝ մխեաց զդանակն ի սիրտ իւր, և անդէն փչեաց զոգին և մեռաւ։ Իբրև ետես զայն դրաստատնատն, աձա- պարեաց և եհան զդանակն ի սրտե նր. և հարեալ ուժգին ի կուշտ իւր՝ մեռաւ և ինքն։

Օ այս պատմուԹի՛ ի վր պարտաւորելոյն արշակայ հնարիւք մոգուց, և աքսորանաց և մահու նր, ի մէջ բերե և պրոկո- պիոս Հռետոր՝ պատմիչ յոյն. գիրք • ա • յաղագս պերպեդ • գլ • 5 • բառ ստ բառ օրինակեալ ի բուզանդայ. զորոյ ըզ- գիրսն կոչէ պատմուԹի՛ Հայոց. որովհետև ի յոյնս ևս կայր այն պատմագիրք. և փիսկ շատիոյ դնէ բակուր՝ յաւելեալ ինչ ինչ հանգամանս։ Ոակ փոտ պատրիարգ յունաց՝ որ համա- ռօտեաց զպատմուԹի՛ պրոկոպիոսի, համարի զայս առասպել ինչ. ոյր և է իսկ, եԹէ ոչ ըստ բոլորին՝ գէԹ ըստ մասին։

Պատանօր գիտել արժան է, զի ըստ պատմուԹե՛ Հայոց՝ զոր ա- ւանդէ խորենացին և այլ ամ մատենագիրք մեր, ևս և բու- զանդ, նաև պրոկոպիոս, ոյր և տեսեր, Թէպետև արշակ ան- ձամբ զանձն սպան յոտսահատուԹե՛, սակայն կլեմէս գալա- նոս համարի, Թէ սոյն այս արշակ չարչարեալ էր ի յուլիա- նոսէ ուրացողէ՝ և նահատակեալ ևս ի շապհոյ վր հաւատոյ ընդ այլ բիւրաւոր եկեղեցեաց. Քզի գրէ • գիրք • ա • գլ • 6 • երես • 48. այսոքիկ • * Եվսեպէտ Հայոց պատմիչքն ասէ պարսաւանօք չարա- ,, խօսեն զարքայէն իւրեանց արշակայ յաղագս անխրատ գոր- ,, ծոցն նորին, սակայն պատմիչքն Փառանկաց յոյժ գովաբա- ,, նեն զնոյն արշակն վր պատճառն հաւատոյ • Քզի յաղագս

,, անուճանն քան կրեալ էր զհալածումն մեծ և զչարչարանս
,, յոլով՝ ի ներքոյ յուլիանոսի ուրացօղ Թ֊ագւոյն , և շատկոյ
,, անհաւատ արքային պարսից • Եւ առաւել՝ զի յոյժ եղև
,, հաւատարիմ և սիրելի բարեկամ հռոմայեցւոց ‖ ։ Ար յե֊
բէս • 50 • յաւելու • * Ի՛ոդ՝ ոչ Թէ միայն Թագւոյն արշակ , այլ
,, և ամենամեծ բազմութիւն հայոց քրիստոնէից քաջութիւն մե֊
,, ծաւ չարչարութեան և անողորմաբար սպանանեցան՝ ի շապ֊
,, հոյ արքային պարսից վէմ խոստովանութենէն՝ քոյ ‖ ։

Մեծ էր արդարև արշակայ , և երանելի տայի նմա , եթէ այսպիսի չարչարանաւք չարչարեալ էր վէմ հաւատոյ և նահատակել՝ ի քէն • այլ՝ քզկի չեղև այսպէս , հարկ եղև մեզ քննել առաւելոր , Թէ ուստի՛ ասէ զայս կղեմէս ։ Պատմիչք Փաւստոսի կաց ասէ՝ այսպէս ասեն • և պատմիչ Փաւստոսի ասելով՝ իմանայ աստ զամմիանոս զերևելին՝ ի մատենագիրս լատինացւոց , և զողոմեոս անուճանի պատմիչ յունաց • զի զոսա և եթ՝ ի մէջ բերէ ։

Ար սակայն՝ ի գիրս սոցա ոչ գտանի այսպիսի ինչ ։ Ար նախ՝ գրութի՛ ամմիանոսի յայլ ինչ հայի • այո է՝ Թէ շապուհ նեղգործէ կոչեալ զարշակ՝ աքսորեաց՝ ի հեռաւոր տեղիս • և յաքսորանն անդ սպանաւ նա արով ։ Ի՛հա և բանքն ամմիանոսի , զոր գրե՝ ի էջ գէս • * Ի՛սկ Թագւոն պարսից՝ երկայնակեացն այն
,, շապուհ , որ անդստին՝ ի սկզբանէ ՝ուրուքի իւրոյ կամակար
,, յօժարեալն էր յաւար և յաւեր , զկնի մահուն յուլիանոսի
,, կոյսեր՝ հաստատեալ զհաշտութի՛ խաղաղութե՛ որ ամենա֊
,, լին էր (յունաց) , առ փոքր մի բարեկամ երևեցաւ մեզ՝
,, ինքն և իւրայինքն • բայց անդէն իսկ առ ոտն հարեալ
,, զուխտն յաւուրս յուլիանոսի՝ ձեռն սկսեր յՅն հայոց • ոմն զի
,, յետս դարձուցեալ զնա՝ ի հաստատութե՛ անդորը խաղա֊
,, ղութե՛ (զոր ընդ յոյնս ունէին) , արկեալ ընդ ՝ուրուքի իւ֊
,, րով ։ Ար նախ զառաջինն՝ նենդութե՛ խաբէութե՛ ջանա֊
,, հնար լեալ՝ զազգն ողջոյն արկանէր ըստ Թեթև տուգանաւք •
,, և նեղէր զոմանս՝ ի մեծամեծաց և՝ ի նախարարաց • և
,, յայլոց վէր ևս առպատակութե՛ յանկարծ հասանէր ։ Ար
,, ապա բանիւք հրապուրանաց՝ հանդերձ երդմամբ՝ առ ինքն
,, տայր բերել զԹագւոն արշակ • և՝ ի սեղան բազմեցուցեալ՝
,, ապա հրամայն տայր՝ ի տեղի ինչ ծածուկ՝ ի ներքնատուն
,, տանիլ զնա • և քրեալ զաչս նմա , և կապեալ զնա՝ ի շղթայս
,, արծաթի , որ առ աւագս նմա համարի սխեթարութի՛ ինչ
,, ընդունայն՝ ի մէջ պատժոյ պատուհասից , աքսորեաց զնա
,, ՝ի բերդն ակաւան (այն է անյոյս , ուր վտարեցաւ արշակ ,
,, կի՛կոհաշ , ուր վարեցաւ տիրան) • և անդ տուայտեալ նմա
,, մահուամբ սրոյ մեռաւ ‖ ։ Այս քան ահա ոչ գտանի հան֊

դէս նահատակուէ , այլ միայն առաջի դնի մեռանիլ արշա-
կայ սրով՝ ի յաքսորանսն • ոչ դնեն պատմիչք մեր •
Այնպէս և բանք սողոմենոսի ամենևին այլ ինչ էն , և յայլ
ինչ հայիմ • և ոչ քնաւ տան նշան զայսմանէ , ՚ի պատմել
նմ , գէր• Ճ • գլ • 1 • Թէ յուլիանոս ՚ի գնալն ՚ի պատրզմ ՚ի
վէր պարսից՝ * գրեաց Թուղթ առ արշակ արքայ հայոց , որ
,, բարեկամութիւն էր ընդ հռովմայեցիս , ընառաջ լինել ին-
,, քեան մօտ ՚ի սահմանս պարսից • յորում՝ Թղթի յանչափս
,, պանծացեալ՝ անձամբ զսնձն մեծացուցանէր , և ցուցանէր
,, վինքն արժանի կայսերուէ՝ զոր ՚ի գլխոյն իւրոյ ասէր ըն-
,, կալեալ , միանգամայն եպերելով զնախընթաց իւր զկոս-
,, տանդ՝ իբրև զայր վատ և ամպարիշտ • և ապա ծանր բա-
,, նիւք անարգանաց սպառնայր նմա (այ Թղթին հայոց , ե-
,, թէ ոչ լիցի ինքեան ձեռնտու) • և զի գիտակ ևս էր՝
,, թէ քրիստոնեայ է նա , քաղմ Թշնամանս կուտէր ՚ի վէր
,, նր • մինչև հայհոյանս անգամ առ ՚ի ձգել , յոխորտ բա-
,, նիւք ամբարտաւանս բարբառելով , թէ ՚ածն այն՝ զոր դուն
,, պաշտես , ոչ երբէք օգնական լիցի քեզ , եթէ ապախտ
,, արասցես՝ զհրամայեալսն յինէն ՚ի դլուխ տանել • Այս
,, պատուէր յղեալ՝ էառ զգօրս հռովմայեցւոց , և Ճանապարհ
,, արար ընդ ասորեստան ‖ : Ահա այս էն բանք սողոմենո-
սի • ուր ոչ յիշի նահատակութի արշակայ , այլ՝ այլ ինչ • որ
և հայի ՚ի տիրան ՚ի հայրն արշակայ • ոմի էն և բանք ամ-
միանոսի • զի այնք ևս հայրն ՚ի տիրան՝ միանգամայն և յար-
շակ • զի այսոքիկ երկոքին պատմիչք զգործս տիրանայ և
արշակայ յարեն ՚ի մի • ոմի յիշեցաք ՚ի Ծանօթ • խգ• (1) • երես • 687 •
Այլ որ զարմանալին է , տես՝ Թէ գրաւինա նոր հեղինակ
այսպիսի վկայութիւք սողոմենոսի զինչ գրէ • համարի՝ Թէ
անգէն արշակ պատցեալն , կամ ըստ լատին հնչման՝ արտաչէս ,
իսկ ոչ Թէ արշակ Թագաւր , այլ՝ աբիստակէս հայրապետ որ-
դի սենի գրիգորի , զոր նա արտաստանէս անուանէ , (չգիտ-
Թելով ընդ պատմութիւնս վկայից նահատակելոց ՚ի պարսս) •
և գրէ ՚ի Տան • Ա • գլ • 8 • այսպէս • * Արտաստանէս (հայրա-
,, պետ հայոց որդի լուսաւորչին) փառաւոր մահուամբ կա-
,, տարեաց ընթացս պանդխտութե կենցաղոյս • քզի որպէս
,, պատմէ սողոմենոս , յաւուրս յուլիանոսի բազում խոշտան-
,, գեալ մա քնի , և ՚ի շահոյ աղքայէն պարսից նենգութե
,, ձերբակալ եղեալ , պանծալի մահուամբ կատարեցաւ ‖ :
Զայն զայս դրուճած գրաւինայ յառաջ բերեալ կլեմուսի ՚ե
գլ • 3 • երես • 43 • գրէ այսպէս • * Յդպիսի բանքդ ոչ կա-
,, րեն գոլ Ճշմարիտ • • • և Ճշմարտին արդեօք՝ ոչ Թէ ՚ի վէր
,, ռբատակէս կթշկսին , այլ՝ ՚ի վէր արշակայ արքային հայ-

,, ոց մեծաց . զորմէ պատմէ սոծոմենոս՝ի գիրքն . Ը . ՚ի գլ-
,, լուխն . ա . Թէ՝ի ներքոյ յուլիանոսի կրեաց զհալածումն
,, մեծ վա՛ն անուանն՝ քոխ . և կալեալ՝ի պարսիկ շապհոյ՝ մե-
,, ռաւ՝ի մէջ բիւր չարչարանաց . վայ մեք կարծեմք , եթէ
,, պատուհասն հայրն կրաւ՝ինա արար բացաձայնութեի ան-
,, ուանին՝ շփոթելով ընդ անուանն ոբստակէսի զանունն
,, արշակայ , զորմէ արքայէն և մեք ձառելոց եմք յետոյ՝ի
,, տեղի իւր՝ (Թէ օրպէս նահատակեցաւ վա՛ն՝ քոխ) ‖ : Ո՛այս
այսոյ գրէ կղեմէս՝ի հայերէնն . իսկ՝ի լատիներէնն յաւե-
լու հաստատել , Թէ * ՚ի գիրս օսղոմենոսի չգտանեմ զայն-
պիսի ինչ առացեալ (զոր՝ի մէջ բերէ գրաւինա) , բայց
,, եթէ վա՛ն արշակայ հայոց արքայի եւեթ ‖ : Սակայն որպէս
տեսեր՝ի վերոյ՝ի հարուածս քանս օսղոմենոսի , գրուածք
նէր օ՛չ գգրաւինեալ և օ՛չ զկլեմէսի քանան հաստատեն : Ա՛յժ
մեզ չ՛ հարկ՝ի վե՛ր այսպիսի իրաց երկար խօսիլ . որովհետև
այսոքիկ մատենագիրքը օչ ունելով՝ի ձեռին զհին պատմա-
գիրս հայոց՝ օչ մարթացան աւելի ինչ գրել :

Ի՛ վե՛ր առեալոյ և գերուելո՛ զոր հասոյց շապհոյ յաղխատին
հայոց՝ յետ ըմբռնելոյ զարշակ :

Խ՛Ի (2) Բուզանդ . ՚է ք . գոր . յետ պատմելոյ զաքսորանացն ար-
շակայ և զմահուընէ վասակայ , յաւելու ՚է գլ . 55 . և որ
զինչ , զմեծամեծ հարուածս . զորս Թէպէտ նաև խորենա-
ցին աւանդէ , բայց սա այլովք պարագայիւք և անհնարին
բարդութի՛ւ : Յետ այսորիկ ասէ արձակեաց շապուհ՝ի վե՛ր
ծին հայոց զերկուս զօրավարս , որոց անուանք էին՝ զիկ և
կարկն , տուեալ՝ի ձեռս նոցա զօրս հինգ հարիւր բիւր (որ
է հինգ միլիոն) : Ո՛ր խաղալ սոցա՝ի հայս՝ի կողմանս նախ-
ջուանայ , տիկինն արշակայ փառանձեմ առեալ ընդ իւր մե-
ծատան հազար սպառազինս՝ գնաց՝ի բերդն արտագերից
յերկիրն արշարունեաց : Ո՛այն լուեալ պարսից՝ եկին և պա-
շարեցին զամրոցն ամիս երեքտասան . և չկարացին առնուլ .
վայ ասպատակ սփռեալ՝ի հայս՝ սկսան քանդել զշէն : Ա՛յն
պատ որդի արշակայ չէր յայնժամ՝ի հայս , այլ՝ էր՝ի պա-
տանդի առ կայսերն . և չէր ձեռնհաս առնել ինչ . բայց նա-
խարարք՝ որք ՚ի հայս էին՝ գիմեցին առ կայսրն՝ օգնել ինքեանց . և կայսրն խոստացաւ կատարել զմնդիրն նո՛ց .
ամին իրի առաքեցին քա՛մ անգամ պատգամաւորս առ փա-
ռանձեմ՝ համբերել սակաւիկ մի , և մի՛ մատնել զամրոցն՝ի
ձեռս պարսից :

Ա՛յժ՝ի կատարիլ երեքտասան ամանոց՝ անկաւ մահ յամրոցն

անդ. զի մինչդեռ յանհոգս կայիմ ընդ, հարիւր ի նոցէ յանկարծամահ մեռանի ի միում ժամու. և ի միւսում աւուր երկերիւր. և ապա հինգհարիւր. և օրըստօրէ սատակացեալ մնասցուն՝ ի միում ամենեան մեռանի մեռոտասան հազար արք, և վեց հազար կանայք. և մնաց միայն փառանձեմ երկու նաժշտօք: Յայնժամ եկեալ առ նա գաղտ ի քեզդ անդր մարդպետն՝ յանդիմանեաց զնա, իբր թէ վա՛ մեզայ ընդ երկ լեալ հարուածն այն. և ապա մեկնեցաւ ի նմանէ:

Տեսեալ փառանձեմայ՝ թէ ոչ եւս է հնար պահել զամբոյն, եբաց զդուռն, և ետ զքեզքն ի ձեռս պարսից. և նոքա յաւարի առին զքեզքն, և յափշտակեցին զնա գանձս Թագրայ. զորս և իջուցին յամրոցէն զաւուրս լինել. և ապա առեալ տարան զայն հանդերձ փառանձեմաւ: Եւ հասեալ ի վէր արտաշատու՝ կործանեցին զայն մինչև ի հիմունս. և առին զնա՝ զոր ինչ և գտին ի նմա. և գերեցին անտի քաւատուն հազար տուն հայս, և ինն հազար տուն հրեայս՝ բերեալս անդր ի տիգրանայ: Եւ առին և զվաղարշապատ, և քանդեցին ի հիմանէ. և գերեցին անտի ինն եւ տասն հազար տուն: Եւ առին և զերուանդաշատ. և գերեցին քսան հնգեր տուն հայ, և երեսուն հնգեր տուն հրեայ. և զքեզքն տապալեցին: Եւ առին և զզարեհաւան քեզք բազմանդայ. և գերեցին հինգ հնգեր տուն հայ, և ուրեմն հնգեր տուն հրեայ. և եղծին զքաղաքն: Եւ առին և զքեզքն զարիշատ ի գաւառին յաղոհովտի. և գերեցին տասն հնգեր տուն հայ, և չորեքտասան հնգեր տուն հրեայ. և զքեզքն աւերեցին: Եւ առին և զվան. և գերեցին հինգ հազար տուն հայ, և ուրեմնատասն հնգեր տուն հրեայ: Եւ առին և զայլ քեզմ մեծամեծ քաղաքս, և զնոսա քանդեցին և ապականեցին. և զամենեցուն նոցա զգերիսն ածին ի գաւառն նախճուանայ. զի անդ էր մեծ բանակ նոցա: Եւ առին ապա և զքեզքն նախճուան. և գերեցին անտի երկու հնգեր տուն հայ, և վեցտասան հնգեր տուն հրեայ. Եւ ապա թողեալ սատկանս և վերակացուս ի վէր ծնին՝ առին զնոսա գերիսն և զաւարսն, և գնացին ի պարսս առ շապուհ արքայ:

Իբրև եհաս շապուհ զփառանձեմ, հրամայեաց առաջի բազմութեան խեղդամահ կորուսանել զնա ի գարշանս. իսկ զգեբիսն հրամայեաց տանիլ և բնակեցուցանել յաստրեհատան և ի խուժաստան: Եւ ընդ գերեալսն եւ երեց մի յարտաշատոյ՝ զմիքէ անուն աշակերտ մեծին ներսեհի, (տես գրե՛ ի գլ. 56. և 57). զոսա արձակեցին դառնալ յեւտս. իսկ նա ոչ դարձաւ, ասելով. յո՛ զնաշխնադ տանիք՝ և զհովիւն տարայք: Եւ էր հեր գլխոյ նոր սպիտակ, իսկ մօրուսն սեաւ: Իբրև եւս տես զնա շապուհ՝ ասէ վա՛ նորա. երևի դա՛ ի հերաց խուզոյ

կախարդ լինել։ Պինախ ետ զուխթ • հեր գլխոյս նախաքոյս
է և ծերագոյն գնեալ հնգեաւտան ամօք • վ'ս այն սպիտա-
կացեալ է։ Արկացաւ ընդ այս շապուհ • և ապա հրամայ-
եաց նմա պաշտել զօրէնս մոգուխթ • և յոչ առնուլ նը յանձն՝
հատին զգլուխ նը։

Յետ այսորիկ (ոմն գրե ՚ի գլ• 58•) խաղայ ինքն շապուհ
՚ի հայաստան ամենայն զօրօք իւրովք՝ առաքնորդ ունելով իւր
զուրացօղն մերուժան արծրունի և զվահան մամիկոնեան։
Ոկսան յայնժամ զօրք պարսից սոսպատակ սփռել յամ տէրս
Ծին հայոց, և յաւարիսառին զերկիրն, և գերեցին զորս միան-
գամ գտին։ Ոյն տեսեալ նախարարացն՝ Թողին զառնս և
զընտանիս իւրեանց, և փախեան յայլևայլ տեղիս • և ապ-
պատակացն կալեալ զկանայս նը՝ բերին առ շապուհ՝ ի բազ-
մութիւնդ գաւառ յաւերակն զարեհաւանի։ Հրամայեաց եհան
շապուհ կոխան առնել փղաց զնմա այր ՚ի չափ հասեալ • իսկ
զկանայս և զմանկունս զնմա հանել ընդ ցից սայլից • որով և
սպանան հազարք հազարաց և բիւրք բիւրուց, որոց ոչ գոյր
թիւ։ Ապա զկանայս նախարարացն և այլոց ազատաց յայլ
անարժան գործս մատնէր • և առաւ ՚ի գլ• 58 • զայնպիսի ինչ
համարձակի պատմել բուզանդ, զորս և ոչ լսել իսկ արժան է՝
Թող Թէ գրել • իսկ զտղայս հրամայեաց ներքինիս առնել։
Ապա ապա հրամանն ետ յամուր տեղիս շինել բերդս քաջուսն •
և կացոյց ՚ի նմա զբերդակալս • և ետ տանիլ ՚ի նմա զկանայս
նախարարացդ • զի եԹէ եկեսցեն արք նը՝ տացին կանայքն ՚ի
ձեռս նոցին • իսկ եԹէ ոչ եկեսցեն, սպանցեն զնոսա բերդա-
կալք։ Ապա Թողեալ շապհոյ վերակացու Ծին զզիւղ և
զկարէն, և գործակից նը զվահան և զմերուժան, դարձաւ
յաշխարհ իւր։

Յայնժամ մերուժան վահան և մերուժան (ոմն գրե ՚ի գլ•59•)
ձեռն արկեալ սկսան քանդել զեկեղեցիս հայոց և զաղօԹա-
տեղիսն • և նեղէին զնմա մդիւկ Ծին՝ Թողուլ զօրէնս քրիստո-
նէութեանն, և դառնալ ՚ի պաշտօն մոգուց • և ապա հրամանն
արձակեցին առ բերդակալս, զի և զկանայս նախարարացդ
յորդորեացեն ՚ի կրօնս պարսից • և Ոչ ևս ոչ առին նը յանձն,
չարաչար մահուամբ սպանին զնոսա • Ոչ յայնժամ և տիկին
ոմն համազասպուհի՝ քոյր վարդանայ՝ մամիկոնէի, կին գա-
բեգնի ոմն ուշտունեաց • և զի գարեդին ՚ի գալ շապհոյ Թողել
զհամազասպուհի ՚ի վան՝ փախուցել էր յերկիրն իւրմէ, լռել
վահանայ և մերուժանայ՝ Թէ ՚ի միջնաբերդին վանայ է համա-
զասպուհի, պատգամ յղեցին առ բերդակալն, զի ստիպեա-
ցէ զնա դառնալ յօրէնս մազդեզանց • և Ոչ ևս ոչ էառ նա
յանձն, կախեցին զնա զոտից գլխիվայր զբարձր աշտա-

բակէ,

բակէ, որ հայերը՝ ի կողմն ծովուն աղթամարայ. և այնպէս կատարեցաւ նա՝ ի քո։ Իսկ կինն մի բարեպաշտ՝ որ և դայեակ էր նոր, յետ ձիկայ ժողովեալ զոսկերս նորին՝ տարաւ յՅն մմամիկոնէից։

Օ այս ամ առաջի եդեալ բուզանդայ՝ յաւելու ասել, թէ իբրև սկսաւ ուրացօղն վահան մամիկոնեան առաւել բորբոքել զչարիս յՅն հայոց, և լնուլ ոսմամբ պարսից, և յաձախել հրակատուէնս, որպէս նր սամուէլ՝ որ հաստատուն էր ի քրիստոնէութէ, եհար և սատակեաց զնա և զմայր իւր զորմիզդուխտ զքոյր շապհոյ. և ինքն փախեաւ յՅն խաղտեաց։ Իբրև թէ այս այն սամուէլ է, զոր յիշէ խորենացին. գ. 48. յասելն, թէ սամուէլ մամիկոնեան սպանեալ էր զհայր իւր զվարդան վէն ուրացուէ, և զմայր իւր տանջատուհի. և ոչ իշխեր զատուիլ՝ ի կողմնացն յունաց. զորմէ գրեալ եմք և մեք՝ ի գլ. ծբ. երես. 481։ Իսկ եթէ արդարև սա նոյն սամուէլն է, աստի կարէ ընթերցօղն իմանալ, թէ ոմն տարբեր է այս պատմուէ բուզանդայ՝ ի խորենացւոյն, սոյնպէս և վերոյգրեալ աւերուէն Ծին հայոց և այլ ևս պատմուիք սր։

Ի վէ ԹԷրելոյն պապայ. և պատերազմելոյ մամկեղայ ընդ պարսիկս և ընդ այլս։

Ասմարի բուզանդ, թէ՝ ի թէրել պապայ սկսն ներսես՝ ի հայս էր. և թէ ոչ ձեռամբ ներսեսի, այլ՝ մուշեղայ եղև այն. դնե նախ. դպր. է. գլ. 55. Թէ յաքսորիլ արշակայ և՝ ի սպանանիլ վառակայ՝ նախարարք հայոց դիմեցին առ կայսրն՝ Թէրեցուցանել զպապ. և ապա պատմէ զբազմադիմի հարուճածս՝ զորս յիշեցաք՝ ի վերոյեդեալ ծանօթութէ. և յետ բազում թշուճառութեց՝ պատմէ. դպր. է. գլ. 1. և որ զկնի, թէ մուշեղ մամիկոնեան որպէս վառակայ զօրավարի անցեալ՝ ի տեղի հօր իւրոյ՝ ժողովեաց զնմա ազատագունդս հայոց, և հանդերձ նոքօք ջոքաւ առ կայսրն. և ցուցեալ նմա զանաց ծին՝ խնդրեաց՝ ի նմանէ Թէրեցուցանել զպապ, որ էր՝ ի կոստանդնուպօլիս՝ ի պատանդի։ Եւ կայսրն կատարէ զինդիր նր՝ Թէրեցոյց զպապ, և յանձն արար զնա տերենտեայ ստրատելատի և ազդի կոմսի, և առաքեաց յաշխարհն հայոց վեց հարիւր բիւրուք։

Եւ իբրև հասին մերձ՝ ի դարանաղեաց պատառհանդերձ մոշեղիւ և այլովք նախարարօք, ժողովեցան առ նա՝ որք միանգամ ցրուեալ էին՝ ի հայոց. և ապա՝ ի խնդիր լեալ զհետ մեծին ներսեհի՝ աղաչէին զնա լինել ընդ ինքեանս. և հազիւ կարացին հաւանեցուցանել զնա։ Յայնժամ կարգեցաւ մո-

խե (1)

շեղ սպարապետ Հայոց, և ժողովեաց տասն հազար արս քաջս. և առեալ զօրինուէն՝ ի մեծէն ներքինէ՝ դիմեաց ի միջնաշխարհն Հայոց. և հասեալ ի վէր պարսից՝ սպան զզօրապետս նոցա զգլխով և զկարէն, և եհար զնոսա զօրս նոցին. * բայց միայն ,, մերոյժանն չարագործ փախչէր միամի ||։ Արծաներ սպան մնուշեալ զնոսա կրակաւոունս, և նորոգեր զնոսա եկեղեցիս՝ զորս պղծեալ էին պարսիկք. և առնոյր զնոսա բերդս. և ձերբակալ արարեալ զնշխանս պարսից՝ հաներ զմարմնոցն նոցա, և լցեալ խոտով՝ առ ի խնդրելոյ զվրէժ հօր իւրոյ վաստակս։ Ապա իբրև եհուա ի հայս պապ Թագաւ և զօրք յոտնաց, վերստին

հարուցեաւ ցնս։

Ապա (ոմն գրէ ի գլ. 20.) վերստին ժողովեալ մուշեղայ զզօրս ի հայոց արս ազատս և ընտիրս քառասուն հազար գնաց ի կողմանս ատրպատականի, և զգուշանային ցնին. Այլ յայնժամ շապուհ ոմ կազմուէր առաքինորդ ունելով զմերուժան. որոց լսեալ առաջ եկեալ մուշեղ՝ կոտորեաց զամենին. շապուհ միայն միամի հազիւ կարաց զերծանիլ հանդերձ մերուժանաւ։ Զերբակալ արար և զբնչին յատապանուոյն պարսից. զորս մնրճեզերծ արարեալ՝ եկին խոտով, և առաքեաց առ պապ։ Ետես և զվատուհին պարսից հանդերձ այլովք կանամբք. բայց ի յանդորրս կալաւ գինս. և յետոյ պատուիրել դարձոյց առ շապուհ։ Ընդ որ զարմացեալ շապհոյ՝ գովեաց զմուշեղ. և զի առ ինքն մուշեղ ուներ զնի ձերմակ, ետ նմա բերել շապուհ զպատկերն նր ձերմակ ձիոյ՝ ի վէր քաժակի կամ տաշտի. և յորժամ՝ ի խրախուճիս ըմպելոյ նուաւ զգինի, առեր. * Ձերմակաձին գինի այրեցե ||։

Յակ առաւն՝ զօր առին հայք՝ ի պարսից, այնչափ քաղցր եղև, մինչև յոնականն զօրսդ ևս քաշիել առատապէս, և հանել նաև բաժին Թագրին և մեծամեծաց. զի ամ մեծուէ եկեալ էին պարսիկք։ Այլ ոմանք՝ ի զօրացն հայոց ամբաստան եղեն առ պապ զմուշեղայ վ՚ն արձակելոյ նր զկանայս շապհոյ. ոմն իրի ծագեցաւ Թշնամութի՝ ի միջ պապայ և մուշեղայ. և մուշեղ գնաց յամրոց իւր ողկան. և անդ նստաւ։

Ի կատարել այսր պատերազմի յայտնեցին ոմանք պապայ, (ոմն գրէ ի գլ. 30.) Թէ զինարդ մարդպետն Թշնամանեալ էր բանիւք նախատանաց զմայր նորա փառանձեմ. և պապ առաքեաց պատգամ առ մուշեղ՝ սպանանել զմարդպետն. և նա կալեալ նենգութի՝ ետ մերկացուցանել զնա, և կապել զձեռս նր ի ներքոյ ծնգացն, և դնել ի վէր սաւառնի փետոցն. ուր և մեռաւ նա. և պապ կարգեաց ի տեղի նր մարդպետս հայր զայլ ոմն դպղակ կի՛ դղակ անուն. որ և յաւուրս

տիրանայ ընկալեալ էր միանգամ զայն գործ մարդպետուէ։
Յետ այսորիկ սկսանի պատմել բուռնդ՝ Է գլ. 4. Ե 5. զայն
պարզմ, զոր և պատմէ խորենացին. գ. 37. բայց այլազգ
ամենևին։ Դարձեալ զօրաժողով լեալ ասէ շապհոյ՝ խաղաց
ամ զօրութիւն, և եկն յատրպատական ՚ն։ Նոր առ շապհոյ
գառաւ և արքայն աղուանից ուռնայր. և մատուցեալ առ շա-
պուհ՝ առաց. եթէ կամք իցեն քեզ, դու զօրօք արեաց պա-
տերազմիցիր ընդ զօրս յունաց. իսկ ես ընդ զօրս հայոց։ Զինեալ
եաս նման մերոյժան, եւասէ. * արկեր զդաշիւ (փշոյ) գիրկս.
„ բայց թէ ժողովել կարիցես, մեծ զօրմանոք իցեն ՚։ և
ապա ազդ արար մերոյժան զայսմանէ առ մուշեղ վիճ խայ-
տառակելոյ զուռնայր։ Նա՝ ի խաղալ աւիշն՝ ի հայս՝ խօսեցաւ
ուռնայր ընդ զօրս իւր, և ասէ. ուշ դիցուք՝ զի՝ ի զօրացն հայոց
և յունաց զպատուհասական ապրեցուցեալ՝ տապցուք յաղուանս
՝ի գործ ծառայուե։
Երբև ազդ եղև գալուստ պարսից, զօրուխարք յունաց՝ օրը
էին ընդ պատոյ, փոս հատին մօտ՝ ի լեառն նպատ, և հանին
զպատ՝ ի լեառն հանդերձ նեբսխիւ։ Նա մուշեղ զօրուխար
ժողովեալ բնաւուն հազար այր՝ պատրաստեցաւ՝ ի մարտ. և
եկեալ առ աբեն ներսես՝ եւ առաջի նր զսուր իւր և զգէն,
զի օրհնեացէ։ Ոյն տեսեալ պապայ՝ յիշեաց զոր ամբաս-
տանեալ էին զնմանէ, և ասէ. ոչ այդ այն մուշեղ է, որ փա-
ռօք դարձոյց յեռս զկռնայս չապհոյ. մի մտցէ դա՝ ի պատերազմ։
Նակ մուշեղ աղաչէր զնեբսես՝ երաշխաւոր լինել վասն իւր.
բայց պապ ասէր. դա՝ ի մտանել՝ ի մարտ՝ անդամանէ՝ ի կողմն
պարսից. և յաղաչել զնա աբեն՝ խնդրեաց պապ երդումն։
Ա՝ատուցեալ մուշեղայ՝ բուռն եհար զաջոյ աբեն, և երդ-
ուաւ. նոյնպէս կալեալ և զձեռս պապայ՝ երդնոյր, և աղաչէր՝
մի՛ անեալ չարաիսօսաց։ Նա պապ ետ նման զերդումն իւր.
այլ նա ասէ. ես իմանիմ գործելոյց։
Ա՝պա երբև պատրաստեցան զօրք յունաց, մուշեղ էանդ յաջ
կողմն Ճակատուն զօրաց իւրոյ։ Նա եղև՝ ի խաղալ նոցա
՝ի վէր պարսից՝ յառաջ էանդ մուշեղ, մինչև անյայտ լինել
յաչաց թշնամեաց. և որ կատաճեալ պապայ՝ եթէ գուցէ ձեռն-
առ լինի՝ ի պարտս, ասէ ցներսէս. դու խլեցեր զիս. զիս առ-
ցի քեզ՝ մի յղեր զայրն. ահա նա անկաւ՝ ի զօրս պարսից,
և գործեացէ՞ զնաս մեծամեծս։ Ա՝ոչ ներսես. մի արքայ՝
մի կարծեր զայդ. այժմ տեսցես զքաջութի գործոց նր. այլ
պապ տագնապեալ և տխրեալ զսաստիկ զօրացուցանել զա-
զօրս իւր։ Նակ աբեն ասէ. եթէ արքեացես զնիրա քոյ, ա-
զօրք իմ օգնեացեն քեզ. ապա թէ ոչ՝ ուր եմ ես, դի աղա-
չես զնա. զայս առացեալ՝ եկաց յաղօթս։ Նա ապա՝ ի յար-

ձակիլ պարսից՝ պատերազմ սաստիկ տուեալ ընդ նմա հայք և յոյնք՝ վանեցին և կոտորեցին զնոսա ։ Եւ մուշեղայ հասեալ յուռնայր յարքայն աղուձանից, և առաջի արկեալ զնա՝ ծեծեր զկառափն նր նիզակաբնաւն, ասելով. Թագ ունիս ի գլուխ քո, ես ոչ սպանից զայր Թիւր. և Թոյլ եառ նմա փախչիլ ուրեմն հեծելովք ։

Յետ յաղթուէ ամբաստանն եղեն ումանք զմուշեղայ առ պապ. դա ասեն նենգուէ ե ընդ քեզ. այս քանի անգամ ե, զի արձակէ զԹշնամիս քոյ. ահա արձակեաց այժմ և զուռնայր ։ Եւ վասն այսր յանդիմանեաց զնա պապ ։ Պինախ եառ մուշեղ. ես կոտորեցի զհաւատարակիցս իմ. իսկ որ Թագ ունի, չե նա իմ հնար. եկեացես, ոչ ես զնմին սպանի, նոյնպէս և դուք զքոյ հնար սպանցես. այլ ես յայր Թիւր ոչ ձգեմ ձեռն. և ոչ ձգեցից. եԹէ կամիս սպանանել զնա, սպան ։ Ո այս լուեալ պապայ յարտասուս հարաւ. և համբուրեաց զմուշեղ, և եառ նմա բիմ պարգեւս ։ Իսկ ուռնայր հրեշտակս առաքեաց առ մուշեղ, և չնորհս կալաւ նմա. զայս սէր քոյ ասէ ոչ մոռացայց, մինչև խոեմ ես. և ծանոյց նմա, Թէ շապուհ վերաձին պատրաստել ե յանակնկալ ժամու անկանիլ ի վրէ հայոց ։ Ո այն լուեալ մուշեղայ՝ եառ զզօրսն հայոց ինքնաւն հնչը, և դիմեաց հանդերձ զօրօքն յուռնաց ի վրէ շապհոյ ։ Իսկ պապ ինայ ընդ սնչն ներսեհի. և սնչն անդադար լինէր յաղօթս ։ Եւ եղև ի խառնիլ պատերզմին՝ զօրացան հայք. և կոտորէին անխնայ ըզպարսիկս. և եԹէ պարսիկք զօրանային, դիմէին հայք ի վանափակն յուռնաց. և դիմել յարձակէին և հարկանէին ըզպարսիկս. և ի հարկանել իւրաքանչիւր զախոյեան իւրեանց աղաղակէին և ասէին. * ան արշակ քաջ ‖ . յի ով արշակ Թիւր հայոց՝ որ ի զուր մատնեցար, ան այժմ զառնս վրէժ անձին քո ։ Եւ զօրս ընդ ոստիւք արկեալ խաղխազէին՝ ասէին. * արշակայ Թիւրին մերոյ զհոգ լիջիր ‖ ։ Եւ ապա իսպառ վանեալ զզօրս պարսից՝ դարձան յերես առ պապ. և շապուհ կոտրտգլուխ փախուցեալ անկաւ յիջ իւր հանդերձ մերուժանաւ. և պատմեր իւրոց զքաջուն զօրացն հայոց. զի ոչ հզօր են ասէ. մանաւանդ * մոլեկան գունդն մուշեղեան. զի ինձ ,, այսպէս Թուէր. եԹէ հուր քոց ի գնդէն ելանէր ‖ ։ և յաերեսոյր ասել. * երանի՛ որ հայոց գնդին ներ էիցէ՝ այնպիսի ,, տիրասեր և միաբան միամիտ զօրաց ‖ ։

Ի (ոնդ գրե՛ է գլ. 9.) ի պատերազմէ աստի՝ զաւառն հայոց ի պատերազմէ աստի՝ մնանել՝ ի ձեռս նորա զպապ և զմուշեղ նոսա զտերինտ. և էառ գանձ ի շապհոյ ։ Հապան զդգղակ մարդպետ երեսուն հազար ընտիր զօրաք. և տերինտ զօրավար յուռնաց եղ՝ ի կողմանս ատրպատականի պա-

Կայր գնել ՚ի ներ անձեւացեալ եւ այլք ոմանք գիտացեալ զմիտս դգղակայ՝ ազդ արարին պապայ • և նա յղեաց պատգամ առ դգղակ, յանձն առնել զգօրսն ՚ի ձեռս գնելոյ, և գալ վաղվաղակի • զի պիտոյ է ինձ ասէ յղել զքէն առ Թագաւորն պարսից • քանզի հաձոյ Թուէեցաւ ինձ մնանել ՚ի ծննդեան նորին ։ Ընդ այս զուարձացեալ դգղակայ, իբր Թէ առաւել ևս դիւրաւ յաջողեացի նմա՝ զոր խորհեալն էր, եկն փութով առ պապ • և պապ ետ զգեցուցանել նմա՝ պատմուճան և վարտիս • և էր պատմուճանն այն մեծ յոյժ և լայն • մինչև խորշիլ նոքա ծածկել զառնն՝ զոր էած ՚ի վէր • և բերին զնա ՚ի աւենեակն՝ ուր պահեալ լինէին Թագք Թէրեացն Հայոց • անդ կամէին ոտանանել զնա • և Թէպէտ դգղակ տարաւ զձեռն ՚ի զէն իւր, բայց ոչ կարաց գտանել, զի ծածկեալ էր ՚ի խորշիլ պատմուճանին • ապա սկսաւ խօսիլ և ասէ • ասացէք ցարքայ • ես յիրաւի այսմ մահու արժանի էի, բայց քեզ չէր արժան աստ սպանանել զիս, և զքոյ Թագդ արեամբ իմով շաղախել • և յասել նոքա ցայս՝ հասին զգլուխն, և հարեալ ՚ի նիզակ կանգնեցին ՚ի հրապարակի ։

Այս պատմուի Թէրենցին պապայ և սպանման դգղակայ ներքինապետին յիշատակէ և ամմիանոս • գԷբ • էԷ • Ա • Ը • բայց այլովք պարագայիւք, որք ոչ խորհեցաւոյն և ոչ բուզանդայ համաձայնին ուղղակի, կարգելով զնմին յաւուրս վաղեսի խառն ընդ այլ պատմուիս • զոր և համառօտիւ իմն քաղեացուք աստէն ։ Ետ աքսորելոյ ասէ շապհոյ պարսից արքայի զարշակ Թէրեր Հայոց՝ յանձն արար ինն ՚ի ձեռս երկուց ներքինիցն Հայոց • որոց անուանք էին գղակէս և արտաւան • և հրաման ետ նոցա երթալ մարտ դնել ընդ մեծի ամրոցին արտագերից • ուր ՚ի պահեստի էին գանձք արքունի ընդ արքայորդւոյն պապայ և ընդ Թագուհւոյն ։

՚Ի պաշարել նոցա զամրոցն՝ խոյս ետ անտի պապ • և անհապարել գնաց ՚ի կոտաւանդինուպօլիս, ապաւինեալ յօգնութի կայսերն վաղեսի • և կայսրն մեծարեաց զնա, և հրամայեաց նմա ձիալ առ ժամանակ մի ՚ի նէոյկեսարիա՝ արքունի ռոձկօք ։ Իբրև լուան երկոքին ներքինիքն զմարդասիրութի կայսերն առ պապ, ինքեանք ևս խորհեցան յարիլ ՚ի նա, և կանգնել զԹագուհի Հայոց • որոյ վճռ առաքեցին առ նա, և աղաչեցին Թագուհացանել զպապ ՚ի վէր Հայոց, և յունական զօրօք ընդդէմ կալ պարսից ։ Եւ կայսրն խանարհեալ յաղաչանս նոցա առաքեաց զտերենտիոս զօրավար, և զպապ ընդ նմա՝ Թագաւորեցուցեալ զնա ՚ի վէր ազգին • այլ ոչ զօրօք բազմութե, զի մի և բևեռի ընդդէմ դաշնադրութենն պարսից ձեռնտու լինել ՚ի հայս ։

Իբրև աղդ եղև այս յականջս շահկոյ, բարկացաւ յոյժ։ և եկեալ զօրու ծանուր՝ սկսաւ աստիճակել և աւերել զերկիրն Հայոց • յորոյ երեսաց զահի հարեալ պապայ՝ և երկոցունց ներքինեացն, դաղեալ զօղեցան յանտառախիտս և յանմուրդաբնակ վայրս ամիսս հինգ։ Ա.ՀՐ Թագաւորն շահապուհ ամենայն զօրութիւն պաշարեալ զմեծ ամրոցն արտագերից՝ մնայր եդեալ ընդմէջ, և էած և հրձիգ արար • և բարձեալ անտի զգանձան արքունի հանդերձ Թագուհեաւն՝ տարաւ յաշխարհ իւր։ Ոչ այս իբրև լուաւ կայսրն, առաքեաց զզօրս ի հայս ի ձեռն արքին Թէոսի զօրավարին՝ պաշտպան լինել ծնին, զի մի միւսանգամ լինի յաւար թշնամեաց։ Ոսկ շապուհ առաքեաց առ պապ հրեշտակս բանիւք խաղաղուե, և ասէ • դու առանց իմ թագաւորեցեր, և մտեր ընդ հնազանդութիւն երկուց վատ ներքինեացդ • ապաքէն եթէ լինէ թշնամի, զնա ընդ քեզ ունելիր • արդ՝ բարձ զգոտս, և դու ինքնին տիրեա իբր արքայ։ Նա նոր անսացեալ պատերը խորհրդոյն շապհոյ՝ կալաւ և ապան զերկոսին ներքինիս • և առաքեաց զգլուխս նոցա առ շապուհ։

Ա.ՀՐ պատմուճ ամիհանոսի ընդ մասին հայի ի քանս խորենացւոյն, և ընդ մասին ի քանս բուզանդայ՝ տարբեր ամենևին • ընդ որ զարմանալ արժան է, և տարակուսիլ իսկ • քանզի մարթէ և այս ասել, թէ ամիհանոս գուցէ ի լրոյ առեալ՝ այսպէս կարգէ զբան իւր • և կամ զի Թերևս պլուճածք բուզանդայ, որ և ինքն յայն աւուրս էր, նորոգ ի ձեռս իւրեանց անկեալ ամիհանոսի, և ընդ այնմ կարգեալ իւրեանց նա ի պատմութիւն իւրում ինչ ինչ ընդ բանից նոցա։

Ա.ՀՐ յաղագս մուշեղայ՝ զոր յիշեցաք ի վերոյ, յաւելու քուզանդ գրել և այլ բազմ գործս • գլ • 8 • ինչ ի 20։ Որժամ ասէ լուեաց պատերազմն պարսից, ապստամբեցան բազմ նախարարք հայոց • ընդ որս և իշխանաք արքունի տանն՝ որք էին ի կողմանս ատրպատականի • և մուշեղ գնացեալ ի վէր նոցա՝ նուճաձեաց զնոսա, և էած պատանդս ի նոցանէ։ Որոնցիկս արար ասէ և ընդ ապստամբս նորշիրական ծին • և ընդ կորդիս, ընդ տմորիս, ընդ մարս, ընդ արցախս, և ընդ աղուանս, և ընդ այնոսիկ հայս՝ որք միաբանեալ էին ընդ նոյն աղուանս • նոյնպէս և ընդ փայտակարան, և ընդ կասպս։ Այսաղաց ապա և ի կողմն ծին վրաց • ունի գրե ի գլ • 15 • և եհար զնա՝ զոր եդիտ ի նմա • կոտորեաց զնա՝ ազատս և զազդս նախարարաց • իսկ զփառաւազեանսն հրամայեաց ետ ի խաչ հանել • նոյնպէս և զդեղչին դուքսարաց ետ գլխատել • և զնա՝ արու կոտորեաց • իսկ զկնայս և զդստերս նոցա վարեաց ի գերուն • ընդ այնմ օրինակի առաքեաց և յայլ կողմանս վրաց ծին՝ որք միանգամ յետս կացեալ էին յարքայէն հայոց։ Ոխմեաց ապա և յծն աղձնեաց •

և

և նոճաձեաց գերկիրն ըստ հնադանդութեան պատուոյ · որպէս ա-
լոյս և ըստ երկիրն անձառոյ և մեծի ծովուց , և ըստ սահմանս անց-
գեղ տան · քանզի ասէ ՚ի գլ · 18 · որովհետև այն ոչ անգեղ տան
ոստան արքունի լեալ էր յառաջին, զնակիչք տեղացոյն կային ՚ի
հարկի ծառայութեան : Այլ ապա յաւելու բուզանդ ՚ի գլ · 20 · իբր
բամբասակելով զբան իւր , Թէ մուշեղ զայս աւուրս կենաց
իւրոց հաւատարմութեամբ ծառայեաց արշակունի թագաւորաց :
Այս պատմութիւնք բուզանդայ որչափ օտար են ՚ի բանից խորենաց-
ւոյն, նոյնչափ հեռի երևին և ՚ի ճշմարտութենէ :

ԻՆ ՎԷՃԻՆ ՆԵՐՍԷՍ , ԵՒ ԱՓՍՈՍԱՆԱՑ ՆԱ , ԵՒ ՄԱՀՈՒԱՆ :

Բուզանդ · ՚ի գիրք · Ե · գլ · 3 · Եւ ար գինի · որպէս և մեսրոպ (1)
երէց նորին հեռաւոր այլազգ գրեն զմեծին ներսիսէ՝ պէսպէս
հանգամանս կարգելով ՚ի վէր գործոց և կենաց նորա ՚ի սկզբանէ
մինչև ՚ի վախճան · զորոց զբանս մարթ է համառօտել այս-
պէս : Նախ առաջին՝ ասէ մեսրոպ երէց, Թէ զնա ներսէս էառ
զդուստր վարդանայ մամիկոնէից այլ չէ ստոյգ·զի խորենա-
ցին՝ որ էր աշակերտ որդւոյ սմբատայ ներսեսի՝ գնէ ՚ի գ · 16 · Թէ
նա էառ ՚ի կոստանդինուպոլիս զդուստր ասպետունեայ իշխանի :
Ընդ այսմիկ սկսանի պատմել բուզանդ՝ յորմէ և մեսրոպ ,
Թէ դարձ արարեալ սընեն ներսէսի յառաջնում նոճադի ՚ի կե-
սարիոյ՝ եղև սենեկապետ արքային արշակայ · և էր ասէ
ինքն բարձրահասակ և ցանկալի տեսողաց և գեղեցկահեր ·
որոյ նմանն ոչ գտանիւր · ահաւոր ևս տեսողաց , և քաջ ՚ի
զինուորական կարգի · մարդասէր, ողորմած, խոնարհ , իրաւ-
արար , և կատարեալ սիրոյն ևս :
Այլ իբրև մեռաւ շահակ (կիսփառներակ) կնգին , իշխանք
հայոց առ հնգ ժողովեալ առ արշակ արքայ՝ խնդրեին կարգել
զոք տուիչ ՚ի զարմէ սընեն գրիգորի · և կամեցան ընտրել զներ-
սէս · և ածեալ զնա ՚ի ժողովն առաջի արքային՝ միաբան հրա-
մայեցին զնա , և ասեն · գուք լեր այսուհետև մեզ տուիչ · այլ
նա հրաժարեցաւ : Այլ ՚ի սահմանել նոցա սկսաւ խօսիլ զանձնէ
իւրմէ ծանր ծանր յանդիման · մինչև ցուցանել՝ Թէ չէ նա
արժան վերանալ ՚ի կարգ քահանայութեան : Նակ նոքա ասեն · ա-
նօրէնութիւն քոյ եղիցի ՚ի վէր մեր · բայց միայն դուք յանձն առ
քահանայանալ մեզ · Տեսեալ նոքա՝ Թէ զինքն բամբասելով
չկարաց հաւանեցուցանել , սկսաւ զնա բամբասել և նախա-
տել , Թէ դուք չարք էք , ես ոչ կարեմ լինել ձեզ տուիչ :
Ընդ որ դժուարեալ արշակայ՝ ընկէց զնա ՚ի պատուոյ իշխա-
նութեն նորին · և եօթ հատանել զներսէս ՚ի նախատինս ա-
նուն , և բռնութիւն եւս ձեռնադրել զնա սարկաւագ՝ ծերունի

եղկսի միւսմ, որում անուն էր փոստոս. և պահել զնա ի նոյն կարդի, և ոչ առնել զնա այլում իմիք պատուոյ արժանի։ Այլ սակայն իշխանք հայոց հաւանեցուցեալ զարշակ՝ եառնն նմա գրել հրովարտակ, և առաքեցին զներսէս ի կեսարիա առ եւսեբիոս եպիսկս, զի ձեռնադրեացի կաթողիկոս. գնացեալն ընդ նմա և մեծամեծ իշխանք բազմաց. հայր իշխանն մարդպետուհե. բագրան իշխանն սպարապետութեան. գահնիել իշխանն ծուխաց մեծաց. մեհենդակ իշխանն ոստանեաց, (զորմէ յառաջագոյն պատմեալ էր բուզանդ. գ. 18. թէ սպան զնա տիրան ազգաւն հանդերձ). անդովկ իշխանն սիւնեաց. արշաւիր իշխանն աբշարունեաց. պարգև իշխանն ամատունեաց։ Եւ բերեալ հասին սքի ի կեսարիա, մնացուցեալ առ եւսեբիոս եպիսկս՝ եառնն նմա զհրովարտակն արշակայ, և եդին առաջի նր զպատարագս իւրեանց։ Յայնժամ ժողովեալ եւսեբիոսի զբազմութեն եպիսկոպոսաց՝ ձեռնադրեաց զներսէս կաթողիկոս հայոց։ Եւ ի ձեռնադրութեն անդ աղաւնի մի թռուցեալ ի սեղանոյն՝ եկն և նստաւ ի վերայ բասիլիոսի քհնյին. և ապա ելեալ անտի՝ հանգեաւ ի վերայ գլխոյն ներսիսի։ Եւ յետ ձեռնադրութեանն մեծաւ պատուով յուղարկեաց զնա եւսեբիոս ի հայս։ Եւ ոչ եթող թագաւորին արշակայ զգալուստ ներսիսի՝ եւ ընդառաջ նորա մինչև ի լեառն՝ որ կոչիւր առիւծ. և առեալ զնա էած փառաւք յաթոռն հայրապետականն. և նա սկսաւ խնամել զեկեղեցի իւր ըստ նմանութեն նախնւոյն Լուսաւորչի։

Եւ յետ այսորիկ գրեն բուզանդ և մեսրոպ, թէ ներսէս վասն նորոգելոյ զդաշն խաղաղութեն գնաց ի կոստանդինուպոլիս առ վաղէս. գնացին ընդ նմ և իշխանք բազմ. վարդան իշխան մամիկոնէից. վասակ սպարապետ եղբայր վարդանայ. մեհենդակ նահապետ ոստանեաց. մեհան նահապետ անձևացեաց. գարջոյլ մաղխազ նահապետ խորխոռունեաց. մուշկ նահապետ սահառունեաց. դեմետ նահապետ գնդունեաց. կիշկէն նահապետ բագեվնից. սուրիկ նահապետ հրսիձորոյ. վըրկէն նահապետ համբուժենից։

Եւ ապա յաւելուն, թէ վաղէս մեծարեաց զնէն և զորս ընդ նմ էին. (թերեւս ըստ խորենացւոյն՝ վաղէս առանց տեսանելոյ զնէն աքսորեաց). և զի որդի նր ասեն հիւանդ էր, աղաչեաց նա զնէն աղօթել վն նր։ Եւ նէն պինեաց. եթէ թողուս զաղանդդ արիոսի, և հաւատաս ըստ կաթողիկէ եկեղեցւոյ, առողջասցի մանուկդ. ապա թէ ոչ, յետ հնգետասան աւուր մեռցի։ Խորհեցեալ վաղէսի ընդ այս՝ ետ կապել զնա և դնել ի բանտ։ Եւ իբրև մեռաւ մանուկն, կոչեաց առաջի իւր զներսէս, և ասէ. դու ապաներ զորդի իմ.

և

և նա եւս պահինն . որդի քո փրկեալ եւս մեռանէր . քայց
ընդհս կալջիր , զի մեք աղօթեցաք , և վն աղօթից մերոց
ազատ պահեաց վնա զայսչափ աւուրս . այլ եթէ այժմ հաւա-
տաս , կեցցէ դրձէլ որդի քո :

Պատուիրեալ էր այս վաղեսի՝ կամէր սպանանել զՊօղն . այլ
մեծամեծք միջնորդ լեալ՝ ոչ թողին նմա . և եւս վաղիւս աքսո-
րել վնաս ի կղզի մի անբնակ հանդերձ երկու սարկաւագօք .
ըստ նոսին և այլ եօթանասնումն ոգիք . որոց կէսք եւնկք էին ,
և կէսք կղերիկոսք : Այս իբրև եղեւն նմա ի կղզին , ընդողեցան
ի սովոյ և ի ծարաւոյ . և յաղագ առնելոյ նոցա սքոյն՝ այն ինչ ե-
րիցս ծունր կրկնեցին , ընկեց ի կղզին ի ծովն անտի ձկունս բազումս , ըստ նմին և փայտս . և ի խնդրել
նոցա զհուր՝ ինքնին վառեցաւ փայտն . և ապա ի փորել սքոյն
զաւազն՝ եւ ջուր քաղցր . և յայմ աւուր հաներ ծովն զձուկն .
և նոքա յիւրաքանչիւր երեկոյի կերակրէին . իսկ սքոյն կիւրա-
կէ ի կիւրակէ միայն ձաշէր :

Սմին հանդոյն պատմեն՝ քաղեալ ի բուզանդայ նաև կիրա-
կոս և վարդան : Սկրակոս գրէ , թէ ի գնալն ներսեհի առ
վաղէս վն Հաշտուէ՝ տեսեալ վնաս թագրին՝ ասէ ցնա . բժշկեա՛
զորդի իմ, որ եր մերձ ի մահ . և ասէ սքոյն . եթէ ի քաց կայ-
ցես ի մոլար աղանդոյն , բժշկեցից վնա . և ի խոստանալ նո՝
աղօթեաց սքոյն , և առողջացոյց վմանուկն . քայց յետոյ ի կայ-
մառիլ վաղեսի վերատին յաղանդ իւր՝ մեռաւ մանուկն . որոյ
վն քարկայեալ նո՝ աքսորեաց զսքոյն : Այս վարդան գրէ . * Ներ-
,, սեալ (ասէ ներսեհ) զթագրին՝ քարոզել նմա ուղղափառուն .
,, և ի չհաւանեալն՝ մեռանէր որդի նո . և քարկայեալ աքսորէ
,, վնաս ի կղզի անբնակ . Ե . ոգւով ‖ : Յաւելուն բուզանդ և
մեսրոպ , թէ արշակ վեց ամ պատերազմեալ էրեւ վն այսր ընդ յունաց .
և թէ մինչդեռ տակաւին թագրեր արշակ , դարձաւ ներսէս :
Այլ այս ամ ներհակ են հարուածատ պատմութեն խորենայ-
ացոյն : Իսկ կղեմէս գալան . ա . 6 . այլապէս ինչ եւս գրէ . այ-
թէ արշակ իցէ աքսորել զներսէս ի կղզին յայն . քայց յայտ
է թէ այս ոչ է ստոյգ : Իսկ ի պատմութիս յունաց վն աքսո-
րանաց ներսեհի յոմնէնէ ինչ ոչ գրի . այլ այսչափ միայն
առանդի ի գիրս սուրբատաց . ը . 16 . և տղոմեոսեայ . ը . 14 .
թէ վաղէս ուղեաւն արս եկեղեցականս , որոց գլխաւորքն էին
ուրբանոս , թէոդորոս , և մենեդեմոս , որք և էին կշռամ-
բիչք աղանդոյն արիանոսեաց և կայսերն , հրամայեաց սպա-
նանել . իսկ իշխանն՝ որում յանձն եղեւ մահ նո , եւս առնել
զնա տալով ի խորս ծովու , և հրձիգ առնել զնաւն . և հողմն
վարեաց զնաւն ի տեղի ինչ . ուր կատարեցան նքա . ԼԸ : Որ՝
եթէ սքոյն ներսէս էր առաջ , նա զերծաւ հանդերձ ամենքն

՚ի կղզին, և ապա դարձուցաւ յետս ՚ի ժմկս Թէոդոսի։
Այլ Թէ որչափ ժմկ կացէ լեռն սբն ՚ի կղզւոջ անդ, գիտելի է, զի խորենացին. Ճ. 30. և յովհաննէս կիթիկս դնեն ամիսս ութն. ոմն եդաք և մեք. և վարդան և կիրակոս դնեն ամիսս հինն. ոմն և յայսմաւուրքն ՚ի նոյեմբ. 19. և Մոսէի. 2։ Խոկ բուզանդ ՚ի վերոյիշեալ տեղիդ. Ճ. 6. դնէ ամս հինն. և յայնմ միջոցի բազմ մարտս պատմէ. զի յառաջինն երթալ նմա կարգէ զաքսորանս նորին։ Ասա այսմ դնէ և մեսրոպ երէց, և անճանաչ ոմն պատմիչ. Թէպէտ յօրինակս հինս մեսրոպայ փիրկ գրելոյ, Ճ. գրի, ը։ այլ այս կարծիք ոչ իւիք ձշմարտի։ Նոյնպէս և յաղագս դարձի սբոյն Ներսիսի այլազգ գրէ բուզանդ. Ճ. 13։ Ապրեալ մեռաւ ասէ վաղէս, դարձաւ սբն յաքսորանաց ՚ի հայս, և գնացին ընդ առաջ նմ ամբիոն. և նա եկեալ ինառամբը զնն ամ ուղղուԹ, ևբ. և ոչ յիշէ ամենևին, Թէ երբ նա ընդ իւր զպապ և Թէոդոսեցոյց, ևբ. զի համարի՝ Թէ արշակ դեռ Թագրեր, և Թիւրեալ էր զնոնգ իւր. և վաղ սկսաւ ասէ խրատել զնա՝ մնընդ վա քրքին արշակաւանայ. և Թէ յետ ժմկայ մտուղեղ Թագրեցոյց զպապ, ևբ. ոմն յիշատակեցաք ՚ի վերոյգրելն ծանօԹուԹիս։
Ստանօր արժան է գիտել և զայս, զի յայսմաւուրս ՚ի Մայիսի. 29. յիշատակի ընդ դարձեալն յաքսորանաց յետուրս Թէոդոսի՝ և խաՀակ ոմն, այսպիսի բանիւք. Այն խաՀակ ազգաւ էր ՚ի հոռոմոց յաթևելից ծէն՝ հայ աղգաւ՝ ՚ի ժմկս վաղեսի կայսեր, որ արիոսեան էր. գնաց առ նա ՚ի կոստանդնուպոլիս, և ասաց նմա. քանց զեկեղեցիս ուղղափառաց. և նա ոչ լուաւ։ Այլ ՚ի գնալ վաղեսի ընդդէմ գԹաց՝ եղ ընդառաջ նմ, և ասաց. ահ արքայ՝ քանց զեկեղեցիս ուղղափառաց. և վաղէս հրամայեաց պահել գնա յարգելանս, մինչև լինքն դարձցի ՚ի պատրգմէ, և արկինն գնա ՚ի բանտ։ Խակ վաղէս ՚ի պարտուէն մեռանելոյ ՚ի գԹաց՝ հուրբ կիզաւ ՚ի տան միում. և սբն ՚ի բանտի անդ առեալ գՀոտ մնչ գարշ՝ ասաց. ահա կիզեալ լինի վաղէս, և հոտ գարշուԹե բուրի ՚ի նմ։ Այլ երբ Թագրեաց Թէոդոս մեծ, երաց զեկեղեցիս ուղղափառաց, և եՀան զանձնաւորկեալսն վն հաւատոյ. ըստ որս և զիսաՀակ արեզայն. որ եկաց մեծաւ ձգնուԹե մինչև ՚ի մահ իւր։ Ո այս պատմեն և սոզոմենոս. Ղ. 40. և Թէոդորեաոս. Ճ. 34. և կեդրենոս. և գլիկաս. Ճ. և զնաարան. ՃԺ. 16։ Ո ամանկ չունելով մեր զտուգուԹի Թէ հայ էին, ոչ եդաք ՚ի պատմուԹե։
Այլ յաղագս մահու սբոյն Ներսիսի գիտելի է, զի բուզանդ՝ որ երկայն գրէ զայնմանէ, փոքր ի այլազգ կարգէ. քանզի չեա պատմելոյ բազմ չարիս և զանվայել բանս զպապայ Թա-

գա-

գաւառին ՝ի դպր • ե • գլ • 44 • և ՝ի դպր • ե • գլ • 22 • զորս և ոչ իսկ արժան էր նիւ՝ի գիր անցուցանել , զի յայտնի առասպել են , պատմէ ապա ըզ խորենացւոյն ՝ի դպր • ե • գլ • 23 • և 24 • Թէ սկզն ներսէս յանդ իմանէր զնա վասն չար վարուցն , և նա կամ ցաւ սպանանել զնա • և զի ոչ իշխէր յայտնի , խորհեցաւ ՝ի ծածուկ և դաւաճանութիւն կատարել զկամն իւր • և յեաղ յաւէլու , և ասէ • աղաչեաց զնա պատ՝ հաշտ լինել ըզ ինքն՝ խոստանալով զալ ՝ի յուղղութիւն ։

Եւ գնացեալ ապա յեկեղեցւոյ գաւառ՝ կոչեաց զքէն , և ասէ ցար նիւ ընթրիս • և նստուցեալ զնա ՝ի յարքայական գահոյս իւր՝ ինքնին յոտին կայր , և սպասաւորքն նմա ՝ի սեղանի • և մատոյց նմա բաժակաւ զգեղ մահու խառնեալ ընդ կոտինդ ։ Յորժամ էարբ սքէն , իմացաւ զայն • և սկսաւ գոհանալ և ասել • * Երկնեալ է ինր ածմեր , որ արժանի արար զիս ,, լմնել զբաժակս զայս , և հասանել մահուս՝ որ վնաս է • ,, որում և ցանկացեալ էի ՝ի մանկութենէ իմմէ • արդ՝ զբաժակ փրկութենէ ընկալայց , և զանուն տեն կարդացից • զի ,, և ես հաւասարեցից հատանել ՝ի սման ժառանգութենէ սքէյն ,, ՝ի լոյս ։ Այլ քեզ ով թագեր արժան էր իբրև զայր թագեր ,, յայտնի հրաման տալ և սպանանել • զի ով էր՝ որ արգե- ,, լոյր զքեզ • կամ ով էր՝ որ պահէր զձեռն քո ՝ի գործոց , ,, զոր ինչ կամէիր գործել ։ Այլ տէր թագր սոցա զայս ,, գործս՝ զոր ինչ գործեցիր կիս • և ընկալ զհոգի ծառայիս ,, քո , որ հանգուցիչդ ես ամ աշխատելոց , և կատարիչ ամ ,, բարութեանց ։

Ո այսպիսի բանս խօսեցեալ սքէն՝ գնաց ՝ի վանս իւր • գնացին ըլ նիմ և մեծամեծ նախարարքն հայոց , ըլ որս և մուշեղ • և ՝ի բաց առեալ զպարեգօտ իւր՝ եցոյց կապուտակեալ ըզկուրծսն ըլ չափու նկանակի միոջ ։ Ա՝ատուցին նմա անդեզայս , բայց ոչ էառ սքէն • այլ գոհանայր զնոյ • և յորդորէր զնա զգոյշ կալ ՝ի պատուհասէրանս նոյ ։ Յայնժամ սկսաւ հատել արիւն գոնդ գոնդ ըլ բերանն իբրև ժամս երկու • և ապա կացեալ յաղօթս՝ խնդրէր յնոյ ողորմութենէ վնս ամենայն • և համբարձեալ զաչս և զձեռս իւր յերկինս՝ ասաց • ընր յն ընկալ զհոգի իմ • և անդէն կատարեցաւ ։

Ա՝ զրել բուզանդայ զայսոսիկ՝ յուցանէ , Թէ ինքն և նախկայ էր , ՝ի մէջ բերելով զբուն անուն իւր , նոյ է փոստոս • զի ասէ , Թէ * առեալ զմարմին սքէյն ներսխի զառնն նոյ պաշ- ,, ծօնեայք նկեղեցւոյն , և փոստոս ենկս , (ոչ ծերունին , ,, զի այն վախճանեալ էր) և պաշտօնէից գլխաւորն տրդ- ,, գատ , և մուշեղ սպարապետ , և հայր մարդպետան , և ամ ,, ազատագունդ բանակն արքունի , բարձին յաւանէն ՝ի խախ

,, գեղ-

,, գեղջի՝ ուր գործն կատարեցաւ , և տարան ’ի Թիլն աւան
,, յիւր գիւղն ։

Յետ պատմելոյ զայս բուզանդայ յաւելու ’ի գլ. 30 • և 31 • Թէ յայնմ հետէ Թագաւն պապ եթարձ զնմ քարեկարգութիւն մուծեալա ’ի սկզբն ներսիսէ ։ Օ այս Թէպէտ և ըն մասին կա- րեր ձշմարտութիւնք ասել , բայց քանզի ա՝ կիմ որ աղաւաղեաց զգիրս որ , յայլ միտս խօսելոյ կարդէ զբանս իւր ’ի Թշնամա- նել զազգն , ոչ պատմէ այնպէ՝ ոնպ լեալ է , այլ ըն իւրում ոճոյ անհնարին չափազանցութիւնք , զորս ոչ տանին լսելիք մտոյ ։

’ի վեր յեռանգրութիւնէ կաթուղիկոսին հայոց , զոր սկսան առնել առաջնոյ արշեպիսկոպոսին կեսարիոյ ։

Ծ (2) Պիտելի է , զի ’ի գիրս խորենացւոյն , և յովհաննու կաթո- ղիկոսի , և այլոց ումանց՝ որոշակի ոչ աւանդի , ոնպ և ոչ մեք որոշեցաք , Թէ արդեօք յաջորդք սկզբն գրիգորի լուսաւորչին մինչև ’ի մեծն ներսէս ուստի առնուին զձեռնադրութիւն կա- թուղիկոսութե , յեպիսկոպոսէն կե- սարիոյ ։ Ոն արիստակէս ասէ ագաթանգեղոս • երես • 385 • Թէ սկզբն գրիգոր ըստ աղաչանաց տրդատայ * ձեռնադրեաց ,, (զնա) յեպիսկոսութի փոխանակ իւր • • • և յետ ոտրա կալաւ ,, (նա ինքն արիստակէս) զտեղի հայրենեացն , և անդէն ,, նստաւ յաթոռ կաթողիկոսութե հայոց մեծաց ։ Օ սոյն ցու- ցանէ և բան խորենացւոյն • Բ • 88 • ևե • և յովհաննու կա- թուղիկոսի , և չնորհալւոյն , և այլոց բազմաց ։ Ոակ յաղագս սկզբն վրթանէսի այսչափ ինչ գրէ խորենացին և յովհաննէս կաթողիկոս և այլք , Թէ յաջորդեաց գինի արիստակեայ յաթոռ լուսաւորչին • առանց յիշելոյ՝ Թէ ուստի՝ ձեռնադրեցաւ ։ Օսոյնպէս գրեն և վ՚ն յուսկան և փառներսեհի ։ Ոակ վասն մեծին ներսիսի ամ պատմիչք միասէս աւանդեն , Թէ ’ի կե- սարիա ձեռնադրեցաւ ։ Ոյս ապա ’ի պատմել զյաջորդե ներ զշահակայ աւքին միաբան գրեն , Թէ յեպիսկոպոսէ հայոց ձեռ- նադրեցաւ • ոնպ և յետ նոր ամ հայրապետք , որք նստան յայն աթոռ ։

Ոյլ բուզանդ • Գ • 12 • և 16 • գնէ՝ Թէ յուսիկ և փառներ- սեհ ’ի կեսարիա ձեռնադրեցան • զնոյն ասէ և ասողիկ • Բ • 1 • վ՚ն արիստակեայ և յուսկան • որպէս և վարդան վ՚ն նորին արիստակեայ ։ Ձայեցեալ մեր և ’ի բանս խորենացւոյն և յովհաննու կաթողիկոսի՝ գտանեմք ’ինոսա համաձայն ինչ կարծեաց սմ • զի խորենացին • Գ • 39 • ’ի պատմէն զշահա- կայ յաջորդէն ներսիսի ասէ , Թէ * առանց մեծի արքեպիսկոպոսին կեսարու ‖ կարգեցաւ հայրապետ • ուր այս յաւելուած բանի

յայտ առնէ, թէ ուրեմն նախընթացքն նորա ձեռնադրութիւն կեսարիոյ կարգէին ի հայրապետուն հայոց։ Եւ յովհաննէս կթղիկս ի պատմելն զնոյն շահակայ գրէ այսպէս։ * Եւ ևս ըստ
„ սովորութենն առաքելական զնա ի կեսարիա, այլ
„ լքեալ ի քաց գօրէնն առաջին, ըստ օրինի պատրիարգաց
„ կալան կարգ՝ ժողովոյ եպիսկոպոսաց ձեռնադրել ‖։ որով հա-
մարի յովհաննէս կթղիկս, թէ մինչև ցայն ժամ ի կեսարիա
ձեռնադրելին։

Եւ այս գուցէ վն այնորիկ, զի սքէն զևոնդ ի կոնդակին իւ-
րում՝ զոր գրեաց առ որդեան, այսպէս հրամայեր, ըստ աւան-
դելոյ ագաթանգեղոսի. երես. 369. * Հաստատեալ կայցէ
„ առ վկայութիւն ի մէջ երկոցունց կողմանացս, զի պարզևա-
„ բաշխութիւն նորոգեալ քհնյապետութեդ ձերոյ նահանգի
„ առ ի մէնջ կայցէ անշարժ յեկեղեցւոջս կեսարու, ուստի
„ և հանդերձեցաւ ձեզ պատրաստութիւն շինութեան ձեռ-
„ նադրութիւնդ ‖։

Եւ ըստ այսմ կարգի և պայմանի երևի թէ փոքր ի ժամ ի կեսարիոյ առնուին հայք զձեռնադրութիւն հայրապետութեն, քանզի առանց այլոց իրիք կախման։ Եւ քզի հաստատութիւնք գիտելին, թէ լուսաւորչին մեր ընկալեալ էր ի սեղբեատրոս զիշխանութիւն եպիսկոպոսութեն կմ պատրիարգութեն, ի դիտիլ յարմար առթի և ի հասանել պատշաճ ժամուն՝ քահանական համարեցան ցայն վայր լցուցանել զնախատասկեղ պայմանն սքէն զևոնդեայ, և ոչ ևս կամեցան գնալ ի կեսարիա վն ձեռնադրութեն։ Եւ յայս իսկ ժողով մեծ գումարեալ եպիսկոպոս Ծին հայոց ի վաղարշապատ հանդերձ թղթրաւ արշակա և նախարարօք՝ հանդիսացուցին և հաստատեցին յաղգին զայն պատուիրագ, կարգելով պատրիարգ զսքէն ներսէս յաթոռ սքէն գրիգորի. սահմանեցին միանգամայն և զայս, զի յոյնմէնեաք յիւրեանց եպիսկոպոս առնուցուն կթղիկոսունք հայոց զձեռնադրութեն. ոչ և արարին իսկ ըստ շահակ և ընդ ամ-
յաջորդս նմ։

Այս երկար և քացայայտ գրէ յովհաննէս կթղիկս ի գիմաց նոցա կթղիկոսացն հայոց. որ և յետ այլոց բանից յաւելու գրել. * Եւ այսպէս ասէ ապա նահապետութեն խորհրդոյ եկեղեց-
„ ւոյ ի մերում ձի լցաւ բովանդակաբար, ինն միանգամ-
„ մայն գաւառակարգութեամբ պատուէրեալ. զկնաւորս արք-
„ եպիսկոպոսացն վրաց և աղուանից արքեպիսկ ընդ ձեռամբ նորա
„ կարգեալ. իսկ ի սեբաստիա և ի մելիտինէ և ի մարտի-
„ րոսաց քղքին մետրապոլիտաս կացուցանէին. իսկ եպիսկո-
„ պոսունս ապա ըստ որոշեալ վիճակացն իւրաքանչիւրոյ հաս-
„ տատէին. և քահանայս և սարկաւագունս և կէս սարկաւա-

,, գաց և վերծանեցաւ և առնմանեցոյց ։ Այսոքիւ ցանկալիք
,, ընդ բոլոր եկեղեցիս Հայաստանեայցս վայելչացան յարդա-
,, բեալ լինելիս ի փառս նոյ ։ ։

Այլ առաքելոյն ի պատմել առակիս · Բ · 1 · Թէ ընդէր ոչ առաքեցին զշահակ ի կեսարիա , զայլ իմն պատճառ բերէ ի մէջ · լուեալ առէ Հայրապետին կեսարացւոյ բարեպաշտ զպատուելի ներքսին ի պատգայ նեղութեաց զպատգ , և հաւատառեաց ոչ ևս ձեռնադրել կաթողիկոս Հայոց ի կեսարիա · մէյ ասէ · առանց ձեռնադրութեան այնր ոմանք նստաւ շահակ ։ Այլ այս բան առակիս առեալ է ի բուզանդայ · Բ · 29 · որոյ պատմութիւն մանաւանդ յայսմ մասին չէ ընդունելի · զի նա այլով ոգւով գրէ զայս և յատկութեանէ · և նախ զպատմութեանէ իւր ոչ ուղիղ կարգէ · զքէզ փոխանակ միոյ շահակայ՝ երիս անձինս ի մէջ բերէ · զմին կոչէ շահակ · Գ · 17 · և գնէ յատաջ քան զմեծն ներսէս · որ է յայտնի սուտ · նոյնպէս և զերկրորդն կոչէ շահակ · Շ · 3 · և գնէ զմիսի զաւակն · իսկ զերրորդն կոչէ յուսիկ · Բ · 29 · և գնէ յետ մեծին ներսէհի՝ ի տեղի շահակայ · և ասէ՝ Թէ նոյնպէս նա հրամանաւ պապայ · և յաւելու ապա գրել զանձնդիպ · յերես · 333 · և 334 · Լուեալ ասէ Հայրապետին կեսարու՝ (զորոյ զանունն ոչ յիշէ) , Թէ պապ ապստամբեալ է զներսէհ , և ի տեղի նորա առանց իւրոյ ձեռնադրութեան կարգեալ է զյուսիկ յաթոռն Հայոց , բարկացաւ յոյժ · և գումարեալ ժողով մեծ յեպիսկոպոսաց նահանգին իւրոյ՝ գրեաց թուղթ ցասմամբ առ պապ սրբոյն , և ելոյծ զիշխանութիւն կաթողիկոսին՝ առ ի չլինելոյ կարօղ ձեռնադրել զոք յեպիսկոպոսութիւն : Եւ յայնմհետէ ասէ բարձաւ իշխանութիւն Հայրապետին Հայոց ձեռնադրել զոք եպիսկոպոս · այլ որք կամէին ձեռնադրիլ յեպիսկոպոսութիւն կաթողիկոսին Հայոց , երթային ի կեսարիա , և անդ ձեռնադրէին · Ապա զլսելս եղիկայեան Հայոց՝ յոր կաթողիկոսին ոչինչ այլ իշխանութիւն ուներ , բայց * ի վերոյ միայն նստելը , և Հայ օրհներ Թագրայն ։ Օ այս ամ գրէ բուզանդ ոչ առ ի զհշմարտութիւն պատմութեանն առանդելոյ , այլ՝ առ ի սուտ բանիւք զազգն արհամարհ ցուցանելոյ · ապա Թէ ոչ՝ այս պատմութիւն այլ ինչ է , և յայլ ինչ հայէ , յորհամարհուն անձին իւրոյ · զորմէ գրեալ եմք ի գլ · ի · երես · 447 ։

Այլ որպէս և իցէ , որովհետև այս ազաւաղ գրուածք բուզանդայ տարածեալ եղև ի մէջ յունաց իբրև պատմութիւն ինչ Հայոց , զայն ընթերցեալ նոքա՝ ոմանք ի նոցանէ նախնի ոձով գրեցին Թշնամանս ընդդէմ ազգին · ոմն է տեառնտէր ի գիրս ինչ յունաց · որք և գրգռեալ յատելութիւն պատրաստէին զՀայս , յատել ցնա բնիմ անգամ , Թէ չունիք դուք զկարգ · և ոչ այսչափ միայն , այլև յետ այսորիկ յանցանել ժամակաց՝ առիպեին

երթեան կրկին ձեռնադրել • ընդդէմ որոց քաղմ ինչ գրեաց
Լաւրրոնացին , մանաւանդ ի Թուղթն առ ոսկան Ձիւնաւոր • ուր
յառելոյ և զայս • * Ընդէս ասել (դարձեալ) , Թէ վա՞ղ ի՛ ի
,, ինչ ոչ ունիք զառաքելարկութիւն ձեռնադրուե , (վասն խո-
,, տելի է) • Ծաղուս ազգանուն այս կարծիք • զի Թէ իսկ ըզ-
,, բնաւսան ոչ ի ձինչ , ի դէպ էր զայս կարծել • իսկ ապա Թէ
,, սէն գրիգոր ի կեսարիա էառ զքնարհն , և սէն ներսէս , և
,, այնու եկեալ լուսաւորեցին զՀայք , անկարօտ մնացին վեր-
,, սին առ ձեզ ի ձեռնադրութի գառնալոյ • զի նիկիոյ ժո-
,, ղովն սահմանն ցուցանէ , որ երեք եպիսկոպոսք կարող են
,, զիւրեանց նախաթոռն ձեռնադրել • և ի սիփսիկոն , յո-
,, րում կարգ եպիսկոպոսն սահմանի , գրեալ է՝ որ Հայոց կա-
,, թուղիկոսն պատուհեցաւ վասն սէն գրիգորի , ոչ և կղզին
,, կիպրոսի վա՞ առաքելոյն բառնաթոյ • և յիւրեանց եպիսկոպոսն
,, առնուն արքեպիսկոպն զձեռնադրութին • և զայս ի ձեր գրոց
,, ունիմք հաստատել , և ո՛չ ի Հայոց ։

Այժմ վա՞ եպիսկոպոսն կիպրոսի , զոր յիշէ սուրբ լուսաւորչացին ,
գիտելի է , զի ասացի՛ Թէ սա երկրին առնոյր զձեռնադրութի յանտիոքայ աթոռոյն • և ապա պատճառաւ իւիք յետս
կացեալ՝ յիւրոց եպիսկոպոսաց ձեռնադրութը • և յորժամ նաստաւ յանտիոք ազգքանդ պատերազմ , զանազ վերատին ձգել զիւիք-
բացիս յայն աթոռ , և գրեաց վասն այսր Թուղթ առ պատն
Հռովմայ իննսունվեցնասիս առաջին • և պատն գրեալ յորդո-
րեաց զնա առաջին սովորութենն առնել • բայց ի լինել ժողո-
վոյն եփեսոս՝ ամբաստան եղեն եպիսկոպք կիպրոսի , Թէ աղեք-
սանդր սուէք գրեալ էին առ պատն՝ կամ լոկ յափշտակել զի-
րատունս ձեռնադրութե • Այլ յետ քաղմ բանից հաձոյ Թուե-
ցաւ ժողովոյն , զի Հայրապետն կիպրոսի զսովորութենն յիւ-
րոց եպիսկոպոսաց առնուցուս զձեռնադրութի • Այս եղև յետ Թո-
ղեալ գործ ժողովոյն • ոմն է տեսանել ի կոչոր • ՟ք • երես • 1466 •
գնալ է 1470 • Ո այսմանէ ըստ կարգի գրէ յուլիոս լատինասիոս
ալիղնագեան • գէտ • ա • գլ • 18 • երես • 167 • ոմն Հոխապոն
գրի և զայլոց երևելի աթոռոց և զպատրիարգաց յայն գիրք •
Աբրանոյ արժան է գիտել և զայս , զի ի սոյն ժողով ի լի-
նել այսր քննութե՝ բազումք ի Հայրապետաց եղելոց անդ՝
ծնունդ Հայրապետն կեսարիոյ կապադովկացւոց փիլոմոն ա-
նուն՝ որ մի էր ի Հարց անտի ժողովելոց , գիտեին՝ Թէ նաև
Հայք ի գարձի իւրեանց առեալ էին զձեռնադրութե ի կե-
սարիոյ , և Թէ՝ յետոյ Թողեալ զայն՝ յիւրեանց եպիսկոպոսաց առ-
նուին • բայց ինչ ոչ յիշեցին զայնմանէ , և ոչ իսկ իւիք ընդ-
դիմացան • յորմէ յայտ է՝ Թէ հաւան էին նմ և այն • ապա Թէ
ոչ՝ գոնե քննութի ինչ առնէին ի վե՛ր այնր • Ասաւ և կեղ

քան զայս ՚ի ձմեռին՝ յորում աքեն սահակ դիմեաց առ փոքրն Թէոդոս , և առ պատրիարքն կոստանդինուպօլսոյ ստուիկոս՝ վասն հովանւոյ Թաժնին յունաց , ոչ կայսրն և ոչ պատրիարքն յիշեցին ինչ զայսմանէ . այլ Թէ՝ որովհետև դուք Թողիք առնուլ զձեռնադրութիւն ՚ի կեսարիոյ , մեք ևս ոչ Թոյլ տամք ձեզ հովանի զբաժին մեր , ևն . այլ՝ հաւանեալ յանձնեցին նմա զհովանութիւն այնր բաժնի . ուստի և հայք՝ որք մնեալ էին ընդ ձեռամբ հայրապետին կեսարու , մնային անդրին ՚ի հովանութենէ սակայ հրամանաւ կայսեր և պատրիարքին . ՚ի որում է տեսանել ՚ի գիրս խորենացւոյն . գ . 57 .

որ և է վկայ ականատես ։

